Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՐԱՐ

15-16 (305-306)
20. 05. .2012թ.
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Lusarar ● ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ. 9 ՄԱՅԻՍԻ 2012Թ.

ՓԱՌԱՊԱՆԾ ԲԱՆԱԿԻ ՀԱՂԹԱԿԱՆ ԵՐԹԸ

Մայիսյան եռատոնն Արցախում մեծ շուքով նշելը սոսկ երեկն ու ներկան վերարժևորելու արտահայտություն չէ, այն միաժամանակ հատկանշում է մեր անպարտելի լինելը այս չափազանց զգայուն տարածաշրջանում: Եթե ուժեղ ես ու վստահ քո ապագայի հանդեպ, ապա դրկից ժողովուրդները հարգանքով են վերաբերվում քեզ: Համոզված լինենք՝ անգամ ազերիների թաքնված վախի մեջ հարգանք կա առ մեր զորական ուժը:

Ազատ և անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգության առհավատչյան Պաշտպանության բանակն է, որի հզոր ներուժը տեսանք նաև մայիսիսյան զորահանդեսում: Արցախում չորրորդ անգամ անցկացվող զինվորական շքերթին ներկա էին ԼՂՀ և ՀՀ նախագահները, Ամենայն հայոց կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին երկրորդը, ՀԱԵ արցախյան թեմի առաջնորդ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, երկու հայկական պետությունների ռազմական գերատեսչությունների ղեկավարները, պետական այլ այրեր, հյուրեր Հայաստանի Հանրապետությունից ու արտերկրից: Նրանց բոլորի մասնակցությունը Եռատոնի միջոցառումներին, և հատկապես զորացույցին ներկա գտնվելը վկայում է, որ հաղթանակների մայրաքաղաքը համախմբում ու ոգեկոչում է բոլոր հայերին՝ որտեղ էլ նրանք ապրելիս լինեն և ինչ պաշտոն էլ որ զբաղեցնեն:

Մինչ զորահանդեսը՝ նախօրեին, պետական բարձրաստիճան այրերը ծաղկեպսակներ դրեցին նահատակների հիշատակը հավերժացնող հուշահամալիրի պատվանդանին: ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը և ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը նաև ծաղիկներ դրեցին ու խոնարհվեցին հուշահամալիրի տարածքում գտնվող՝ ազատամարտում զոհվածների շիրիմներին, եղան Շուշիում՝ մասնակցելով տոնական ծրագրի շրջանակում այդտեղ կազմակերպվող միջոցառումներին:

Իսկ արդեն մայիսի 9-ին՝ Մեծ Հայրենականի հաղթական ավարտից 67 և Շուշիի ազատագրումից 20 տարի անց, Ստեփանակերտի Վերածննդի հրապարակը դարձավ փառքի ու հերոսության յուրօրինակ ցուցադրավայր: Զորահանդեսն ուղիղ հեռարձակմամբ ցուցադրվում էր Արցախի և ՀՀ հանրային հեռուստատեսությամբ, և ողջ հայ ժողովուրդը հնարավորություն ունեցավ իր աչքով տեսնելու մեր բանակի հաղթական երթը: Տեսավ, համոզվեց ու հպարտացավ, որ իրոք, մեր բանակն արդիական զինատեսակներով է զինված՝ միշտ պատրաստ արժանի հակահարված տալու հակառակորդին: Իսկ հարկ եղած դեպքում՝ ունակ է անցնել հարձակման ու դյուրությամբ թշնամուն ճզմել նրա իսկ որջում:

Անցած 20-ամյա փառավոր ուղու վերարժևորումն էր ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանի ելույթը, որով նա հանդես եկավ զորահանդեսի մասնակիցների առաջ.

«Այսօր Հայոց բանակի կազմում են և հպարտ կանգնած են զորահանդեսի շարքերում մեր զավակները, ովքեր ծնվել են ազատագրված հայրենիքում և անառիկ են պահում նրա սահմանները: Նրանք պատվով են շարունակում իրենց հերոս հայրերի գործը և դրանով իսկ վառ պահում մեր բոլոր նահատակների հիշատակը:

Մեր նվիրական հաղթանակը կերտողների հետ ուս ուսի Արցախյան բանակի այսօրվա զինվորը հաստատուն կերպով պաշտպանում է հայրենի երկրի ավտանգությունն ու հարազատ ժողովրդի անդորրը: Այդպես է արդեն 20 տարի, և այդպես կլինի ընդմիշտ»,- շեշտեց հանրապետության նախագահը:

Հատկանշական է, որ զորահանդեսին հրապարակում հետևում էին նաև դպրոցականները, որոնք Եռատոնը խորհրդանշող շապիկներ հագած և Արցախի պետական դրոշակները թափահարելով, ողջունում էին մեր փառապանծ բանակի զինվորներին: Ասել է թե՝ հայրենյաց պաշտպանների կողքին պատրաստական կանգնել էր վաղվա հերթափոխը...

Տոնական միջոցառումներն ավարտվեցին նույն օրը երեկոյան, Ստեփանակերտի Շահումյանի անվան մարզադաշտում կազմակերպված մեծ համերգով: Համերգը եզրափակվեց հրավառությամբ՝ Եռատոնի լույսերը սփռելով հաղթանակած Արցախի գարնանային երկնքում:

Կ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՂԹԱԿԱՆ ՄԱՅԻՍ

ՏԵՐ ՄՆԱՆՔ ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻՆ

Մայիսի 8-ին Շուշիի կենտրոնական հրապարակում, որտեղ իր քարեղեն էությամբ նստարանին Սպարապետ Վազգեն Սարգսյանն է բազմած, մարդաշատ էր: Հայոց բազում երեխաներ հագել էին ծիրանագույն շապիկներ՝ թիկունքներին «Ես հաղթող բանակի զինվոր եմ» կարգախոսը և եռագույնը ձեռքներին՝ սպասում էին մեր երկու անկախ հանրապետությունների Նախագահներին և նրանց ուղեկիցներին: Հայոց ազգային տարազով աղջիկները աղ ու հացով դիմավորում են ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանին, ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանին, Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդին, ՀՀ և ԼՂՀ պաշտպանության նախարարներին, բարձրաստիճան հյուրերին: ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը հավաստիացրեց, որ մեր երկիրը գտնվում է լավ պաշտպանության ներքո, որ մեր բանակը մարտունակ է և պատրաստ՝ դիմակայելու թշնամուն: Սպարապետի հուշարձանին ծաղիկներ դնելուց հետո պետական այրերն ու ժողովուրդը երկու կողմից եռագույնները պահած երեխաների շարքերի միջով շարժվում են դեպի Շուշիի պատմական պարիսպների մոտ գտնվող թթենու այգի: Այգու մուտքի մոտ դարձյալ աղ ու հաց է մատուցվում: Կանգնած են նաև չորս փոքրիկ հրեշտակ-աղջիկներ՝ ձեռքներին խորհրդանշական երաժշտական գործիքներ (Բերձորի արվեստի և սպորտի սաներն են. թղթե երաժշտական գործիքներն իրենք են պատրաստել): Հնչում է հայոց զուռնայի նվագը: Այգում բազում տաղավարներ են գործում. մի քանիսը նախատեսված են հյուրասիրության համար: Բոլորն են ըմպում հայոց գինին՝ մաղթելով, որ միշտ հաղթանակած մնանք և ավելի հզոր տեսնենք մեր բանակը, ծաղկեն ու բարգավաճեն մեր երկրները: Գործում են նաև ազգագրական տաղավարներ. մի տեղ խնոցի են հարում, մեկ այլ տեղ գորգ գործում, երկանքով ցորեն աղում:

Տեղի ունեցավ նաև տոնական համերգ. երկրի ղեկավարության ներկայությամբ հնչեց Շուշիի օրհներգը: Ելույթ ունեցավ Երևանի «Կարին» ավանդական երգի-պարի համույթը: Ղեկավար Գագիկ Գինոսյանը ներկա երեխաներին նույնպես պարել էր սովորեցնում, և սկսվեց շուրջպարը Շուշիի պարիսպների ներքո: Տասնյակ հայ աղջիկներ ու տղաներ՝ տարբեր վայրերից, թիկունքներին «Ես հաղթող բանակի զինվոր եմ» կարգախոսը, միասնական շուրջպար էին բռնել՝ ի պատիվ հայոց քաջերի, ովքեր մեզ տվեցին այս օրը. ի պատիվ հայ զինվորի, ով սահմանն է հսկում: Տեղացող հորդառատ անձրևն էլ չխանգարեց, որ կայանային արդեն ավանդույթ դարձած ավանդական խաղերը, որ անցկացվեց Քաշաթաղի «Հայեր» հասարակական կազմակերպության կողմից: Հիշում եմ 20-22 տարի առաջ ինչպես էին Շուշիից արձակված հրթիռները քարուքանդ անում Ստեփանակերտը, Շոշը, Դաշուշենը, այլ հայոց բնակավայրեր, ինչպես էին մեր մանուկներն ապաստանում նկուղներում՝ մութ ու խոնավ: Եվ այսօր մենք ազգովի՝ աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների հետ տոնում ենք մեր պատմության լավագույն էջերից մեկը՝ պատմական քաղաքի ազատագրումը, ԼՂՀ հաղթական բանակի 20 տարին, Մեծ Հայրենականում մեր փառավոր պապերի կերտած հաղթանակը: Մնում է տեր մնանք մեր հաղթանակներին, չլքենք մեր սուրբ երկիրը հանուն բարվոք կյանքի:

ՀԱՂԹԱՆԱԿԸ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ԳԱԳԱԹՆԱԿԵՏՆ Է

Մայիսի ինը: Եռագլուխ ծաղիկ. Արցախի Պաշտպանության բանակի ստեղծման օր, Հայրենական պատերազմի հաղթանակի օր, Շուշիի Ազատագրման օր...

Այս օրվա առթիվ Ասկերանի շրջանի Դաշուշենի Վ. Օվյանի անվան հիմնական դպրոցում (կազմակերպիչ՝ մարմնամարզության և ՆԶՊ ուսուցչուհի Անուշ Եսայան) կազմակերպվեց ինքնատիպ միջոցառում՝ Արտավազդ թագավորի օրինակով՝ մարզական մրցույթներ: Դրան նախորդել էր հակաօդային գնդի զինվորականների այցը՝ մեր հաղթանակների, կյանքի հավիտենականության գաղտնիքը աշակերտներին ներկայացնելու և հայրենասիրությունը մեկնաբանելու նպատակով:

Աշակերտները ծաղիկներով այցելեցին գյուղի բոլոր ժամանակների հերոսների հիշատակը խորհրդանշող հուշարձան:

Վերադարձին նրանց սպասում էին թենիսի սեղանը, շաշկին ու ճատրակը, վազքուղին, ձգման պարանը: Նրանք զինվորականի պես շարք կանգնեցին, օրհներգը երգեցին...

Միջոցառման բացումը յուրօրինակ խոսքով ազդարարեց դպրոցի տնօրեն Մայա Ծատրյանը: Նա եռագույն օրը համարեց մի հատիկ: Հատիկ, որն ամբարում է դարեր՝ բոլոր սերունդների և մեր ժողովրդի արիության անչափելիությամբ: Հատիկ, որն արժե հազարամյակներ և մեզ մշտապես ցնծալու առիթներ կտա:

Մի հատիկ օր, որը հունդ է, քանի որ նաև մեր արարելու կարողությունն է ընդգրկում, և հավիտենապես կծլարձակի մեր ապագան՝ մեր ներկան հավերժորեն պահպանելու անկոտրում ծրագրով:

Մարզական մրցումներում հաղթողներին դպրոցի տնօրենը նվերներ հանձնելիս նշեց, որ այս հաղթանակները մեր ապագա հաղթանակների հունդերն են...

Հաղթանակներ, որոնք ձեռքբերումների գագաթնակետն են՝ ծնված միայն բարու և ճշմարտի կուտակումների պարպումից և հանուն դրանց:

Այսպիսի հաղթանակ՝ աշխարհի բոլոր մարդկանց:

Անահիտ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ապրիլի 25-ին Բերձորի Վ. Թեքեյանի անվան հ.1 միջնակարգ դպրոցը «Թեքեյան կենտրոն» հիմնադրամի կողմից հրավեր ստացավ մասնակցելու հայոց լեզու և գրականություն, մաթեմատիկա առարկաներից կազմակերպված օլիմպիադային: Մասնակիցներն ութերորդցիներն էին՝ ութ աշակերտ, որոնցից Վիկտորյա Հակոբյանը մաթեմատիկա առարկայից արժանացավ գովասանագրի: Արդյունքների ամփոփման ընթացքում աշակերտներ Սուրենն ու Աստղիկը հանդես եկան համերգային մասում: Միջոցառմանը ներկա էին ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի Միացյալ թագավորության դեսպանը, հյուրեր Սփյուռքից, «Քվանտ» վարժարանի տնօրեն Ռ. Վարդանյանը, ուրիշներ: Շնորհակալական խոսք ասացին Բերձորի և Երևանի Վ. Թեքեյանի անվան դպրոցների տնօրեններ Անահիտ Քոսակյանը և Ծովինար Մարդանյանը: «Քվանտ» վարժարանի տնօրեն Ռ. Վարդանյանը և Ա. Քոսակյանը պայմանավորվեցին իրենց ղեկավարած կրթօջախների համագործակցության վերաբերյալ՝ տարբեր ծրագրերում: Արդյունքում մայիսի 3-ին երկու հանրապետությունների կրթության և գիտության նախարարությունների աջակցությամբ, «Հայաստանի երիտասարդական հիմնադրամի» օժանդակությամբ Բերձորի հ. 1 դպրոցն ընդգրկվեց Հայաստանի և Արցախի 20 դպրոցների շարքում: ՀՀ ԿԳ նախարար Ա. Աշոտյանի կողմից ստացվեց «Լոգո միկրոաշխարհներ» առաջին հայալեզու համակարգչային ծրագրավորման միջավայրի լիցենզավորված փաթեթը: Ծրագիրը նախատեսված է 6-12-րդ դասարաններում ինֆորմատիկա առարկայի դասավանդումն ավելի հետաքրքիր դարձնելուն, ինչպես և այլ առարկաների՝ ֆիզիկա, մաթեմատիկա, քիմիա և այլն, դասավանդման ժամանակ: Աշակերտը «Լոգո միկրոաշխարհներ» միջավայրում կարող է գրել, նկարել, ստեղծել իր սցենարով գրված մուլտֆիլմ, հորինել երաժշտություն: «Լոգո միկրոաշխարհներ» ծրագրի իրականացման խմբի անդամ է նաև «Քվանտ» վարժարանի տնօրեն Ռ. Վարդանյանը: Բերձորի Վ. Թեքեյանի անվան դպրոցի ողջ կոլեկտիվը «Մերան» թերթի միջոցով իր շնորհակալությունն է հայտնում երկու հանրապետությունների ԿԳ նախարարներին և աջակիցներին:

Ջոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

ԵՌԱՏՈՆԸ ՇԵԽԵՐՈՒՄ

Հայերս ունենք մի այնպիսի հարևան, որ յուրացնում է միայն զենքի լեզուն: Գուցե հենց դա է պատճառը, որ հայը հազարամյակներ շարունակ տեսել է բազում արհավիրքներ, պատերազմներ: Սակայն երբեք չի վհատվել, պայքարել ու հաղթել է անգամ իրենից մի քանի անգամ գերազանցող թշնամուն, որովհետև ոչ թե ցանկացել ենք տիրանալ ուրիշին, այլ պաշտպանել ենք մեր սեփականը:

Մեր՝ արցախցիներիս համար ճակատագրական եղավ 1992 թվականը: Աստծո կամով 1992 թվականը հայկական եղավ, որովհետև մեր այս սուրբ հողի վրա միաբանվելով՝ կարողացանք արնածարավ թշնամուց վերցնել մեր պատմական Շուշին, և որ նույն տարում կազմավորվեց Հայոց բանակը:

Անցավ 20 տարի: Արցախցին միշտ էլ մեծ շուքով է նշում այս տոնը: Անմասն չի մնում նաև մեր գյուղ Շեխերը: Շեխերի աշակերտական կոլեկտիվը 20-ամյակը տոնեց յուրովի:

Դասվար Ալվարդ Հարությունյանի և ակումբավար Բելա Սևումյանի նախաձեռնությամբ կազմակերպվեց տոնական երթ, որը սկսվեց դպրոցի բակից ու անցնելով գյուղի բոլոր թաղամասերը, հասավ Հայրենական մեծ և Արցախյան պատերազմներում զոհվածների հիշատակին կանգնեցված հուշարձան-կոթողին՝ հարգանքի տուրք մատուցելու: Աշակերտները ձեռքներին բարձր պահած տանում էին մեծ ու փոքր պաստառներ, որոնց վրա գրված էր «Արցախ», «20-ամյակ», «Հաղթանակ», «Կեցցե՜ Մայիսի 9-ը», «Կեցցե՜ մեր 20-ամյա Արցախը» և այլն: Շքերթի սկզբից տանում էին Արցախի դրոշը, որին հաջորդում էր թմբուկն ու շեփորը: Երեխաներն արտասանում էին կոչեր՝ «Կեցցե՜, Մայիսի 9-ը», «Կեցցե՜ մեր 20-ամյա Արցախը», «Թող կորչի՜ պատերազմը», «Կեցցե՜ն, մեր որդեկորույս մայրերը» և այլն:

Կոչերին աշակերտները ձայնակցում էին ուռա-ներով:

Հուշարձանի մոտ սկսվեց միջոցառումը: Ելույթ ունեցան դպրոցի տնօրեն Լ.Աղավելյանը, համայնքի ղեկավար Մ.Մանգասարյանը, այնուհետև խոսքը տրվեց ակումբավար Բ.Սևումյանին: Արցախյան պատերազմի մասնակիցներին հանձնվեցին շնորհավորագրեր պաշտպանության նախարարի կողմից: Երեխաներն արտասանեցին, երգեցին հայրենասիրական երգեր: Ներկա գտնվողներս հիացանք դպրոցականների գեղեցիկ և հուզիչ ելույթներով:

Շնորհակալություն կազմակերպիչներին՝ Ա.Հարությունյանին, Բ.Սևումյանին, դպրոցի գեղարվեստական մասի կազմակերպիչ Կ.Ավագյանին և նրանց, ովքեր աջակցել են Եռատոնը մեծ շուքով անցկացնելու համար:

Այս քայլը հայրենասիրական է մեր այսօրվա սերնդի համար: Թող մեր մանուկը զգա, որ մեր պապերի թողած ժառանգությունը պահողը, շենացնողը ինքն է, և որ «ոչ ոք չի մոռացվել, ոչինչ չի մոռացվել»:

Ռիմա ՍԵՎՈՒՄՅԱՆ
Շեխերի բնակչուհի

ՀԱՂԹԱՆԱԿ - 20

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ՆԵՐԾԾՎԱԾ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՄԲ, ՀՊԱՐՏՈՒԹՅԱՄԲ

Մայիս: Հաղթանակների ամիս: Նաև պարտադրող ու հիշողությունները թարմացնելու ամիս: Մեր ժողովուրդը մեծ ոգևորությամբ ու ներշնչանքով տոնեց մեր հաղթանակի 20-ամյակը: Հաղթանակ, որ եկավ աշխարհին ասելու՝ ոչ թե քանակն է կարևոր, այլ ոգին, կամքը, հավատը, նպատակը, հանուն որի ձեռք ես բերում հաղթանակ: Եվ ահա հրաշքով ու անհնարին թվացող այդ հաղթանակի և Հայոց բանակի ստեղծման 20-ամյակներին ու Մեծ Հայրենականում տարած հաղթանակին նվիրված ծրագրի շրջանակներում կրթօջախներում կազմակերպվեցին արիության դասեր, անցկացվեցին բազմաբնույթ միջոցառումներ՝ ներծծված հայրենասիրությամբ, հպարտությամբ, սեփական ազգի նկատմամբ տածած անմնացորդ նվիրվածությամբ:

Նման միջոցառումների շրջանակում մայրաքաղաքի Աշոտ-Բեկորի անվան հ. 2 հիմնական դպրոցի միջոցառումն առանձնացավ ինքնատիպ բովանդակությամբ: Այն աչքի ընկավ հատկապես նրանով, որ միջոցառման մասնակից դպրոցականների շարքում էր նաև ԼՂՀ ՊԲ տանկային զորամասի զինվոր Անդրանիկը:

Երկու հանրապետությունների օրհներգերի հնչյունների ներքո ներս են բերվում պետական դրոշները, ապա կուլիսների հետևից Եղիշե Չարենցի և Գարեգին Նժդեհի խոսքերի ուղեկցությամբ միացվում է մեր գոյապայքարը և հաղթական ավարտը ներկայացնող տեսաերիզը: Երևում են մեր սրբազան պատերազմում նահատկված, ինչպես նաև մեր կողքին քայլող հերոսները, պայթում են արկերը: Ահա Ավոն, ահա Աշոտ-Բեկորը՝ իր փոքրիկին գրկած...

Հնչում է Բեկորի խրոխտ ձայնը՝ Շուշիի ազատագրման օրը հաղթական կանգնած պարիսպների վրա.

- Փառավոր բարձունք է, իսկական բերդ: Սուտ է, թե քաղաքը պարսիկներն են կառուցել, այսպիսի տեղում բերդ ու քաղաք կարող են կառուցել միայն հայերը: Սա հային հատուկ բնակատեղի է:

Ու հնչում են Բեկորին, Շուշիին ձոնված երգերը: Դահլիճում նստած Բեկորի այրին անկարող էր զսպել արցունքները: Նա նայում էր էկրանից ժպտացող, ծխի մշուշով պատված, բայց ուրախությունից դեմքը ճառագած Բեկորին ու արցունքների միջից ժպտում: Տիկին Նելլին ոչ թե ողբում, այլ հպարտության ու ուրախության արցունքներն է սրբում և մտքում ասում.

- Դու քո հայրենիքի իսկական հերոսն ես: Քեզ այսպես է մեծարում նոր սերունդը: Դու երազել ես տեսնել ազատ ու անկախ հայրենիք, այսօր այն կա... Դու երազել ես տեսնել կուռ և կայացած բանակ, այսօր այն կա...

Իզուր չի ասել նա. «Հայրենասիրություն ասածը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ քեզ վրա դրված պարտականությունների բարեխղճորեն ու անթերի կատարում»:

Եվ այս նշանաբանով առաջնորդվելով՝ զինվորներն ու սպաները հաղթանակ կերտեցին, ու այդ կերտման ճանապարհին կայացավ կուռ և կազմակերպված Պաշտպանության բանակը:

Հնչում է Հայոց բանակի օրհներգը՝ «Երազ իմ երկիր»...

Աշակերտուհուն միանում է Հայ զինվորի խրոխտ ձայնը.

- Ես մի բուռն եմ քո հողի, ես մի ծիլն եմ քո սրտի...

Ու ծափերից թնդում է դահլիճը...

Երկու հաղորդավարները գեղեցիկ, հղկված հայերենով ներկայացնում են նաև Մեծ Հայրենականի հաղթանակում հայ մարշալների, գեներալների, Սովետական Միության հերոսի կոչմանն արժանացած 116 հայորդիներին՝ հպարտությամբ ընդգծելով, որ նրանցից 22-ը Ղարաբաղից են: Իսկ տեսաերիզում երևում են նրանց սխրանքը պատկերող կադրեր: Հնչում է “День Победы” երգը՝ հաղթանակների երգերգոցը:

Հաղորդավարները նորից պատմում են մեր հայրենիքի՝ Արցախի ու Հայաստանի նվաճումների ու ձեռքբերումների մասին.

- Հայ ազգը միշտ էլ հպարտացել է իր հերոս զավակներով թե՛ ռազմի դաշտում և թե՛ հայրենիքի կառուցման ու շենացման հարթակներում տարած հաղթանակներով, տոնել բազմաթիվ հաղթանակներ արվեստի, սպորտի, գիտության բնագավառներում: Նա աշխարհին ապացուցել է, որ հպարտությամբ ու տոկունությամբ շարունակում է դարերով սնվել քաջ Վարդանի ու Վահագնի, զորավար Անդրանիկի ու Նժդեհի, Բաղրամյանի, Վազգեն Սարգսյանի, Ավոյի ու Բեկորի, այսօրվա դիրքերում կանգնած հայ զինվորի, իմաստուն խաղի աշխարհի տիտղոսակիր Տիգրան Պետրոսյանի, նորօրյա հաղթանակակիրներ Արթուր Աբրահամի, Վիկ Դարչինյանի ոգու և կամքի ուժով:

Դահլիճն ալեկոծվում էր ոգևորությունից...

Դպրոցականը, հայ զինվորի կողքին կանգնած, փառաբանում է իր ժողովրդին ու հայրենիքին, իր փառապանծ բանակին և երազում, որ մի օր էլ ինքը կդառնա հայ զինվոր ու կկանգնի հայրենիքի պաշտպանության դիրքերում:

* * *

Եռատոնին նվիրված դպրոցական միջոցառումները մայրաքաղաքում եզրափակեցին հ. 10 և հ. 9 հիմնական դպրոցները: Հ.10-ում այն մեծ մասշտաբով էր, քանի որ ի սկզբանե պլանով նախատեսված համաքաղաքային միջոցառում էր, և հրավիրված էին քաղաքի բոլոր դպրոցների ներկայացուցիչներ, ինչպես նաև ներկա էին քաղաքապետարանի աշխատակազմի կրթության, սպորտի բաժնի պետ Կառլեն Մարգարյանը և ԼՂՀ ԿԳ փոխնախարար Սլավա Ասրյանը:

Իսկ հ. 9 դպրոցում մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Արմինե Հայրապետյանի աշխատանքային պլանով նախատեսված ներդպրոցական միջոցառումն էր:

Հնչում է «Զինվորի երգը», որն այնքան ոգեշնչված կատարեցին երկու դպրոցների աշակերտները. այն կարելի է թշնամուն ուղղված կոչ համարել: Ու միահյուսվում են բանակ, հայրենիք, պետություն ու ազգ...

Մայրաքաղաքի բոլոր դպրոցներում մայիսյան առաջին շաբաթը հագեցած էր մեկը մյուսին չզիջող, ճաշակով ու բարձր կատարողականությամբ առանձնացող գրական-գեղարվեստական ցուցադրություններով: Իսկ Հովհ. Թումանյանի անվան հ. 9 հիմնական դպրոցի միջոցառումն առանձնացավ նրանով, որ ներկա էին Շվեդիայից մեր հաղթանակի 20-ամյակին մասնակցելու եկած հյուրեր, ովքեր մեծ սիրով ունկնդրեցին երեխաների պատրաստած գրական-գեղարվեստական ելույթը և նկարահանեցին այն:

Լաուրա ՊԵՏՐՈՍՅԱՆ

«ՀԱՅԱԶՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՆՈՒՆ ԱԶԳԻ ԱՊԱԳԱՅԻ

Ապրիլի 28-ին «Հայազն» կազմակերպության Մարտունու մասնաճյուղի անդամների մասնակցությամբ՝ Մարտունու հ. 1 դպրոցում կազմակերպվեց միջոցառում՝ նվիրված Մայիսյան եռատոնին:

20 տարի է, ինչ Արցախ աշխարհը հաղթանակի բերկրանք է վայելում: Մայիսը մեր պատմության մեջ ամրագրվել է որպես հաղթանակի և հարատևման ամիս: Հաղթանակ, որի պատմությունը ամրագրված է ազգի նվիրյալների արյամբ և մաքառումի տենչով: Հայ ժողովրդի պայքարի բովի մեջ թրծվել են նաև մեր հոգևոր հայրերը՝ իրենց մկրտելով իբրև ազգի և ժողովրդի խոնարհ մարտիկներ:

«Հայազն» կազմակերպության Մարտունու մասնաճյուղի անդամ Ս. Սաֆարյանի բացման խոսքից հետո ելույթներով հանդես եկան 2-րդ պաշտպանական շրջանի հոգևոր սպասավոր, Մարտունու Սուրբ Ներսես Մեծ եկեղեցու սարկավագ Թորոս Երանյանը և կազմակերպության անդամ Մարիամ Սարգսյանը: Նրանց ելույթներում արծարծված էր այն գաղափարը, որ 20 տարի առաջ մեր ազգի հաղթանակը կրողները եղան մեր երիտասարդները:

Ի դեպ, «Հայազն» կազմակերպության Մարտունու մասնաճյուղի անդամների մասնակցությամբ Մայիսյան եռատոնին նվիրված միջոցառումների շարք է կազմակերպվել, որի ընթացքում Մարտունու հ.1 և հ.2 դպրոցներում անցկացվել է ասմունքի ստեղծագործական մրցույթ քաղաքապետ Մ. Խաչատրյանի հովանու ներքո: Հինգ տարիքային խմբերից բաղկացած մրցույթին մասնակցեց շուրջ 40 աշակերտ:

Այնուհետև «Դպրոցի ղեկավար կազմի, աշակերտների գործողությունները հակառակորդի հարձակման ժամանակ և փրկարարական աշխատանքների անցկացման ընթացքում» թեմայով անցկացվեց քաղաքացիական պաշտպանության օբյեկտային վարժանք: Նպատակը հակառակորդի հարձակման վտանգի, հարձակման ժամանակ և արագ փոփոխվող պայմաններում դպրոցի ղեկավար կազմի գործնական ունակությունների կատարելագործումն էր, աշակերտների անհատական պաշտպանության միջոցների օգտագործման կանոնների իմացության մարզումը և այլն: Ուսումնական վարժանքին մասնակցում էին 9-րդ և 10-րդ դասարանների աշակերտները: Համազորային պաշտպանության լրակազմին մասնակցեց երկու աշակերտ: Անհատական պաշտպանության ժամանակ տեղի ունեցավ հակագազի հագնումթիմի կազմով: Ներկայացվեցին աշակերտների գործողությունները հրդեհի դեպքում, որի ժամանակ իրականացվեց հրդեհի մարում աշակերտների կողմից, ապա փրկարարների օգնությամբ 4 վիրավոր դուրս բերվեց փլվածքի մարմնական վնասվածքներով և կոտրվածքներով: Այնուհետև ներկայացավ շտապ օգնության մեքենան և վիրավորներին առաջին բուժօգնություն ցուցաբերելուց հետո հասցրեց հոսպիտալ:

Միջոցառման ավարտից հետո մասնակիցները շրջվարչակազմի ղեկավարի աջակցությամբ դպրոցի քաղպաշտպանության շտաբի պետ, զինղեկ Ա. Խաչատրյանի գլխավորությամբ այցելեցին 3-րդ պաշտպանական շրջան՝ ինքնաձիգից մարտական փամփուշտներով հրաձգություն անցկացնելու:

Ցանկալի է նման ուշագրավ ու կարևորագույն միջոցառումների հաճախակի անցկացումը, որոնք նպաստում են ռազմահայրենասիրության դաստիարակմանը, որպեսզի հարկ եղած դեպքում երիտասարդությունը, օգտագործելով իր ունակություններն ու հմտությունները, կարողանա դիմագրավել թշնամու հարձակումներին ու ոտնձգություններին:

Արմինե ԴԱՆԻԵԼՅԱՆ
ք. Մարտունի

ԱՐՏԱԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ

ԵՐԿՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՄԵԿ ՆՊԱՏԱԿ

Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցում կազմակերպվեց «Լույսի և ձայնի դերը մարդու կյանքում» թեմայով ֆիզիկայի միջոցառում:

- Հազարամյակներ շարունակ մարդ արարածն ապրում է Երկիր մոլորակի վրա, և անպատկերացնելի է նրա կյանքն առանց լույսի, առանց իր նմանների հետ հաղորդակցվելու, որն իրականացվում է ձայնի միջոցով: Հատկանշական է, երբ երեխայի ծնունդը, որն ամենահրաշալի բանն է աշխարհում, կապում ենք լույս աշխարհ գալու հետ, և նրա առաջին ճիչը՝ ձայնը, ազդարարում է, որ նոր մարդ է հայտնվել Երկիր մոլորակում: Լույսն ու ձայնը ուղեկցում են մարդուն ողջ կյանքի ընթացքում և կենսականորեն անհրաժեշտ են բոլորիս: Ահա թե ինչու այսօրվա մեր մրցույթի թեման ընտրել ենք հենց «Լույսի և ձայնի դերը մարդու կյանքում»: Ու թիմերին էլ կոչել ենք հենց մեկին՝ «Լույս», մյուսին՝ «Ձայն»,- մրցույթի բացման իր խոսքում նշեց դպրոցի ֆիզիկայի ուսուցչուհի Լարիսա Գասպարյանը:

Թեմային համահունչ կահավորված դպրոցական դահլիճում մրցույթի ելած «Լույս» և «Ձայն» թիմերի մասնակիցները հանդես եկան ողջույնի խոսքով՝ նշելով լույսի և ձայնի կարևորությունը բնությունը ճանաչելու, կենդանի օրգանիզմների հաղորդակցվելու գործում: Թո՛ղ լույս լինի մեր բոլորիս ճանապարհին, թո՛ղ խաղաղության ձայնը աշխարհում ամենաբարձրը հնչի, և թո՛ղ խլանա՛ արկերի շառաչը. թիմերի մասնակիցների այս խոսքերին հաջորդեցին հոգեպարար երգերի ելևէջները, որոնք հայրենասիրության վեհ զգացումով լցրին ներկաների հոգիները.

«Լույս» ենք կոչել մեր թիմին,
Թո՛ղ լույս լինի աշխարհում,
Թո՛ղ լույս վառվի արցախյան ամեն տան մեջ,
Կանչում ենք՝ եղիցի լույս,
Ուզում ենք եղիցի լույս,
Աստված լսի մեր ձայնը՝ միշտ եղիցի՛ լույս:

Եվ՝

«Ձայն» ենք կոչել մեր թիմին,
Ու կոչում ենք ամենքին,
Ի լուր աշխարհի բարձրաձայնել՝
Արցախը մերն է եղել,
Արցախը մերն է եղել
Ու կմնա հայինը ընդմիշտ:

Ապա թիմերին տրվեց առաջադրանք՝ «լույս» և «ձայն» բառերի տառերով կազմել ֆիզիկական իմաստ արտահայտող նախադասություններ, լրացնել խաչբառերն այնպես, որ ընդգծված վանդակներում ստացվեն «ակուստիկա» և «օպտիկա» բառերը: Թիմերի մասնակիցները մեծ սիրով ու խանդավառությամբ էին կատարում յուրաքանչյուր առաջադրանք՝ ժյուրիի կողմից ավելի բարձր միավորներ վաստակելու ակնկալիքով:

Թե՛ հանդիսատեսի և թե՛ միջոցառման մասնակիցների շրջանում մեծ հետաքրքրություն առաջացրին «սև արկղում» գտնվող ֆիզիկական սարքերի վերաբերյալ հարցերը, որոնք անմիջապես կապ ունեին լույսի և ձայնի հետ (հայելի, կամերտոն): Դրանց մասին հորինված հանելուկները հետաքրքիր էին, ֆիզիկական տեսանկյունից՝ հիմնավորված: Առաջադրված բոլոր հարցերն աչքի էին ընկնում առօրեականությամբ, իրենց գործնական կիրառությամբ: Ապահովված էին միջառարկայական կապը (պատմություն, աշխարհագրություն, գրականություն, երաժշտություն, նկարչություն, պարարվեստ, ֆիզիկա), աշակերտների ակտիվությունը, թեմայի արդիականությունն ու կարևորությունը: Մրցույթի բոլոր փուլերը միմյանց հաջորդում էին երաժշտական դադարով, որոնք անմիջականորեն կապ ունեին թեմայի հետ:

Ընդհանրացնելով արդյունքները, ընդգծելով աշակերտների ակտիվությունն ու կատարած մեծ աշխատանքը՝ ժյուրին թիմերի անդամներին դպրոցի տնօրինության կողմից հանձնեց հուշանվերներ, իսկ թիմերը դրան ի պատասխան՝ երգեցին.

Մեր հարգարժան, մեր լավ ժյուրին,
Տեսեք՝ ինչքան արդար դատեց,
Մրցության մեջ պարտվող չկա,
Ընկերությունն է հաղթում...
Եկ ասենք միշտ բարի լույս,
Թող լինի արև ու հույս,
Թող հնչի միշտ մեր ձայնը,
Ու թող եղիցի լույս...

Միջոցառմանը ներկա էին ԼՂՀ ԿԳ նախարարության կրթության պետական տեսչության ֆիզիկայի տեսուչ Ն. Գրիգորյանը, կրթության քաղաքային բաժնի վարիչ Կ. Մարգարյանը, ֆիզիկայի քաղաքային մեթոդմիավորման նախագահ Լենորա Սարգսյանը, դպրոցների ֆիզիկայի ուսուցիչներ: Բոլորն էլ գոհունակությամբ նշեցին, որ աշակերտները միջոցառմանը պատրաստվել էին յուրահատուկ ձևով. ամեն ինչ ստեղծագործական բնույթ էր կրում՝ պարերը, երաժշտությունը համահունչ էին թեմատիկային, պատի թերթերը ձևավորված էին ճաշակով, միջոցառումն անցկացվեց բարձր մակարդակով:

Միջոցառման ողջ ընթացքում աշակերտները շեշտում էին այն միտքը, որ 1988-ի փետրվարին արցախահայության ազատատենչ հզոր ձայնը արձագանքեց ամբողջ հայության սրտերում, և 1992-ին անկախության լույսը բացվեց մեր հաղթանակած Արցախում:

Ու նորից աշակերտների ստեղծագործ լեզվով՝

Լուսառատ լինի մեր ճամփան,
Լուսաշող ու լուսապայծառ՝ մեր ապագան,
Խաղաղություն, հույս, սեր և հավատ,
Սա է ցանկությունը ողջ մարդկության...

* * *

«Ֆիզիկան, տեխնիկան, բնությունը». այս թեման էր կրում հ. 8 դպրոցում կազմակերպված միջոցառումը, որի կազմակերպիչներն էին ֆիզիկայի ուսուցչուհիներ Ի. Նասիբյանը և Մ. Գրիգորյանը:

Մրցույթին մասնակից թիմերը՝ 7-րդ «ա», 7-րդ «բ», 7-րդ «գ» դասարանների աշակերտները, ընտրել էին համապատասխանաբար «Ֆիզիկայի պաշտպաններ», «Միֆ», «Գիտունիկներ» անվանումները: Մրցույթի ողջ ընթացքում թիմերի մասնակիցները ցուցադրեցին մեկ ուսումնական տարվա ընթացքում ձեռք բերած գիտելիքները, ներկայացրին «Իներցիայի դատը», առաջադրեցին ֆիզիկական հանելուկներ, տվեցին ֆիզիկական մեծությունների անվանումներ ու դրանց մեկնաբանությունները: Ֆիզիկական մեկնաբանություններով պարերն ու երգերը յուրօրինակ շուք հաղորդեցին միջոցառմանը:

Հ. 5 և հ. 8 դպրոցներում ֆիզիկայից կազմակերպված երկու միջոցառումներն էլ հետապնդում էին մեկ նպատակ՝ սովորողների մոտ սեր և հետաքրքրություն առաջացնել ֆիզիկայի՝ որպես բնության բոլոր գաղտնիքները, երևույթները բացատրող գիտության հանդեպ, վերհանել և ընդհանրացնել սովորողների գիտելիքները ֆիզիկական տարբեր երևույթների մասին, զարգացնել սովորողների ստեղծագործական ունակությունները, ապահովել աշակերտների ակտիվությունը արտադասարանական միջոցառումներ կազմակերպելիս, դաստիարակել կոլեկտիվ աշխատելու կարողություններ, նպաստել սեփական ուժերի նկատմամբ ինքնավստահության ձեռքբերմանը:

Է. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Հ. 12 հիմնական դպրոցի փոխտնօրեն, ֆիզիկայի ուսուցչուհի

ՀԻՆ ՈՒ ՆՈՐ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՔԱՌՈՒՂԻՆԵՐՈՒՄ

Ռուսական խոսքի օրերի անցկացումը Հացու դպրոցում սկսում է ավանդույթ դառնալ:

Հետաքրքիր ու բովանդակալից ցերեկույթ էր կազմակերպվել դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի Արմինե Սարգսյանի նախաձեռնությամբ: Աշակերտները գրագետ ռուսերենով ներշնչանքով պատմեցին գրի հավերժության ու հաղորդակցման մասին: Փոքրիկ բեմականացմամբ նրանք ներկայացրին մեր հավատավոր ժողովրդի նվիրվածությունը գրքին, ընթերցանությանը: Տարրական դասարանի աշակերտները խորիմաստ հանելուկներով, հայկական օրինակով ներկայացրին գիրքը:

Հայերն աշխարհում հինգերորդ ժողովուրդն են, որ տպագրություն են ունեցել: Պետականություն չունեցող մի ժողովուրդ կարողացել է ստեղծել սեփական տպագրություն:

Նշվեց, որ լրանում է հայ առաջին տպագիր գրքի («Ուրբաթագիրք») 500-ամյակը: Եվ Երևանը այս տարի հռչակվել է Գրքի համաշխարհային կենտրոն:

Ներկաները հոգեկան մեծ բավականություն ստացան միջոցառումից:

Նմանօրինակ միջոցառում կազմակերպվել էր և նախորդ տարի:

Մեր ժողովրդի բարեկամությունը հազարամյա իրողություն է: Մեր աշակերտների խոսքը, բեմական խաղը և երգը հետագայում էլ այսպիսի գեղեցիկ պահեր կպարգևեն բոլորիս:

Գայանե ՍԱՐԳՍՅԱՆ
Հացու հիմնական դպրոցի ուսուցչուհի

Բաց դաս

ԴԱՍ, ՈՐ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԷՐ ՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄ

Ժամանակակից մանկավարժության զարգացումը բազմակողմանի գործընթաց է, որը ենթադրում է նորարարական մեթոդների, եղանակների ու հնարների գրագետ ու ճիշտ կիրառում: Առանց հաղորդակից լինելու ժամանակակից մանկավարժության նվաճումներին, հիրավի, անհնար է կազմակերպել լիարժեք ուսումնադաստիարակչական գործընթաց:

Օրերս Ստեփանակերտի հ. 5 հիմնական դպրոցում լսեցինք 2-րդ դասարանում կազմակերպված բաց դաս, որը կրում էր «Լավաշը» խորագիրը: Դասի առանցքում ուսուցման ու դաստիարակության սկզբունքների պահպանումն էր, իսկ նպատակը՝ ոչ միայն ձևաբանական գիտելիքների ճիշտ մատուցումը, այլև բարոյական, աշխատանքային, գեղագիտական դաստիարակության իրականացումը:

Դասի նյութը Հակ Խաչատրյանի «Լավաշն» էր: Կահավորանքն արդեն հուշում էր մատուցվող նյութի մասին:

Հացի մասին ասույթներով պաստառները, որ ուսուցչի ինքնաշեն աշխատանքի արդյունքն էին, նախօրոք փակցվել էին դասարանի պատերից, իսկ սեղանին դրված հացատեսակները (մատնաքաշ, լավաշ, բոքոն) և հաց պատրաստելու պարագաները (ցորեն, հասկ, ալյուր, ժամանակակից հացաթխման սարք) արդեն իսկ հուշում էին դասի փորձարարական հատվածի մասին:

Հասկանալով կարդալու, բնագրի շարունակությունը գուշակելու, դատողություններ ու եզրահանգումներ անելու, տեսածն ու լսածը խոսքով վերարտադրելու կարողությունների ձևավորման նպատակները ենթադրում էին քերականական գիտելիքների ապահովման ելքը, իսկ հացի, ազգային հացաթխման պարագաների վերաբերյալ ճանաչողական գիտելիքների ընդլայնումը, հացի հանդեպ պատշաճ վերաբերմունքի ձևավորումն առավելապես բարոյական դաստիարակության նպատակ էին հետապնդում:

Նախքան դասն սկսելը ուսուցիչն ու աշակերտները հյուրերին դիմավորեցին աղ ու հացով, և այստեղ արդեն իսկ իմաստավորված էր հացը որպես խորհրդանիշ ընկալելու իրողությունը:

Դասի սկիզբն առանձնահատուկ և անակնկալ էր նրանով, որ ուսուցիչը դիմեց աշակերտներին նրանց հղված անծանոթ պապիկի նամակով: Դա Արտաշես պապիկի նամակն էր, որ պատմում է հացի նկատմամբ անխնա ու անվայելուչ պահվածք ունեցող երեխաների մասին: Պապիկը հորդորում էր սրբությամբ վերաբերվել հացին: Այնուհետև տեսասկավառակի միջոցով երեխաներն «ուղևորվեցին» հացի գործարան, որտեղ ականատես եղան ոչ միայն հացաթխման ամբողջ գործընթացին, այլև իմացան՝ որտեղից է քամվում ալյուրը, ինչպես և ինչու է ցորենը ցանվում արտում և ապա երկար ճանապարհ անցնելով, հասնում գործարան:

Ապա ուսուցչուհին մտագրոհի մեթոդի միջոցով վեր հանեց աշակերտների նախնական գիտելիքները հացի մասին՝ գրատախտակին գրառելով ճիշտ բնութագրող բառեր՝ ցորեն, այլուր, խմոր, լավաշ, հասկ ու արտ, սուրբ հող, չարչարանք ու դժվարություն ու նաև արև, որովհետև մեր հացի մեջ նաև արևի համն ենք ճաշակում: Հետո ուսուցչուհին անդրադարձավ Արտաշես պապի նամակին: Աշակերտներն սկսեցին յուրովի մեկնաբանել հացը փչացնող չար տղաների ու պապի խրատական հորդորները:

Երաժշտական դադարին հաջորդեց «Լավաշ» պատմվածքի հաղորդումը, որը դիտվեց որպես իմաստի ընկալման փուլ: Նյութը հաղորդվեց «ուղղորդված ընթերցանություն՝ կանգառներով» մեթոդով: Ըստ որում, յուրաքանչյուր կանգառ յուրօրինակ ձևով ամփոփում ու իմաստավորում էր ընթերցած հատվածը: Երեխաները կատարում էին բառային ու լեզվական աշխատանք, հենակետային բառերն օգտագործում նախադասության մեջ և համառոտում: Այս մեխանիզմը գործում էր բոլոր երեք «կանգառներում»: Ուսուցչուհին յուրօրինակ ձևով խթանում էր նրանց ստեղծագործական մտածողությունն ու երևակայությունը՝ մղելով պատմվածքի վերջաբանի կանխատեսման ու գուշակման: Եվ «Լավաշ» պատմվածքի հնդիկ իշխանը աշակերտի երևակայությամբ անպայման հացթուխից պետք է իմանար լավաշ թխելու գաղտնիքները:

Դասի կշռադատման փուլում քառաբաժանման մեթոդի օգնությամբ ամփոփվեց ու ամրակայվեց նոր նյութը, և երեխաները բանավոր կառուցիկ խոսքով վերարտադրեցին՝ ինչ տեսան, ինչ զգացին, ինչ լսեցին ու ինչ սովորեցին:

Դասի մեթոդական ու քերականական կառույցը համալրվեց խմբային աշխատանքի կատարմամբ, որը որպես ուսուցման համագործակցային մեթոդ՝ կենդանի և մրցունակ է դարձնում դասի ամբողջ ընթացքը:

«Լավաշ» բառով հորինվեց գեղեցիկ աքրոստիկոս, ու թվաց՝ նույն այդ լավաշը հունցվեց ալյուր ու ջրով, թխվեց անուշաբույր թոնրում, խնկարկեց անուշ բույրն իր ու մատուցվեց բոլոր նստածներին, որ իսկապես վայելում էին դասավանդող ուսուցչուհի Գ. Աղաբալյանի մանկավարժական վարպետությունն ու ուրախությունը:

Դասը հաջողված էր, յուրատիպ և ուսանելի, և հետաքրքիրը սոսկ դասի մատուցման, մեթոդների ու հնարների ռացիոնալ կիրառման մեջ չէր, այլև ուսուցչի տեսական ու գործնական արհեստավարժության արտահայտման մեջ:

Աշակերտակենտրոն դասի ընթացքում, այնուամենայնիվ, բացահայտվեց նաև ուսուցչի անձի հեղինակությունը, առանց որի հնարավոր չէ շոշափելի արդյունքների կանխատեսումը: Վարակիչ և հուզառատ էր Գ. Աղաբալյանի ոգևորությունը: Այդպիսի դասերը պետք է զանգվածային, ոչ թե առանձին քննարկման ու դիտարկման նյութ դառնան: Այդպես մեր ուսուցչությունը զորեղ կլինի իր խոսքում ու գործում, իսկ սերունդը՝ խոստումնալից:

Լիանա ԾԱՏՐՅԱՆ
Հ. 12 հիմն. դպրոցի դասվար, մեթոդմիավորման նախագահ

ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԽՄԲԵՐՈՒՄ

Հանրակրթության որակի ապահովման տեսանկյունից նախադպրոցական հաստատությունների ավագ և հանրակրթական դպրոցներում գործող նախապատրաստական խմբերում տարվող աշխատանքները շատ կարևոր դեր են խաղում. դրանք եղել և մնում են ուսուցման և դաստիարակության հաջորդական շղթայի առաջին կարևորագույն օղակը:

Այսօր առավելագույնս կարևորվում է երեխային դպրոցին նախապատրաստելու բազմաբնույթ գործընթացը, ինչը նշանակում է հարստացնել երեխայի բառապաշարը, զարգացնել խոսքն ու տրամաբանությունը, վերացնել կաշկանդվածությունը, ծանոթացնել շրջապատող աշխարհին, ձևավորել կոլեկտիվ գործունեություն վարելու ունակություն, նախապատրաստել նրան սպասվելիք դպրոցական միջավայրին: Մի խոսքով, նախադպրոցական տարիքի ցանկացած երեխայի համար պետք է ապահովել զարգացման այնպիսի մակարդակ, որը թույլ կտա նրան լինել հաջողակ դպրոցում:

Այսպիսով, ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և դաստիարակության ուղղակի խնդիրը նրանց ընդունակությունների ու ստեղծագործական ներուժի զարգացումն ու գիտելիքների, կարողությունների արժեքային համակարգի ձևավորումն է: Այս տարիքը համարվում է արագ ու արդյունավետ զարգացման, անհատականության ու նախասիրությունների ձևավորման տարիք, ուստի պահանջվում է յուրահատուկ ուշադրություն դաստիարակչուհիների կողմից՝ ինքնամոռացումի հասնող ջանասիրությամբ կազմակերպել ու անցկացնել պարապմունքները: Յուրաքանչյուր դաստիարակչուհի միշտ պետք է ձգտի նորարար լինել, ամեն օր հարստացնել իր դասավանդման եղանակները: Անհրաժեշտ է մշակել այնպիսի ձևեր ու մեթոդներ, որոնք կնպաստեն ներգրավել, ուղղորդել, խթանել երեխաներին՝ ինքնուրույն հասնելու հաջողության:

Վ. Ա. Սուխոմլինսկին գտնում է. «…Երեխային պետք է ծանոթացնել յուրաքանչյուր առարկայի՝ մյուս առարկաների հետ կապելով: Երեխաների համար պատուհան բացեք դեպի շրջապատի--- աշխարհը: Կարողացեք երեխայի համար շրջապատի--- աշխարհում հայտնագործել որևէ նոր բան, բայց դա կատարեք այնպես, որ կյանքի այս պատառիկը երեխաներին երևա ծիածանի բոլոր գույներով…»:

Ուշագրավ էին ապրիլ ամսում Ստեփանակերտի հ. 1, 2 և 7 դպրոցների նախապատրաստական խմբերում անցկացված բաց պարապմունքները, որոնց նպատակը փորձի փոխանակումն էր:

ԼՂՀ ԿԳ նախարարության և քաղաքապետարանի կրթության բաժնի պատասխանատուները, վերոնշյալ դպրոցների տնօրենները, Ստեփանակերտի հանրակրթական դպրոցներում գործող նախապատրաստական խմբերի դաստիարակչուհիներն ականատես և ունկնդիր եղան Ստեփանակերտի հ. 1 դպրոցում՝ մաթեմատիկա, հ. 2 դպրոցում՝ գրաճանաչություն և հ. 7 դպրոցում՝ խոսքի զարգացում և ծեփակերտում առարկաներից կազմակերպված պարապմունքներին:

Ստեփանակերտի հ. 1 դպրոցի նախապատրաստական խմբում (դասվար՝ Հասմիկ Բալայան) մաթեմատիկայից անցկացված պարապմունքի թեման էր «Յոթ թիվը և թվանշանը», նպատակը՝ ծանոթացում *յոթ* թվանշանին, ցույց տալ յոթ-ի ստացումը, բացահայտել կազմությունը և ամրապնդել անցած նյութը:

Խմբասենյակում երեխաների ազատ գործունեության համար ստեղծված էր բազմամակարդակ ու հարմարավետ առարկայական զարգացնող միջավայր, կային դիտողական պարագաներ՝ նկարներ, թվաքարտեր, պաստառներ, բաշխիչ նյութեր երկրաչափական պատկերներից, գրենական պիտույքներ, խաղալիքներ: Դաստիարակչուհին նախապես մտածել էր պարապմունքի կառուցվածքի և ընթացքի մասին: Ընդհանրապես, երեխաների մոտ հետաքրքրություն առաջացնելու համար շատ կարևոր է պարապմունքի բովանդակությունը: Այս տեսակետից կարելի է ասել, որ պարապմունքը շատ հետաքրքիր էր ու հաջողված:

Դաստիարակչուհի Հ. Բալայանը երեխաների հետ շփման ընթացքում նրանց ազատ դրսևորվելու հնարավորություն ընձեռեց, ապահովված էր միջառարկայական կապը: Պարապմունքը սկսվեց «Մուտք մաթեմատիկական աշխարհ» բանաստեղծությամբ, որը երեխաներին հնարավորություն տվեց մեկ անգամ էլ՝

Ճամփորդել միասին
Զարմանալի մի երկրում,
Ուր 0-ից մինչև տասը
Ողջ թվերն են բնակվում…

Խմբասենյակում տիրում էր աշխույժ և տրամադրող մթնոլորտ, երեխաները բավականաչափ լավ և արագ հաշվում էին 1-10՝ ուղիղ, կարգային և հետհաշիվ, տրամաբանում էին, կարողանում էին հստակ պատասխանել տրված հարցերին՝ ստեղծագործական մոտեցում ցուցաբերելով, ազատ էին ու անկաշկանդ:

Այնուհետև խաղ-առաջադրանքների միջոցով

ամրապնդվեցին երեխաների տարածական պատկերացումները՝ այդ նպատակով օգտագործելով երկրաչափական տարբեր պատկերներ:

Դաստիարակչուհին ընտրել էր դիդակտիկ խաղ՝ «Հրաշալի պարկը», որի ընթացքում հետաքրքիր հարցադրումներով ստեղծելով պրոբլեմային իրավիճակներ, հնարավորություն տվեց երեխաներին մտածելու, տրամաբանելու, համադրելու, հակադրելու, ինչն, անշուշտ, նպաստում է նրանց մտավոր զարգացմանը: Երեխաները դրսևորում էին հետաքրքրասիրություն, անմիջականություն, երևակայություն: Իսկ սրանք այն որակներն են, որոնք կարևոր են սովորելու գործընթացը ճիշտ կազմակերպելու համար:

Դաստիարակչուհին անցած նյութի ամրապնդման միջոցով սահուն անցում կատարեց նոր նյութին՝ ծանոթացում 7 թվանշանին: Ճանաչողական բնույթի տարբեր խաղերի և գործնական աշխատանքների միջոցով երեխաները ծանոթացան 7 թվանշանի հետ: Մանկավարժական գործընթացի երեք փուլերը՝ նախապատրաստական, հիմնական և եզրափակիչ, շատ հստակ էին:

Հ. Բալայանի կիրառած մեթոդները խթանում էին երեխաների հետաքրքրությունների և երևակայությունների զարգացմանը, իսկ այս ամենը, անշուշտ, կօգնի նրանց՝ դպրոցում հաջողությամբ յուրացնելու մաթեմատիկական գիտելիքները: Դաստիարակչուհու աշխատանքի արդյունավետությունն էլ հենց պայմանավորված է նման պարապմունքների անցկացմամբ: Գովելի էր հատկապես նրա հուզական աջակցությունը՝ խրախուսանք խոսքով, ժպիտով, հայացքով և մանկավարժական տակտը:

Դաստիարակչուհի Հ. Բալայանը, անսպառ եռանդով լի, գործադրելով ուսուցման նոր մեթոդներ, մասնագիտական բարձր որակներ, մեծ վարպետությամբ անցկացրեց մաթեմատիկայի պարապմունքը: Հաճելի է ունկնդրել այդպիսի հագեցած ու բովանդակալից պարապմունք:

Ստեփանակերտի հ. 2 դպրոցի նախապատրաստական խմբում կազմակերպված պարապմունքը գրաճանաչությունից էր (դաստիարակչուհի՝ Գրետա Մարտիրոսյան): Պարապմունքի թեման էր «Ծանոթացում «Գ» և «Ք» հնչյուն-տառերին», նպատակը՝ ցույց տալ այդ երկու հնչյունների արտասանության տարբերությունը, զարգացնել երեխաների բանավոր խոսքը, հարստացնել բառապաշարը:

Պարապմունքի ժամանակ օգտագործվեցին համապատասխան պարագաներ՝ նկար-պատմությունների մեծադիր նկարներ, պատկերագիր տառեր, գրենական պիտույքներ և այլն: Պարապմունքն ընթացավ ԽԻԿ համակարգով: Դաստիարակչուհին հարցերի միջոցով ամփոփեց անցած նյութը, ամրապնդեց անցած հնչյունների ճիշտ արտասանությունը: Երեխաներն ունեն լեզվական նախագիտելիքներ ձայնավոր և բաղաձայն հնչյունների, վանկի, բառի, նախադասության մասին, կարողացան կատարել բառի հնչյունային վերլուծություն, տրված բառերով կազմել նախադասություններ և այլն: Նրանք ինքնուրույն կազմեցին սյուժետային պատմվածք ըստ նկարի՝ օգտագործելով պատկերավոր բառեր ու արտահայտություններ:

Դաստիարակչուհին նոր նյութի հաղորդման ժամանակ սովորեցրեց լսողությամբ ճիշտ տարբերել «Գ» և «Ք» հնչյունները: Երեխաները ճիշտ գուշակեցին այդ հնչյունների հետ կապված հանելուկների պատասխանները:

Գրաճանաչությունը, ընդհանրապես, մայրենի լեզվի կարևոր բաղադրիչներից է, որի հիմքում դրված է մեկ նպատակ՝ մշակել երեխայի բանավոր խոսքը: Հենց այս տարիքում է կայանում երեխայի առաջին ծանոթությունը խոսքարվեստին, որն այդ շրջանի երեխայի համար ամենակարևոր ձեռքբերումն է: Ուստի դաստիարակչուհուց պահանջվում է հնարավորինս լուրջ մոտեցում և վերաբերմունք: Նա պետք է միշտ ուշադիր լինի, թե ինչպես է իրականացվում երեխայի կողմից խոսքի յուրացման ու կազմակերպման գործընթացը:

Գրաճանաչության պարապմունքը պետք է անցկացնել ամենաբազմազան բնույթի հետաքրքիր, սրամիտ, աշխույժ և ներգործուն մեթոդական հնարքներով:

Գ. Մարտիրոսյանը տարել էր համապատասխան աշխատանքներ վերոնշյալ պահանջների իրականացման ուղղությամբ: Նա հասել է իր նպատակին:

Հետաքրքիր ու բովանդակալից էր նաև Ստեփանակերտի հ. 7 դպրոցի նախապատրաստական խմբում անցկացված պարապմունքը «Գեղարվեստական խոսք» և «Ծեփակերտում» առարկաներից (դաստիարակչուհի՝ Նունե Սաֆարյան): Պարապմունքի թեման էր «Գնդիկ բոքոնիկ» հեքիաթի ուսուցումը և գնդիկ բոքոնիկի ծեփումը»: Նպատակը՝ երեխաներին սովորեցնել հեքիաթը պատմել տրամաբանական հաջորդականությամբ, զարգացնել երեխաներին ստեղծագործելու մտահղացումներով հեքիաթի համար նոր ավարտ հյուսելու կարողությունը, զարգացնել մատների մոտորիկան:

Պարապմունքի ժամանակ օգտագործվեցին տարբեր զննական պարագաներ՝ տիկնիկային թատրոնի պարագաներ, աղի խմոր, հեքիաթի տարբեր դրվագներ պատկերող նկարներ, խաչբառ և այլն: Պարապմունքը հետաքրքիր, աշխույժ, հաճելի ու բովանդակալից դարձնելու, այն ճանաչողական ու կրթադաստիարակչական տեսակետից հարստացնելու նպատակով դաստիարակչուհի Ն. Սաֆարյանը դիմել է ուսուցման համագործակցային մեթոդին, իսկ առարկայական համագործակցումը պարապմունքի նպատակին հասնելու հուսալի միջոց է:

Հենց այն, որ երեխան «Գնդիկ բոքոնիկի» պատմությունը սկսում է «Լինում է, չի լինում» նախադասությամբ, վկայում է այն մասին, որ նրա խոսքն ունի սկիզբ: «Հետո», «այնուհետև», «այսպիսով» և նմանատիպ այլ բառերի կիրառմամբ երեխան իրար է կապակցում նախադասությունները և խոսքը հասցնում իր տրամաբանական ավարտին: Ուստի երեխայի խոսքը ստանում է այնպիսի կառուցվածք, որն ունի սկիզբ, ընթացք և ավարտ:

Դաստիարակչուհին խթանող հարցերով ամփոփեց անցած նյութը. երեխաները գիտեն, թե ինչպես է ստացվում հացը, գիտեն հացատեսակները, ասացվածքներ հացի մասին: Կարողացան բառերի սկզբնատառերով կազմել խաչբառ և ստանալ «Գնդիկ» բառը:

Երեխաներին ակտիվացնելու նպատակով կազմակերպվեց թեմային առնչվող տարբեր սյուժեներով խաղեր: Մասնավորապես արդյունավետ էին ենթախմբերի բաժանման եղանակի կիրառումը, գիտելիքների ուսուցումը խաղերի միջոցով կազմակերպելու հնարքները և այլն:

Ուսուցման ընդհանուր շղթայում էապես կարևորվում է կերպարվեստի դերը, այստեղ՝ ծեփի:

Ծեփումով աշխատելը նպաստում է երեխայի ձեռքի շարժունակության և մտքի ունակության զարգացմանը, ինչպես նաև աշխատանքը մինչև վերջ հասցնելու կամք է դաստիարակում:

Անկախ նրանից, թե երեխան ծեփում է դիտելով թե երևակայությամբ, միևնույն է, նա բոլոր դեպքերում «ստեղծում է», ուստի այդ հանգամանքն էլ նպաստում է նրա ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

Լավ է, որ երեխաների բոլոր գործողություններին հետևում էր դաստիարակչուհու գնահատականը, ինչն ուսուցման կարևոր ձևերից է:

Այս պարապմունքն ուներ դաստիարակիչ ներգործություն. այն երեխաների մոտ ձևավորում է գեղագիտական ճաշակ, էթիկայի վարքագիծ, կոլեկտիվ համախմբվածություն և նյութական արժեքներ ստեղծելու կարողություն:

Նման զուգակցված պարապմունքը թույլ է տալիս զգալ պարապմունքի նպատակաուղղվածությունը, կապը կյանքի հետ, մեծացնում է երեխաների գիտելիքների ծավալը:

Պարապմունքն, անկասկած, հաջողված էր, որը ստեղծագործական աշխատանքի արդյունք է:

Դպրոցների նախապատրաստական խմբերում անցկացված երեք պարապմունքներն էլ ընդհանրապես միջվում էին երաժշտությամբ և ֆիզկուլտդադարներով, որոնք առնչվում էին պարապմունքների թեմաներին:

Մեկ անգամ ևս համոզվեցինք, որ նախապատրաստական խմբերի դաստիարակչուհիները վիթխարի աշխատանք են տանում: Ի՜նչ նվիրում ու ջանք է հարկավոր երեխաներին այդքան բան սովորեցնելու համար:

Վերջում տեղի ունեցան քննարկումներ: Անցկացված երեք պարապմունքները մտքերի փոխանակման արդյունքում գնահատվեցին ուսանելի և ընդօրինակման արժանի:

Վերջում կցանկանայի հիշեցնել, որ նախադպրոցական տարիքը չափազանց պատասխանատու շրջան է, երբ ստեղծվում են ոչ միայն երեխայի անձնավորության ձևավորման, այլև խոսքի յուրացման ու կառուցման առավել նպաստավոր պայմաններ, ուստի փորձենք օգտվել այս հնարավորությունից և ձևավորենք ու դաստիարակենք արժանի սերունդ, որը ունակ կլինի անկաշկանդ ու գրագետ արտահայտվելու և արդյունավետ գործունեություն ծավալելու:

ԷԼՄԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԿԳ վարչության նախադպրոցական եւ արտադպրոցական բաժնի ցլխավոր մասնագետ

ՓՈԽԱԴՐԱԿԱՆ

4-րդ դասարան

ՄԱՅՐԵՆԻ

գիտելիքների ստուգման ուղեցույց և թեստի նմուշ

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ընտրովի պատասխանով առաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Կարճ պատասխանով առաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Ուղղագրության վերաբերյալ առաջադրանքի յուրաքանչյուր ճիշտ գրված բառի համար տրվում է 1 միավոր (ընդամենը՝ 5 միավոր):

Կետադրության վերաբերյալ առաջադրանքի ճիշտ կետադրման համար տրվում է 1 միավոր:

Եթե տվյալ կետադրական կանոնը պահանջում է 2 կետադրական նշան (օրինակ՝ կոչականը՝ շեշտ և ստորակետ), ապա 1 միավոր է տրվում այն դեպքում, եթե 2 նշանն էլ ճիշտ են դրված:

Ցանկացած այլ (ավելորդ կամ սխալ) կետադրական նշանի գործածության դեպքում այս առաջադրանքին միավոր չի տրվում, եթե անգամ ճիշտ նշանակված է պահանջվող կետադրությունը:

Որոշ կետադրական նշաններ (օրինակ՝ ուղղակի խոսքի անջատման գիծը) դրված են այն պատճառով, որ աշակերտը դեռևս ծանոթ չէ կետադրական տվյալ կանոններին, իսկ առանց դրանց նախադասությունը կարող է անհասկանալի լինել: Այդ նշանների բաց թողնումը աշակերտի կողմից պետք է համարել անուշադրության սխալ: Այդպիսի սխալների համար միավոր չի հանվում:

Ընդարձակ պատասխանով առաջադրանքներ.

Տեքստի վերաբերյալ տրվող հարցերից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1-ական միավոր, եթե հարցի պատասխանը ըստ տեքստի ճիշտ է: Քերականական և ուղղագրական սխալները հաշվի չեն առնվում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿԸ

ԹԵՍՏ 1

(նմուշ)

I ՄԱՍ

Կարդա՛ տրված տեքստը՝ մտովի լրացնելով որոշ բառերում բաց թողած տառերին փոխարինող վանդակները և կատարի՛ր 1-4-րդ առաջադրանքները:

Չորրորդ դարում Հայաստանի թագավոր օծվեց Արշակի **որ□ի** Պապը: Պապն աշխատում էր չընդհարվել ո՛չ Պարսկաստանի, ո՛չ Բյուզանդիայի հետ: Նա անկախ և ըմբոստ բնավորություն ուներ: Հռոմի կայսրն ամեն կերպ ուզում էր իրեն հնազանդեցնել Պապին: Նա իր զորավարներից մեկին հանձնարարում է **որև□** կերպ սպանել հայոց թագավորին:

Անօրեն հռոմեացին Պապ թագավորին ընթրիքի է հրավիրում: Սեղանին դնել է տալիս արծաթազօծ բաժակներ, **ոսկեջրա□** ափսեներ:

Պապը նստում է բազկաթոռին: Մատուցում են ամենաընտիր խորտիկները: Ընդարձակ դահլիճը զարդարված է **եր□ներանգ** ծաղիկներով: Հնչում է **մեղմ□րոր** երաժշտություն: Գինին մշուշել է հայոց արքայի աչքերը: Նա թեք է ընկել բազկաթոռի վրա: Բայց ահա ներս են խուժում հռոմեացի զինվորները: Պապ թագավորի արյունը խառնվում է ոսկեգույն գինուն:

1. Տեքստի բառերից 5-ում տառեր են բաց թողած: Դո՛ւրս գրիր այդ բառերը՝ լրացնելով բաց թողած տառերը:

Պատասխան՝ _____

2. Տրված բառերից յուրաքանչյուրի դիմաց նշված է, թե այն ինչ խոսքի մաս է: Ո՞ր տարբերակում է սխալ նշված:

1) ***չորրորդ*** - թվական
2) ***ըմբոստ*** - ածական
3) ***անկախ*** - գոյական
4) ***չընդհարվել*** - բայ

3. Շարադրանքում հանդիպող հետևյալ բառերից ո՞րը հատուկ անուն չէ:

1) ԲՅՈՒԶԱՆԴԻԱ 2) ԿԱՅՍՐ 3) ԱՐՇԱԿ 4) ՀՌՈՄ

4. Մեկ անգամ էլ կարդա՛ շարադրանքը և պատասխանի՛ր տրված հարցերին:
ա. Ինչպիսի՞ բնավորություն ուներ Պապ թագավորը:
1) ագահ և փառասեր
2) անկախ և ըմբոստ
3) մեղմ և խաղաղասեր
4) բարի և ներողամիտ

բ. Կայսրը հայոց իշխանությունը իրեն ենթարկելու համար ի՞նչ միջոցի է դիմում:
1) Դավադրաբար գերի է վերցնում և բանտարկում իշխանավորներին:
2) Պատերազմ է հայտարարում Հայաստանին:
3) Գահընկեց է անում հայոց Պապ թագավորին:
4) Իր զորավարներից մեկին հանձնարարում է սպանել հայոց թագավորին:

գ. Ի՞նչ նկատի ունի տեքստի հեղինակը «Պապ թագավորի արյունը խառնվում է ոսկեգույն գինուն» պատկերավոր արտահայտությամբ:
Պատասխան՝ _____

II ՄԱՍ

Կարդա՛ տրված տեքստը՝ փակագծերում գրված բայերը մտովի դնելով ճիշտ դեմքով, թվով և ժամանակով և կատարի՛ր 5-8-րդ առաջադրանքները:

Այս դեպքը կատարվել է շատ տարիներ առաջ Վիեննայում: Այն ժամանակ այդ քաղաքում ապրում էր մի ծեր մարդ: Նա հաշմանդամ էր, անուժ և չէր կարողանում աշխատել: Բայց նա ուներ մի ջութակ: Ամեն օր զբոսայգում կանգնում էր մի ծառի տակ և նվագում: Նրա շունը ***(նստել)*** տիրոջ մոտ և բերանով պահում էր հաշմանդամի գլխարկը: Մարդիկ ***(լսել)*** երգը և երաժշտի գլխարկի մեջ դրամ գցում: Այդ օրն էլ երաժիշտը կանգնած էր ծառի տակ: Բայց նրա ձեռքերը դողում էին ցրտից. նա չէր կարողանում լավ նվագել: Ոչ ոք չէր կամենում դրամ տալ:

Իջավ երեկոն, և երաժիշտն արդեն շատ հոգնած էր: Նրա գլխարկը դատարկ էր: Ծերունին լուռ արտասվում էր: Հանկարծ ծերունուն ***(մոտենալ)*** մի մարդ, դրամ տվեց և ասաց, որ իրեն տա ջութակը: Ծերունին նրան տվեց իր ջութակը: Մարդը կանգնեց հաշմանդամի կողքին և սկսեց նվագել: Նա շատ լավ էր նվագում: Ծերունին ականջներին չէր հավատում: Մարդիկ ***(սկսել)*** դրամ գցել գլխարկի մեջ: Շուտով այնքան ծանրացավ գլխարկը, որ շունը հազիվ էր կարողանում պահել: Ծերունին դրամը լցրեց իր գրպանները: Անծանոթը ջութակը վերադարձրեց տիրոջը և արագ հեռացավ: Այդ մարդը նշանավոր ջութակահար Բուշենն էր, որն այդ օրերին համերգներ էր տալիս Վիեննայում:

5.Փակագծերում դրված բայերը տարբերակներում ներկայացված են որոշակի դեմքով, թվով և ժամանակով: Ըստ տեքստի՝ ո՞ր տարբերակի բայի ձևն է սխալ:
1) նստել-նստած
2) լսել-լսում էին
3) մոտենալ-մոտեցավ
4) սկսել-սկսեցին

6. Շարադրանքում գործածված արտահայտություններից ո՞րն է դարձվածք:
1) գլխարկի մեջ դրամ գցել
2) լուռ արտասվել
3) լավ նվագել
4) ականջներին չհավատալ

7. Տեքստում հանդիպող հետևյալ բառերից որի՞ դիմաց է սխալ նշված նրա կազմությունը:
1) զբոսայգի-բարդ
2) ջութակ-պարզ
3) անծանոթ-ածանցավոր
4) նշանավոր-բարդ

8. Մեկ անգամ էլ կարդա՛ շարադրանքը և պատասխանի՛ր տրված հարցերին:
ա. Ինչո՞ւ այդ օրը ծերունին չէր կարողանում դրամ վաստակել:
1) Ցուրտ էր, և փողոցներում մարդիկ չկային:
2) Ջութակի լարերից մեկը կտրվել էր:
3) Նվագում էր նոր՝ մարդկանց անհասկանալի երաժշտություն:
4) Մրսում էր և չէր կարողանում լավ նվագել:

բ. Ի՞նչ էր անում ծերունու շունը, երբ ծերունին ջութակ էր նվագում:
Պատասխան՝ _____

գ. Ինչո՞ւ անծանոթը որոշեց ծերունուց վերցնել ջութակը և նվագել:
Պատասխան՝ _____

III ՄԱՍ

9. Ո՞ր տարբերակի բառերը հոմանիշներ չեն:
1) բիլ-երկնագույն
2) ոռոգել-ջրել
3) հուռթի-խոշոր
4) զտվել-մաքրվել

10. Ինչպիսի՞ն է տրված նախադասությունը ըստ երանգի:
Ա՜խ, այսպես էլ գիժ ամիս,
Մարդու հանգիստ չի տալիս:

1) պատմողական
2) բացականչական
3) հրամայական
4) հարցական

11. Ո՞րն է տրված նախադասության ենթական:
Չորակում հոսող գետակի վշշոցը կարծես օրոր էր ասում անտառին:

1) ձորակում
2) գետակի
3) վշշոցը
4) անտառին

12. Արտագրի՛ր նախադասությունը՝ նշանակելով կետադրությունը:

Դասն սկսվել էր բայց Դավիթը չէր կարողանում կենտրոնանալ և լսել ուսուցչին:

_____

_____

ՓՈԽԱԴՐԱԿԱՆ

4-րդ դասարան

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

գիտելիքների ստուգման ուղեցույց և թեստի նմուշ

ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Թեստը բաղկացած է երեք տեսակի առաջադրանքներից՝ ընտրովի պատասխանով առաջադրանքներ, կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ և ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ:

Թեստի առաջադրանքների բաշխումը ըստ ներկայացման ձևի

Գրավոր աշխատանքի գնահատման չափանիշները

Ընտրովի պատասխան են պահանջում 1-10-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Կարճ պատասխան են պահանջում թեստի 11-15-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Ընդարձակ պատասխան են պահանջում 16-17-րդ առաջադրանքները: 16-րդ առաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է առավելագույնը՝ 3 միավոր, իսկ 17-րդ առաջադրանքինը՝ 2 միավոր:

Ամփոփիչ վերջնական միավորը ստացվում է թեստի առաջադրանքների պատասխաններից աշակերտի վաստակած բոլոր միավորների գումարից (առավելագույնը՝ 20 միավոր), որը բերվում է 10 միավորանոց համակարգի:

Դրական են համարվում 6 (վեց) և ավելի միավորները:

Աշխատանքի կատարման համար հատկացվում է 90 րոպե:

ԹԵՍՏ 1

(նմուշ)

1-10-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանի համարը վերցրո՛ւ շրջանակի մեջ:

1. Տրված թվերից ո՞րն է պարունակում է 5 հազարյակ, 2 հարյուրյակ և 3 միավոր:

1) 5032 2) 5203 3) 5230 4) 5023

2. Ինչպե՞ս կփոխվի թվերի գումարը, եթե գումարելիներից մեկը մեծացնենք 3-ով:

1) կմեծանա 3 անգամ
2) կփոքրանա 3 անգամ
3) կմեծանա 3-ով
4) կփոքրանա 3-ով

3. Որքանո՞վ կմեծանա եռանիշ թիվը, եթե նրա գրությանը ձախից կցագրենք «երեք» թվանշանը:

1) 13-ով 2) 30-ով 3) 300-ով 4) 3000-ով

4. Տրված թվանշաններից ընտրի՛ր այն թվանշանը, որը տեղադրելով աստղանիշի փոխարեն՝ կստանաս ճիշտ անհավասարություն. 2 տ 570 կգ < 2 տ 5* 0 կգ

1) 5 2) 6 3) 7 4) 8

5. Ո՞ր շարքում գրված բոլոր թվերն են բաժանվում և՛ 2-ի, և՛ 5-ի:

1) 125, 250, 4380, 5285
2) 90, 340, 2550, 3190
3) 512, 920, 1375, 5260
4) 62, 158, 864, 3520

6. Արտահայտի՛ր 250000 մ-ը կիլոմետրերով:

1) 25 կմ 2) 250 կմ 3) 2500 կմ 4) 25000 կմ

7. Քանի՞ րոպե է $\frac{1}{3}$ ժամը:

1) 10 ր 2) 20 ր 3) 30 ր 4) 40 ր

8. Թվային առանցքի վրա տրված են D(4) և C(11) կետերը: Գտի՛ր DC հատվածի երկարությունը:

1) 11 2) 7 3) 4 4) 15

9. Տետրն ունի 12 էջ: Գայանեն գրել է տետրի էջերի $\frac{1}{4}$ -ի վրա: Քանի՞ էջ է մնացել այդ տետրում գրելու:

1) 3 2) 6 3) 8 4) 9

10. Ո՞ր շարքում են թվերը դասավորված նվազման կարգով:

1) 199, 294, 5617, 7318
2) 7318, 5617, 294, 199
3) 7318, 5617, 199, 294
4) 199, 294, 7318, 5617

11-15-րդ առաջադրանքների ճիշտ պատասխանը գրի՛ր յուրաքանչյուր առաջադրանքից հետո նշված տեղում:

11. Կատարի՛ր բաժանում մնացորդով, որպես պատասխան գրի՛ր մնացորդը:

457 : 3

Պատ.՝_____

12. Գտի՛ր 506 և 442 թվերի տարբերության և 8-ի քանորդը:

Պատ.՝_____

13. Հաշվի՛ր 618 .***** 5 – 8491 : 7 + 123 արտահայտության արժեքը:**

Պատ.՝_____

14. Տրված թվերից հետո գրի՛ր ևս մեկ թիվ ըստ օրինաչափության:

9, 20, 42 , 86, ...

Պատ.՝_____

15. Աստղանիշների փոխարեն գրի՛ր բաց թողած թվանշանները, որպես պատասխան գրի՛ր քանորդը:

```
_4 2 4 0 | * 0
 4 *     | 2*2
 -------
  _ * 4
    2 *
   -----
   _ * 0
     4 0
    -----
       0
```

Պատ.՝_____

16-17-րդ առաջադրանքների լուծման ամբողջ ընթացքը մանրամասն ու հիմնավորված ներկայացրո՛ւ առաջադրանքներից հետո նշված տեղում:

16. Ամառային արձակուրդի օրերին Անահիտը կարդաց երեք գիրք. առաջինն 87 էջանոց էր, երկրորդի էջերը 5 անգամ շատ էին առաջինի էջերից, իսկ երրորդի էջերը 174-ով քիչ էին երկրորդի էջերից: Քանի՞ անգամ են երրորդ գրքի էջերն առաջին գրքի էջերից շատ:

Պատ.՝_____

17. Քառակուսի հողամասի երեք կողմերը շրջապատված են 45 մ երկարություն ունեցող ցանկապատով: Գտի՛ր այդ հողամասի մակերեսը:

Պատ.՝_____

ՓՈԽԱԴՐԱԿԱՆ

4-րդ դասարան

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՈՒ

գիտելիքների ստուգման ուղեցույց և թեստի նմուշ
(ռուսերենով ուսուցմամբ 4-րդ դասարանների համար)

Назначение экзаменационной работы - оценить подготовку выпускников начальных классов по русскому языку с целью их итогового оценивания.

Характеристика структуры и содержания экзаменационной работы

Экзаменационная работа по русскому языку состоит из трёх частей, которые последовательно выполняется учениками.

Первая часть состоит из пяти заданий с коротким ответом. На основе прочитанного текста выполняются задания. За каждый правильный ответ даётся 1 балл.

Вторая часть состоит из одиннадцати заданий с выбором ответа. За каждый правильный ответ даётся 1 балл.

Третья часть состоит из двух заданий с коротким ответом. За каждый правильный ответ даётся 2 балла.

Распределение заданий по содержательным разделам учебного предмета "Русский язык"

- Фонетика. Орфоэпия. Интонация.
  Гласные и согласные звуки. Ударение.
- Состав слова и словообразование
  Основа слова и окончание. Корень, приставка, суффикс. Однокоренные слова.
  Различие однокоренных слов и форм одного и того же слова.
- Лексика. Фразеология.
  Синонимы, антонимы, омонимы. Прямое и переносное значение слова.
- Грамматика
- Морфология
  Имя существительное (существительные одушевлённые и неодушевлённые; род, число, падеж, окончание).
  Имя прилагательное (число, род, склонение, окончание).
  Местоимение (личные местоимения; склонение личных местоимений).
  Глагол (неопределённая форма глагола, время глагола, спряжение глагола).
- Предложение (главные и второстепенные члены предложения; однородные члены предложения; простые и сложные предложения).

Система оценивания отдельных заданий и работы в целом.

Максимальная сумма, которую может получить экзаменуемый, правильно выполнивший задание экзаменационной работы - 20 баллов.

Таблица оценивания

ԹԵՍՏ
(նմուշ)

I. Прочитайте текст и ответьте на вопросы, помещённые после текста.

Лесная столовая

(1).Ребята с осени запаслись желудями, шишками ели, семенами березы и ольхи.

(2).Кормушку повесили они у самой опушки.(3)Установили мальчики дежурство и в любую погоду по очереди навещали пернатых друзей. (4).Приходили к кормушке и зайцы.(5) Об этом ребята узнавали по следам. (6)У кормушки можно было увидеть и белку.(7) Школьники всегда были рады такой встрече.

1. Напишите номер предложения, в котором есть однородные члены. _____

2. Из (4) предложения выпишите подлежащее. _____

3. Из (7) предложения выпишите существительное множественного числа.

_____

4. Из (2) предложения выпишите существительное В.п ед.числа._____

5. Указать номер предложения, в котором есть однородные сказуемые._____

II. 6. Сколько слогов в слове селёдка?

1) два 3) четыре
2) три 4) один

7. Найдите слово, в котором пропущена буква -а-.

1) м...лчит 3) к...рмит
2) ш...гает 4) м...лодой

8. В каком ряду одно слово лишнее:

1) мяч, голубь, огурец
2) бегать, читать, работа
3) красивый, прекрасный, золотой
4) добывать, узнавать, хотеть

9. В каком ряду все существительные женского рода?

1) кукла, берёза, дядя
2) игра, дорога, солнце
3) сорока, ворона, ласточка
4) роза, звезда, рыбак

10. Какое существительное употребляется только во множественном числе?

1) карандаши 3) ручки
2) ножницы 4) яблоки

11. В каком ряду все прилагательные имеют окончание -о-.

1) бел..е покрывало, весел...я мелодия, лесн..е озеро
2) красн...я кровь, зелен..й луг, желт..е солнце
3) больш..е счастье, огромн..е количество, весел..е детство
4) тяжёл...я сумка, крут..й берег, длинн..е волосы

12. В каком словосочетании верно определен падеж имени прилагательного?

1) о пасмурной погоде (П.п.)
2) по зеркальной воде (П.п.)
3) белой берёзой (Д.п.)
4) о нижних полках (Т.п.)

13. Выбери правильное высказывание.

1) имена прилагательные не изменяются по родам
2) имена прилагательные согласуются с именами существительными в роде, числе и падеже
3) имена прилагательные не изменяются по падежам
4) имена прилагательные имеют три склонения

14. В словосочетании найди прилагательное, в котором нужно дописать окончание -ем-.

1) со старш... братом
2) в соснов... лесу
3) о зимн... вечере
4) к дальн... станции

15. Какой из глаголов относится к первому спряжению?

1) владеть 3) смотреть
2) видеть 4) обидеть

16. Выберите глагол настоящего времени

1) побежим 3) буду учиться
2) читаю 4) поиграл

III. Определите падежи местоимений, рядом запишите начальную форму этого местоимения.

17. к тебе _____

18. над нами _____

ԷՔՍԿՈՒՐՍԻԱ ԴԵՊԻ ԱՄԱՐԱՍ

Ճշմարիտ է ասված, որ հայրենասիրությունը սկսվում է հայրենագիտությունից, իսկ այդ սերը հետո դառնում է աշխարհընկալման ազնիվ խառնարան:

Այդ նպատակին էր ուղղված Ստեփանակերտի հ.12 հիմնական դպրոցի ուսուցչական կոլեկտիվի և աշակերտների համատեղ ջանքերով Ամարաս կազմակերպված էքսկուրսիան:

Գարունը ջահել գույներով վառվում էր դրսում, Արցախը վերածվել էր պերճաշուք դրախտավայրի, ամենուր լսվում էին երգեցիկ թռչունների հոգեպարար երգերը:

Ուխտավորներիս խումբը ճանապարհ ընկավ... Շատերն առաջին անգամ էին գնում Ամարաս...

Աշակերտները նախապես տեղեկացվել էին, որ 4-րդ դարի սկզբին Գրիգոր Լուսավորիչն Արցախի Հաբանդ գավառում՝ Խազազի և Լուսավորչի ցածրադիր սարերի միջև ընկած գոգավորությունում, հիմնում է Ամարասի վանքը, որտեղ Մաշտոցը 5-րդ դարում բացում է դպրոց... Եվ Արցախում հայ մանուկները սկսում են սովորել հայոց տառերը, օծվում հայապաշտպան ջրով...

Հեռվից երևաց եկեղեցու զանգակատունը, շողշողաց մոր ծիծաղի քնքուշ ու սիրագորով փայլատակումներով:

Տեղ հասանք: Քայլում էինք եկեղեցու բակով, հայացքով պեղում ամեն որմ ու խորշ, ճգնում հասկանալ յուրաքանչյուր փորագրության իմաստ:

Մտանք եկեղեցի: Երկյուղածությամբ մոմեր վառեցինք, ու ծայր առավ մեր հոգու մրմունջը.

Հա՜յր մեր, որ յերկինս ես...

Աստիճաններով իջանք ավագ խորանի ներքո Սուրբ Գրիգորիսի գերեզմանի վրա Վաչագան 3-րդ Բարեպաշտի կառուցած մատուռը. զգացողությունը խորհրդավոր էր, տպավորիչ ու երևակայությունը գրգռող: Մեր առջև շնչավորվեց անցյալը: Ահա գետնուղին, որ բացվում է հինգ հարյուր մետր եկեղեցուց հեռու, գետի վրա: Ահա սևասքեմ հոգևորականները, որ մի կողմ դրած իրենց լուսավոր գրիչները, սրերը ձեռքներին, աճապարում են դեպի գետնուղի, որպեսզի դրսից հանկարծակիի բերեն թշնամուն:

Մտանք շինության այն մասը, որտեղ Մեսրոպ Մաշտոցը հայ մանուկներին ուսուցանում էր հայոց գրերը... Կամարաձև առաստաղին երևում էին հայոց տառերը: Այստեղ հայ մանուկները խոնարհաբար հեգում էին՝ ա՜յբ, բե՜ն, գի՜մ, դա՜...

Եվ եկեղեցու զանգերի ծորուն հնչյունները, այդ կանչերով բեռնավորված, թռչում էին դեպի ապագա՝ իրենց հետ տանելով մեծ խորհուրդ՝ հայը հայ է մնալու...

Մենք նորից վերագնահատեցինք պատմական անցյալի այդ լուսավոր պահը: Իրոք, տառերի գյուտի շնորհիվ ստեղծվեց ոչ միայն հայոց դպրություն, հայոց գիտություն ու հայոց պատմություն, այլև օտար վտանգների դեմ միասնական մի ժողովուրդ, որի դեմ այլևս անզոր էին բոլոր զավթիչները՝ իրենց զենքով ու զորքով:

Մի լուսավոր գիծ մեզ կապել էր 5-րդ դարի մեր պատմության ճակատագրական դեպքերին: Վերադարձանք հոգեպես հարստացած...

Նարինե ՀԱՅՐԻՅԱՆ
Ստփ. հ.12 հիմն. դպրոցի
կազմակերպիչ

Շնորհավորանք

ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԽԱՆԴԱՎԱՌ



Մեր գործընկերուհին 60 տարեկան է, և մենք տեսնելով նրա երիտասարդական արվյունով աշխատանքը, դժվարանում ենք հավատալ, որ նա իր ուսերին կրում է չորս տասնամյակների մանկավարժական գործունեության պատվավոր բեռը: Փորձառու մանկավարժն իր աշխատանքով խանդավառվելը կապում է աշխատասիրության և սաների նկատմամբ ունեցած սիրո հետ: «Չգտեք շատ աշխատել աշակերտների հետ, որպեսզի ժամանակ չունենաք ծերանալու»,- ահա հմուտ մանկավարժի նշանաբանը:

Իր մանկավարժական գործունեությունը սկսել է դասվարի աշխատանքից: Աշխատել է դպրոցի բոլոր օղակներում՝ մինչև տնօրեն: Ունենալով պարտքի և պատասխանատվության բարձր զգացում՝ նա սիրով է կատարել իր պարտականությունները՝ շահելով մանկավարժական կոլեկտիվի, աշակերտների և ծնողների հարգանքը: Քառասուն տարիների ընթացքում քանի՜-քանի մատաղ սերունդ է ինքնության կոչել, քանի՜ երեխաներով ամուր հենարան դարձել...

Երբ արյունով ներկվեց Արցախի հողը, նա իր հայրենակիցների հետ էր: Աշխատում էր Խնկավանի 8-ամյա դպրոցում՝ որպես դասվար: Մոխրացած գյուղն ուներ բարեգութ մանկավարժի կարիք: Հենց Նագրաֆին նա Ասրյանի նախաձեռնությամբ կրկին իր դռները բացեց փյունիկի պես վերակենդանացող Խնկավանի կրթօջախը: Նա տնօրինեց դպրոցի ճակատագիրը, իսկ աշակերտների մեծ մասը հենց նահատակների զավակներ էին՝ կորստի ցավից կծկված, տագնապն աչքերում...

2002թ. փետրվարից Գետավանի միջնակարգ դպրոցի տնօրենն էր: Նույնպիսի եռանդով նա գործի լծվեց նոր կրթօջախում՝ նվիրաբերելով բոլոր կարողությունները:

Ն. Ասրյանը չորս զավակների մայր է: Նրանք եղել են դպրոցի լավագույն սովորողները: Այսօր բոլորն էլ ունեն իրենց ընտանիքները, աշխատում են արցախաշինության կարևոր օղակներում:

Ասում են՝ իսկական մանկավարժին տեսնելու համար անպայման չէ ներկա լինել նրա դասին: Պարզապես բավական է խորը նայել նրա թողարկած աշակերտների աչքերի մեջ ու նրանցում կարդալ ամեն ինչ՝ և կստանաս որոնածդ:

Գետավանի մանկավարժական, աշակերտական և ծնողական կոլեկտիվները շնորհավորում են վաստակաշատ դասվարին՝ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ, մաղթում երջանկություն, առողջություն, ուժ ու եռանդ և նորանոր հաջողություններ Արցախի համար լիարժեք, բազմաշնորհ սերունդներ պատրաստելու գործում:

Մարտակերտի շրջանի Գետավանի
միջն. դպրոցի
մանկավարժական կոլեկտիվ

ԿԱՐԳ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարության 2012 թվականի
մայիսի 14 -ի N 301 - Ն որոշման

ԿԱՐԳ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՈՒՀԵՐՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՏԵՂԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ (ԸՍՏ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերի (այսուհետ՝ բուհեր) ընդունելության գործընթացը, որը ներառում է բուհերի մասնագիտությունների հայտագրումը, ընդունելության քննությունների կազմակերպումը, անցկացումը, ընդունելության քննությունների արդյունքների բողոքարկումը, ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա բուհերի ընդունելության մրցույթի անցկացումը:

2. Բուհերն առկա ուսուցմամբ ընդունելությունը կատարում են տվյալ ուսումնական տարվա համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկի համաձայն:

3. Բուհեր կարող են ընդունվել միջնակարգ, նախնական մասնագիտական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող անձինք (այսուհետ՝ շրջանավարտ)՝ առանց տարիքի սահմանափակման:

4. Օտարերկրյա քաղաքացիները (այսուհետ՝ օտարերկրացիներ) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բուհեր կարող են ընդունվել համաձայն սույն կարգի (ընդհանուր հիմունքներով) կամ ըստ ուսումնական հաստատություններում օտարերկրացիների ընդունելության կարգի:

5. Բուհեր ընդունվելու համար տվյալ ուսումնական տարվա և նախորդ տարիների շրջանավարտները (այսուհետ՝ դիմորդ) հանձնում են ընդունելության քննություններ: Ընդունելության քննություններն անցկացվում են քննական կենտրոններում: Քննական կենտրոններում պարտադիր է բժշկի ներկայությունը:

6. Ընդունելության քննությունները միասնական, կենտրոնացված և ներբուհական քննություններն են: Ընդունելության քննությունները և ըստ բուհերի մրցույթը կազմակերպում և անցկացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ գնահատման և թեստավորման կենտրոն):

7. Միասնական քննություններն անցկացվում են գրավոր, թեստերի միջոցով: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ամբողջ տարածքում դիմորդները յուրաքանչյուր առարկայի միասնական քննությունը հանձնում են միևնույն օրը: Դիմորդները միասնական քննությունները հանձնում են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաներից:

8. Միասնական քննություններն անցկացվում են երկու փուլով՝ հիմնական և լրացուցիչ: Հիմնական փուլի միասնական քննությունները տվյալ տարվա փետրվարի 1-ից մինչև մարտի 1-ը ընկած ժամանակահատվածում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտող և նախորդ տարիների շրջանավարտ դիմորդների կողմից հայտագրվող և տվյալ տարվա հունիսին դիմորդների կողմից հանձնվող միասնական քննություններն են: Լրացուցիչ փուլի միասնական քննությունները տվյալ տարվա հունիսի 24-ից հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում դիմորդների կողմից հայտագրվող և տվյալ տարվա հուլիսին դիմորդների կողմից հանձնվող քննություններն են:

9. Միասնական քննությունների տևողությունն է՝

1) «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն» առարկաների քննությունները՝ 180 րոպե.

2) «Օտար լեզու» առարկայի քննությունը՝ 150 րոպե:

10. Կենտրոնացված քննություններն այն քննություններն են, որոնք հնարավոր չէ անցկացնել թեստերի միջոցով՝ ելնելով տվյալ քննական առարկաների առանձնահատկություններից:

11. Կենտրոնացված քննություններն են՝ «Ստեղծագործական մրցույթ» գրավոր քննությունը և «Նախնական զինվորական պատրաստություն» բանավոր քննությունը:

12. Կենտրոնացված քննությունների տևողությունն է՝

1) գրավոր («Ստեղծագործական մրցույթ») քննությունը՝ 240 րոպե.

2) բանավոր քննությունների ժամանակ յուրաքանչյուր դիմորդին քննելու առավելագույն ժամանակը 30 րոպե է:

13. Բուհերի ընդունելության միասնական և կենտրոնացված քննությունները կազմակերպվում են Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված առարկայական ծրագրերով, հանրակրթական ուսումնական հաստատություններում պարտադիր օգտագործման երաշխավորված դասագրքերով և խնդրագրքերով: Քննական առաջադրանքները և գիտելիքների գնահատման չափանիշները սահմանում է գնահատման և թեստավորման կենտրոնը:

14. Ներբուհական են՝

1) Արցախի պետական համալսարանի «Կերպարվեստ և գծագրություն» մասնագիտության մասնագիտական առարկաների քննությունները և «Նախազորակոչային և ֆիզիկական պատրաստություն» մասնագիտության «Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն» քննությունը.

2) Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի «Ճարտարապետություն և դիզայն» մասնագիտության «Նկարչություն» և «Գծագրություն» առարկաների քննությունները.

3) Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի «Նախազորակոչային և ֆիզիկական պատրաստություն» մասնագիտության «Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն» քննությունը.

4) Ստեփանակերտի «Գյուրջյան» կիրառական արվեստի ինստիտուտի «Հագուստի մոդելավորում» և «Դիզայն» մասնագիտությունների մասնագիտական առարկաների քննությունները:

15. Ներբուհական քննություններն անցկացվում են սույն կարգի 14-րդ կետում նշված՝ բուհերի կողմից մշակված և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված մասնագիտական ծրագրերով: Քննական առաջադրանքները և գիտելիքների գնահատման չափանիշները սահմանում է գնահատման և թեստավորման կենտրոնը:

16. Սույն կարգի համաձայն բուհերում ընդունելությունը կատարվում է՝

1) պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (այսուհետ՝ անվճար)՝ ըստ մասնագիտությունների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված տեղերի չափաքանակների.

2) բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (այսուհետ՝ վճարովի)՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության սահմանած տեղերի:

17. Ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա անվճար և վճարովի ուսուցմամբ մրցույթների արդյունքները հաստատելու, արտոնություն ունեցող դիմորդների ցուցակներն ըստ մասնագիտությունների հաստատելու, անվճար և վճարովի ուսուցման համակարգում թափուր և պահուստային տեղերը վերաբաշխելու նպատակով ստեղծվում է հանրապետական ընդունող հանձնաժողով:

18. Հանրակրթական ուսումնական հաստատությունների այն շրջանավարտները, որոնց ատեստատում կամ համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու» առարկան ատեստավորված չէ, ընդունելության քննությունները միայն լրացուցիչ փուլում կարող են հանձնել ռուսերեն թարգմանությամբ՝ բացառությամբ «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն» և մյուս օտար լեզուների քննությունների:

19. Սույն կարգի պահանջները չեն տարածվում այն պետական բուհերի վրա, որոնք իրականացնում են զինվորական, ոստիկանական մասնագիտական կրթական ծրագրեր:

II. ՄԻԱՍՆԱԿԱՆ, ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱԳՐՈՒՄԸ

20. Միասնական, կենտրոնացված քննության դիմում-հայտերը լրացնելը, ընդունելը և մուտքագրելը՝

1) դիմորդը միասնական, կենտրոնացված քննությանը մասնակցելու համար լրացնում է միասնական, կենտրոնացված քննության դիմում-հայտ (այսուհտ՝ քննության դիմում-հայտ), իսկ քննության դիմում-հայտը փոփոխելու, ճշգրտելու և հաստատելու համար լրացնում է ցուցակ: Քննության դիմում-հայտի և ցուցակի ձևերը հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը.

2) գնահատման և թեստավորման կենտրոնը տվյալ տարվա հունվարի 20-ից առնվազն հինգ անգամ զանգվածային լրատվության միջոցներով (որից երկու անգամը՝ առնվազն 1000 օրինակ տպաքանակ ունեցող թերթերում) հրապարակում է հայտարարություն, որում պարտադիր նշվում են քննության դիմում-հայտերի ընդունումն սկսելու և ավարտելու ժամկետները, ընդունող հանրակրթական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ դպրոց) անվանումները.

3) դիմորդները քննությանն առնչվող հարցերի մասին տեղեկատվություն կարող են ստանալ դպրոցներից, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերի և Ստեփանակերտի քաղաքապետարանի աշխատակազմերի կրթության բաժիններից (այսուհետ՝ կրթության բաժիններ), գնահատման և թեստավորման կենտրոնից՝ անհրաժեշտ դեպքում էլեկտրոնային կամ համացանցային կայքի միջոցով.

4) դպրոցը կրթության բաժիններից ու գնահատման և թեստավորման կենտրոնից ստանում և դիմորդներին է տրամադրում քննությունների դիմում-հայտերը.

5) դիմորդը քննության դիմում-հայտին կցում է անձնագրի, դրա բացակայության դեպքում՝ ծննդյան վկայականի պատճենը, մեկ լուսանկար (3x4 սմ չափսի), յուրաքանչյուր քննության մասնակցության համար գնահատման և թեստավորման կենտրոնի համապատասխան հաշվեհամարին փոխանցված 1500 դրամ վճարի անդորրագիրը և ներկայացնում դպրոցի տնօրենին.

6) դպրոցի տնօրենն ստուգում է դիմորդի կողմից քննության դիմում-հայտի ճիշտ լրացված լինելը, պահանջվող փաստաթղթերի առկայությունը և դիմորդին տալիս է ստացական.

7) նախորդ տարիների շրջանավարտների քննությունների դիմում-հայտերի ընդունումը կազմակերպվում է գնահատման և թեստավորման կենտրոնում.

8) միասնական, կենտրոնացված քննությունների հայտագրումը կատարվում է հետևյալ եղանակով՝

ա. էլեկտրոնային փոստ ունեցող դպրոցը դիմորդների տվյալները գնահատման և թեստավորման կենտրոն է ուղարկում էլեկտրոնային կապով,

բ. էլեկտրոնային փոստ չունեցող դպրոցի տնօրենը դիմորդների տվյալները գնահատման և թեստավորման կենտրոն է ուղարկում տարածաշրջանի՝ այդ նպատակով առանձնացված դպրոցի էլեկտրոնային կապի միջոցով.

9) դպրոցը քննության դիմում-հայտերը, անձնագրի կամ ծննդյան վկայականի պատճենը, քննության մասնակցության վճարի անդորրագիրը, անհրաժեշտության դեպքում նաև դիմորդների տվյալներով էլեկտրոնային կրիչները գնահատման և թեստավորման կենտրոն է ուղարկում կրթության բաժինների միջոցով.

10) գնահատման և թեստավորման կենտրոնում քննությունների դիմում-հայտերի ընդունումն սկսվում է տվյալ տարվա փետրվարի 1-ին և ավարտվում տվյալ տարվա մարտի 1-ին.

11) դիմորդի մասին մուտքագրված տվյալների համապատասխանությունը հաստատելու, ճշգրտում, փոփոխություն կատարելու և քննության մասնակիցների ցուցակը վերահաստատելու նպատակով գնահատման և թեստավորման կենտրոնը մինչև տվյալ տարվա մարտի 30-ը կրթության բաժինների միջոցով տվյալներն ուղարկում է դպրոց:

21. Քննության դիմում-հայտում փոփոխություն, ճշգրտում կատարելը կամ քննության նոր դիմում-հայտ ներկայացնելը՝

1) դիմորդը քննության դիմում-հայտում կարող է փոփոխություն, ճշգրտում կատարել կամ քննության նոր դիմում-հայտ ներկայացնել մինչև տվյալ տարվա ապրիլի 5-ը.

2) քննության դիմում-հայտում փոփոխություն, ճշգրտում կատարելու, այն հաստատելու կամ քննության նոր դիմում-հայտ ներկայացնելու համար դիմորդը դիմում է դպրոցի տնօրենին և համապատասխան ցուցակում կատարում փոփոխություն, ճշգրտում: Դպրոցի տնօրենը ճշգրտված, փոփոխված ցուցակները կամ քննության դիմում-հայտերը կնքում և մինչև ապրիլի 10-ը կրթության բաժինների միջոցով ուղարկում է գնահատման և թեստավորման կենտրոն.

3) գնահատման և թեստավոր- ☞ 10

ԿԱՐԳ

9-ման կենտրոնը դիմորդների փոփոխված և քննության նոր դիմում-հայտերի հիման վրա տվյալների բազայում (այսուհետ՝ բազա) կատարում է համապատասխան փոփոխություններ.

4) քննության դիմում-հայտերի տվյալների վերջնական մուտքագրումից հետո գնահատման և թեստավորման կենտրոնը պատրաստում է դիմորդների ցուցակներն ըստ քննական առարկաների և կենտրոնների.

5) հաստատված ցուցակների հիման վրա դիմորդներին տրվում են անցաթղթեր, որոնք գնահատման և թեստավորման կենտրոնը մինչև տվյալ տարվա մայիսի 20-ը ուղարկում է դպրոցներ.

6) անցաթուղթը պարունակում է դիմորդի տվյալները (անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի կամ ծննդյան վկայականի սերիան, համարը, մարզը (շրջանը), դպրոցը, անձնական համարը), լուսանկարը, քննական կենտրոնի գտնվելու վայրը, առարկան, քննության օրը և ժամը.

7) դիմորդն անցաթուղթն ստանում է այն դպրոցից, որտեղ լրացրել է քննության դիմում-հայտ: Անցաթուղթը դիմորդին տրվում է ստորագրությամբ:

III. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԵՐԻ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

22. Դիմորդները կենտրոնացված և ներբուհական քննություններին, ինչպես նաև մասնագիտությունների մրցույթին մասնակցելու համար ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերը հանձնում են այն բուհում, որի մասնագիտությունն ընդունելության դիմում-հայտում հայտագրել են առաջինը:

Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերի դիմորդների ընդունելությունը կազմակերպվում է սույն կանոնների համաձայն, և դիմում-հայտի ու փաստաթղթերի ընդունումն իրականացվում է Արցախի պետական համալսարանում, բացառությամբ՝ Երևանի պետական համալսարանի «032300 Թարգմանչական գործ, անգլերեն և հայերեն լեզուներ» մասնագիտության, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի «031200 Լեզվաբանություն և միջմշակութային հաղորդակցություն, անգլերեն լեզու» մասնագիտության, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայի, Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի և Հայ-ռուսական (սլավոնական) պետական համալսարանի մասնագիտությունների դիմորդների, որոնց փաստաթղթերիընդունումը և ընդունելությունն իրականացվում են վերոնշյալ բուհերում՝՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից տրված երաշխավորագրերի հիման վրա, համաձայն Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բուհերի ընդունելության կարգի, ըստ որի՝ փաստաթղթերի ընդունելությունը կատարվում է տվյալ տարվա մայիսի 5-ից հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում՝ մինչև ժամը 18:00-ն:

23. Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են տվյալ տարվա հունիսի 1-ից մինչև հունիսի 25-ն ընկած ժամանակահատվածում՝ մինչև ժամը 18:00-ն:

24. Օտարերկրացիների, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների, նույն տարվա գարնանային զորակոչից զորացրված դիմորդների, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տվյալ տարվա շրջանավարտների փաստաթղթերն ընդունվում են հունիսի 25-ից հունիսի 30-ը՝ մինչև ժամը 18:00-ն:

25. Դիմում-հայտերի հանձնման ընթացքին հետևելու համար գնահատման և թեստավորման կենտրոնն ուղարկում է դիտորդներ բուհերի ներկայացուցիչներից, որոնց ցանկը բուհի ռեկտորի ներկայացմամբ հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը: Դիտորդները, առանց գործընթացին միջամտելու, իրավունք ունեն իրենց դիտարկումները ներկայացնել գնահատման և թեստավորման կենտրոն:

26. Փաստաթղթերի ընդունման ժամկետը լրանալուց հետո դիմորդների կողմից ներկայացված լրացուցիչ փաստաթղթերը չեն ընդունվում:

27. Ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերն ընդունման ժամկետի ավարտից հետո փոփոխման ենթակա չեն:

28. Բուհի ընդունելության գործընթացը կազմակերպում և իրականացնում է բուհի ընդունող հանձնաժողովը (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով):

29. Ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ռեկտորը (նախագահ), պրոռեկտորը (տեղակալ): Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին, պատասխանատու քարտուղարի տեղակալին (տեղակալներին) և անդամներին նշանակում է ընդունող հանձնաժողովի նախագահը: Ընդունող հանձնաժողովն իր աշխատանքներն իրականացնում է տեխնիկական անձնակազմի միջոցով:

30. Դիմորդը փաստաթղթերը հանձնելու համար տեխնիկական անձնակազմի կողմից ստանում է անհրաժեշտ տեղեկություններ մասնագիտությունների ընտրության մասին, ծանոթանում դիմում-հայտը լրացնելու կարգին:

31. Դիմորդը լրացնում է ընդունելության դիմում-հայտը և ընդունելության համար պահանջվող փաստաթղթերի հետ միասին ներկայացնում ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին:

32. Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը՝

1) ստուգում է զորակոչային տարիք ունեցող արական սեռի դիմորդների զինվորական հաշվառման փաստաթղթի նշումները տարկետման իրավունքի կամ չզորակոչվելու պատճառի վերաբերյալ, ժամկետային զինվորական ծառայության ավարտի մասին տեղեկանքը և թույլատրում ընդունելու փաստաթղթերը.

2) ստուգում է ընդունելության դիմում-հայտը, այն հաստատում ստորագրությամբ, տալիս է ստացական փաստաթղթերն ընդունելու մասին: Դիմորդը, հանձնելով ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերը, ստորագրում է գրանցման մատյանում.

3) դիմորդին հայտնում է քննական թերթիկ ստանալու օրը.

4) ընդունելության դիմում-հայտերն ընդունման հաջորդ օրը հանձնում է գնահատման և թեստավորման կենտրոն՝ գրանցման մատյանում նշելով հանձնման ժամանակը, ընդունելության դիմում-հայտերի, մեդալակիրների, միջազգային մրցույթների հաղթողների և բանակից զորացրվածների թիվը:

33. Ընդունելության դիմում-հայտերի հիման վրա գնահատման և թեստավորման կենտրոնում պատրաստվում են քննական թերթիկներ: Ընդունելության դիմում-հայտերը և քննական թերթիկները գնահատման և թեստավորման կենտրոն հանձնվելուց հետո եռօրյա ժամկետում գնահատման և թեստավորման կենտրոնը դրանք կնքում և վերադարձնում է ընդունող հանձնաժողով: Ընդունելության դիմում-հայտերը և քննական թերթիկները վավերացվում են բուհի կողմից:

34. Քննական թերթիկը դիմորդին հանձնվում է անձնագիրը և ստացականը նրա կողմից ներկայացվելուց հետո, որի համար դիմորդն ստորագրում է մատյանում:

35. Քննական թերթիկը պարունակում է դիմորդի տվյալները՝ անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի կամ ծննդյան վկայականի սերիան, համարը, լուսանկարը, անձնական համարը, պահպանվող միասնական քննությունների ցանկը, կենտրոնացված կամ ներբուհական քննությունները, դրանք հանձնելու օրը և ժամը, հայտագրված մասնագիտությունները, օլիմպիադայի դիպլոմի առկայության փաստը, դիմորդի մեդալակիր լինելու փաստը, ինչպես նաև տեղեկություններ զինվորական ծառայության մասին:

36. Դիմորդը դիմում-հայտի հետ միասին ներկայացնում է՝

1) լուսանկարով տեղեկանք ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից (նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ կամ դիպլոմ).

2) 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի).

3) փաստաթուղթ զինվորական ծառայությանն առնչության մասին (զորակոչային տարիք ունեցող արական սեռի դիմորդներից փաստաթղթերն ընդունվում են զինվորական հաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նշման առկայության դեպքում, իսկ նախկինում առողջական վիճակի կապակցությամբ տարկետում ստացածներից՝ ռազմաբժշկական կենտրոնական հանձնաժողովի նշումների առկայության դեպքում).

4) անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական), անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության կողմից տրվող՝ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ.

5) զինվորական գրքույկ և զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունն անցած լինելու մասին.

6) սույն կարգի 98-րդ և 99-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են տվյալ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր.

7) միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոներ) դիպլոմները.

8) կենտրոնացված և ներբուհական յուրաքանչյուր քննության մասնակցելու, ինչպես նաև փաստաթղթերն ընդունելու և ձևակերպելու համար 1500-ական դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը:

37. Տվյալ ուսումնական տարվա շրջանավարտները, տվյալ տարվա գարնանային զորակոչից զորացրված դիմորդները, օտարերկրացիները, ինչպես նաև միջին մասնագիտական և նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն ստացած դիմորդներն ավարտական փաստաթուղթը (ատեստատ, դիպլոմ) ներկայացնում են մինչև տվյալ տարվա հուլիսի 10-ը: Լրացուցիչ փուլում պետական ավարտական և միասնական քննություններ հանձնող դիմորդները միջնակարգ կրթության մասին ատեստատը բուհի ընդունող հանձնաժողովին են ներկայացնում մինչև տվյալ տարվա հուլիսի 13-ը:

38. Սույն կարգի 98-րդ և 99-րդ կետերով սահմանված արտոնություններից օգտվող դիմորդներն ազատվում են ընդունելության քննությունների վճարից:

39. Ընդունող հանձնաժողովն առանձին սոցիալական խմբերի քաղաքացիների կարող է ազատել կենտրոնացված և ներբուհական քննությունների, ինչպես նաև փաստաթղթերն ընդունելու և ձևակերպելու համար սահմանված վճարից:

40. Գնահատման և թեստավորման կենտրոնն առանձին սոցիալական խմբերի քաղաքացիների կարող է ազատել «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաների միասնական քննությունների վճարից:

41. «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաները մրցութային համարվելու դեպքում գնահատման և թեստավորման կենտրոնը դիմորդին է տալիս վկայագիր, որը դիմորդը, բուհ ընդունվելու դեպքում, համապատասխան բուհ է ներկայացնում մինչև հուլիսի 10-ը:

IV. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅՏԱԳՐՈՒՄԸ

42. Դիմորդներն ընդունելության դիմում-հայտում իրենց ընտրությամբ և ցանկացած հաջորդականությամբ հայտագրում են մասնագիտություններն ըստ ուսուցման անվճար և վճարովի համակարգերի: Համաձայն ընդունելության դիմում-հայտի՝ դիմորդը կարող է մասնակցել մեկ կամ մի քանի բուհերի, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերին՝ մինչև երկու անվճար և մինչև ութ վճարովի մասնագիտությունների մրցույթին՝ հանձնելով այդ մասնագիտությունների քննություններ:

43. Տվյալ տարվա միասնական քննություններին մասնակցած դիմորդները կարող են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաներից ստացած գնահատականները պահպանել միայն հաջորդ տարվա համար: Պահպանելով գնահատականը՝ դիմորդը կարող է նաև վերահանձնել այն և մրցույթին մասնակցել ավելի բարձր գնահատականով: Անբավարար գնահատական ստանալու դեպքում դիմորդը զրկվում է մրցույթին մասնակցելու իրավունքից:

44. Զորակոչային տարիքը լրացած, միասնական քննություններին և մրցույթին մասնակցած, բայց բուհ չընդունված արական սեռի դիմորդները կարող են «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաներից ստացած գնահատականները պահպանել ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո կազմակերպվող ընդունելության քննությունների առաջին մրցույթի համար:

45. Չի թույլատրվում դիմորդի կողմից ներկայացնել մեկից ավելի ընդունելության դիմում-հայտ: Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված տեղերի դիմորդները լրացնում են առանձին դիմում-հայտ, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բուհերի համար ևս դիմում-հայտ ներկայացնելու դեպքում դրանք համարակալվում են ըստ առաջնահերթության: Բազայում նույն դիմորդի՝ մեկից ավելի ընդունելության դիմում-հայտերի առկայության դեպքում տվյալ դիմորդը զրկվում է ընդունելության քննություններին և մրցույթին մասնակցելու իրավունքից:

46. Դիմորդներն ընտրած մասնագիտությունների կրկնվող առարկաների քննությունները հանձնում են մեկ անգամ:

47. Միջնակարգ կրթության ատեստատում կամ համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից գնահատական չունեցող դիմորդները (Ա և Ա+Բ տարբերակները չհանձնած) «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննության փոխարեն կարող են միասնական քննություն հանձնել օտար լեզվից (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն): «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննությանը փոխարինած «Օտար լեզու» առարկան չի կարող համընկնել տվյալ

ԿԱՐԳ

մասնագիտության միասնական քննությունների ցանկում ընդգրկված «Օտար լեզու» առարկայի հետ: Ընդ որում՝

1) «030700-Միջազգային հարաբերություններ», «030600-Լրագրություն», «031000 -Հայոց լեզու և հայ գրականություն», «051000 -Մանկավարժություն և հոգեբանություն», «051100-Մանկավարժություն և մեթոդիկա», «051300-Սոցիալական մանկավարժություն», «032300-Թարգմանչական գործ» մասնագիտությունների դեպքում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննությունը պարտադիր է.

2) «032400-Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտության համար սահմանված «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի միասնական քննության փոխարեն դիմորդները կարող են միասնական քննություն հանձնել «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն) առարկայից:

48. Միջնակարգ կրթության ատեստատում կամ համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից (տարեկան, քննական) գնահատական չունեցող դիմորդները «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայի ոչ մրցութային քննության գնահատականի փոխարեն կարող են օգտագործել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ «Օտար լեզու» (ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն) առարկայի գնահատականը:

49. Համապատասխան ավարտական փաստաթղթում «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից քննական գնահատական չունեցող դիմորդները «Հայոց լեզու և հայ գրականություն» առարկայից ոչ մրցութային քննության գնահատականի փոխարեն կարող են օգտագործել միջնակարգ կրթության ատեստատի «Հայոց լեզու» առարկայի տարեկան գնահատականը:

50. Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի դիմորդներին իրավունք է վերապահվում իրենց ընտրությամբ հանձնելու նշված երեք՝ «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն» մրցութային քննություններից երկուսը:

51. Սույն կարգի 50-րդ կետում նշված մասնագիտությունների համար մրցույթն անցկացվում է դիմորդի կողմից դիմում-հայտում նշված քննությունների հերթականությամբ: Հավասար միավորների դեպքում առավելություն է տրվում դիմում-հայտում առաջինը նշած առարկայի քննական գնահատականին:

V. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԵՐՆ ՈՒՂԵԼԸ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼԸ

52. Դիմորդը կարող է ընդունելության դիմում-հայտում փոփոխություններ կատարել մինչև տվյալ տարվա հունիսի 25-ը՝ ժամը 18:00-ն: Տվյալ տարվա հունիսի 25-ից հետո դիմում-հայտը փոփոխման ենթակա չէ:

53.Օտարերկրացիները, տվյալ ուսումնական տարում օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատություններն ավարտած Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիները, տվյալ տարվա գարնանային զորակոչից զորացրված դիմորդները դիմում-հայտում փոփոխություններ կարող են կատարել մինչև տվյալ տարվա հունիսի 30-ը՝ ժամը 18:00-ն: Տվյալ տարվա հունիսի 30-ից հետո դիմում-հայտը փոփոխման ենթակա չէ:

54. Ընդունելության դիմում-հայտը լրացնելու օրը դիմորդը կարող է անձնագրի և ստացականի առկայության դեպքում հետ վերցնել կամ փոփոխություն կատարել ընդունելության դիմում-հայտում: Իսկ ընդունելության դիմում-հայտը լրացնելու հաջորդ օրվանից սկսած, մինչև ընդունելության դիմում-հայտերի և փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը, դիմորդը կարող է հետ վերցնել կամ փոփոխություն կատարել ընդունելության դիմում-հայտում՝ քննական թերթիկի և ստացականի առկայության դեպքում:

55. Ընդունելության դիմում-հայտը հետ վերցնելու կամ դրանում փոփոխություն կատարելու համար դիմորդը դիմում է ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին: Պատասխանատու քարտուղարն առանձնացնում է դիմորդի անձնական գործը, տալիս վերադարձման թույլտվություն՝ այն վավերացնելով բուհի կնիքով:

VI. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԵՐԻ ՀԱՍՏԱՏԱԳՐՈՒՄԸ

56. Ընդունելության դիմում-հայտերի ընդունման ժամկետի ավարտից հետո ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարն ու գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչն ստորագրում են ընդունելության դիմում-հայտերի բազայի մասին ակտ, որում նշվում են ընդունելության դիմում-հայտերի թիվը, քննությունների թիվը, քննությունների համար վճարված ընդհանուր գումարը, քննությունների վարձից ազատված դիմորդների թիվը:

57. Բազայում կատարվող բոլոր փոփոխությունների և ճշտումների մասին կազմվում է արձանագրություն:

58. Բազան էլեկտրոնային կրիչների տեսքով տվյալ տարվա հունիսի 26-ին հանձնվում է գնահատման և թեստավորման կենտրոն՝ ի պահ:

59. Օտարերկրացիների, օտարերկրյա պետությունների ուսումնական հաստատությունները տվյալ ուսումնական տարում ավարտած՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների և տվյալ տարվա գարնանային զորակոչից զորացրված դիմորդների բազան էլեկտրոնային կրիչների տեսքով տվյալ տարվա հուլիսի 1-ին հանձնվում է գնահատման և թեստավորման կենտրոն՝ ի պահ:

60. Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը դիմորդների արտոնությունները հաստատող փաստաթղթերի կրկնօրինակները մինչև տվյալ տարվա հուլիսի 10-ը հանձնում է գնահատման և թեստավորման կենտրոն:

VII. ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ՝ ԿՈՐՑՐԱԾ ՔՆՆԱԿԱՆ ԹԵՐԹԻԿԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

61.Դիմորդը քննական թերթիկը կորցնելու մասին դիմում է ներկայացնում ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարին, որը դրա մասին անմիջապես զեկուցում է գնահատման և թեստավորման կենտրոնին:

62. Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը գնահատման և թեստավորման կենտրոնից ստանում և 24 ժամվա ընթացքում դիմորդին է տալիս նոր քննական թերթիկ: Նոր քննական թերթիկում քննության օրերը չեն փոխվում՝ բացառությամբ սույն կարգի 64-րդ կետում նշված դեպքերի:

63. Եթե քննական թերթիկը կորել է քննության օրը, դիմորդն այդ քննությունը հանձնում է գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից նոր քննական թերթիկում նշանակված օրը:

64. Տվյալ առարկայի քննությունների վերջին օրը քննական թերթիկը կորցրած դիմորդին թույլատրվում է քննությունը հանձնել անձը հաստատող փաստաթղթի ու գնահատման և թեստավորման կենտրոնի տվյալների բազայի հիման վրա:

VIII. ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

65. Միասնական քննությունների կազմակերպումը՝

1) միասնական քննությունները կազմակերպվում և անցկացվում են միասնական քննական կենտրոններում, որոնց ցանկը մինչև տվյալ տարվա ապրիլի 15-ը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարը (այսուհետ՝ նախարար)՝ գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի ներկայացմամբ.

2) միասնական քննական կենտրոնների ղեկավարների (այսուհետ՝ կենտրոնի ղեկավար) ցանկը մինչև տվյալ տարվա մայիսի 4-ը հաստատում է նախարարը՝ գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի ներկայացմամբ.

3) քննական կենտրոնի ղեկավարը կազմակերպում է քննական գործընթացը տվյալ քննական կենտրոնում՝ սույն կարգի պահանջներին համապատասխան.

4) միասնական քննությունների օրերն ըստ առարկաների հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը: Միասնական քննությունները կազմակերպվում են տվյալ տարվա հունիսի 1-ից մինչև հուլիսի 10-ն ընկած ժամանակահատվածում.

5) միասնական քննության անցկացման գործընթացի մասնակիցներն են կենտրոնի ղեկավարը, նախարարի լիազորը, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը (յուրաքանչյուր 60 դիմորդի համար՝ գնահատման և թեստավորման կենտրոնի մեկ ներկայացուցիչ, վերջին 40 և ավելի դիմորդների դեպքում՝ ևս մեկ ներկայացուցիչ), միասնական քննության ընթացքի կազմակերպիչը (այսուհետ՝ կազմակերպիչ) և պատասխանատու կազմակերպիչը, համակարգչային օպերատորը (այսուհետ՝ օպերատոր) և պատասխանատու օպերատորը, միասնական քննական կենտրոնի հերթապահը (այսուհետ՝ հերթապահ), որոնք իրենց աշխատանքը միասնական քննությունների ընթացքում իրականացնում են գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի կողմից հաստատված աշխատակարգերի համաձայն.

6) միասնական քննական կենտրոնում միասնական քննության ընթացքը կազմակերպում են կազմակերպիչները: Կենտրոնի ղեկավարը յուրաքանչյուր քննասենյակի համար տվյալ քննասենյակի կազմակերպիչներից մեկին նշանակում է պատասխանատու կազմակերպիչ.

7) համակարգչային աշխատանքներն իրականացնում են ուսուցում անցած օպերատորները, որոնց կազմը հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը: Գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը հաստատում է նաև պատասխանատու օպերատորների ցանկը, որոնք իրենց քննական կենտրոնում կազմակերպում են օպերատորների աշխատանքը: Հերթապահների կազմը հաստատում է քննական կենտրոնի ղեկավարը.

8) կազմակերպիչներն ըստ քննական կենտրոնների բաշխվում են քննության նախորդ օրը՝ գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի կազմակերպած վիճակահանության միջոցով: Նույն օրը գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը տվյալ քննական կենտրոնի ղեկավարին է հանձնում քննական կենտրոնի կազմակերպիչների ցուցակը.

9) քննական կենտրոնում քննասենյակները համարակալվում են հերթական համարներով: Քննական կենտրոնի դիմորդները բաժանվում են հերթական թվերով համարակալված խմբերի: Խմբում դիմորդների թիվը չի կարող գերազանցել 20-ը: Յուրաքանչյուր խմբի համար քննասենյակում աշխատանքները համակարգում են 1-ական կազմակերպիչներ.

10) քննական կենտրոնի քննասենյակների մուտքի մոտ նշվում են տվյալ քննասենյակի խմբերի հերթական համարները.

11) քննությունն սկսվելուց 1,5 ժամ առաջ քննական կենտրոնի ղեկավարը սահմանված ձևի արձանագրությունում գրանցում է կազմակերպիչներին, համակարգչային օպերատորներին և հերթապահներին.

12) քննությունն սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ կենտրոնի ղեկավարը գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի ներկայությամբ այն առևտրային բանկերից, որոնք իրականացնում են քննական թեստերի փաթեթների պահեստավորում, ստանում է քննական թեստերի փաթեթները: Կենտրոնի ղեկավարը յուրաքանչյուր քննասենյակի պատասխանատու կազմակերպչին տալիս է տվյալ քննասենյակի խմբերի համար նախատեսված թեստերի պատասխանների ձևաթղթերի (այսուհետ՝ պատասխանների ձևաթուղթ) ծրարները, խմբերի դիմորդների ցուցակները, որից հետո սկսվում է դիմորդների մուտքը քննասենյակներ.

13) պատասխանների ձևաթղթերի ծրարը պարունակում է՝

ա. պատասխանների 20 ձևաթուղթ, որոնք տրվում են դիմորդներին,

բ. պատասխանների լրացուցիչ ձևաթղթեր, որոնք օգտագործվում են պատասխանների ձևաթղթերի խոտանման դեպքերում.

14) յուրաքանչյուր խմբի համար նախատեսվում է պատասխանների լրացուցիչ երկու ձևաթուղթ, որոնք մնում են քննական կենտրոնի ղեկավարի մոտ.

15) հերթապահներին տեղաբաշխում է քննական կենտրոնի ղեկավարը՝ կազմելով համապատասխան արձանագրություն.

16) քննության օրը դիմորդը քննությունն սկսվելուց առնվազն մեկ ժամ առաջ ներկայանում է քննական կենտրոն՝ իր հետ ունենալով անցաթուղթը, անձը հաստատող այն փաստաթուղթը, որը նշված է դիմում-հայտում.

17) դիմորդների մուտքը կենտրոն սկսվում է քննական կենտրոնի ղեկավարի հրահանգով.

18) դիմորդն անձը հաստատող փաստաթուղթը և անցաթուղթը ներկայացնում է հերթապահին և նրա հրահանգով մոտենում օպերատորին: Օպերատորը համադրում է անցաթղթի և դիմորդի մասին բազայի տվյալները, բազայում կատարում նշում դիմորդի՝ քննությանը ներկայանալու մասին, իսկ անցաթղթի վրա գրում խմբի համարը: Հերթապահները, պատերին փակցված լրացուցիչ ուղեցույցները դիմորդներին օգնում են գտնել քննասենյակը և խումբը.

19) դիմորդի մուտքը քննասենյակ կազմակերպվում է ոչ պակաս, քան երկու կազմակերպիչների կողմից: Դիմորդը քննասենյակում չի կարող ունենալ այլ առարկաներ՝ բացառությամբ անձը հաստատող փաստաթղթի և անցաթղթի.

20) դիմորդը մոտենում է իր խմբի կազմակերպչին և ստանում պատասխանների ձևաթուղթը, ցուցակում ստորագրում իր անվան դիմաց և նստում ըստ վիճակահանության արդյունքի՝ համապատասխան նստարանին.

21) դիմորդներին քննասենյակում տեղավորելուց հետո քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը քննական կենտրոնի ղեկավարից գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի ներկայությամբ, ստանալով խմբերի թվին համապատասխան թեստերի փաթեթները, դրանք բերում է քննասենյակ: Քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը թեստերի փաթեթները ցուցադրում է դիմորդներին՝ նրանց ուշադրությունը հրավիրելով փաթեթների փակ և ամբողջական լինելու հանգամանքի վրա.

22) քննությունն սկսվելուց 20 րոպե առաջ գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը կամ պատասխանատու կազմակերպիչը դիմորդների համար ընթերցում է քննասենյակում քննության անցկացման կարգը, տեղեկացնում բողոքարկման տեսակների և կարգի մասին: Դիմորդները պատասխանների ձևաթղթերում լրացնում են իրենց անունը, ազգանունը և անցաթղթերի անձնական համարները: Այնուհետև կազմակերպիչները մոտենում են դիմորդներին, կտրում պատասխանների ձևաթղթերի անձնական տվյալները պարունակող մասերը, հաշվում և հանձնում քննասենյակի պատասխանատու կազմակերպչին.

23) քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը պատասխանների ձևաթղթերի անձնական տվյալները պարունակող մասերն առնվազն երկու կազմակերպչի մասնակցությամբ հաշվում, ստուգում, այնուհետև տեղավորում է այդ նպատակով ստացված ծրարում՝ ծրարի վրա գրելով քննասենյակի, խմբերի համարները և կտրված մասերի թիվը:

66. Միասնական քննության

☞12

ԿԱՐԳ

11 ☜ անցկացումը՝

1) թեստերի փաթեթները բացելու համար պատասխանատու կազմակերպիչը հրավիրում է առաջին նստարաններին նստած դիմորդներին (նրանցից որևէ մեկի բացակայության դեպքում՝ հաջորդ դիմորդին): Փաթեթների բացման վերաբերյալ արձանագրությունների համապատասխան տողում խմբերի կազմակերպիչները կատարում են նշում, որի դիմաց ստորագրում է փաթեթը բացած դիմորդը.

2) խմբերի կազմակերպիչները բաժանում են թեստերը: Դիմորդը, ստանալով իր թեստը, ստուգում է այն և թեստի շապիկի համապատասխան մասում գրում իր խմբի և նստարանի համարները: Պատասխանատու կազմակերպիչը հայտարարում է քննության սկիզբը, տևողությունը և գրատախտակին նշում քննության սկիզբը և ավարտը.

3) միասնական քննությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բոլոր քննական կենտրոններում սկսվում է նույն ժամին՝ 9:30-ին.

4) ավելորդ (չօգտագործված, խոտանված) քննական թեստերի առկայությունը քննասենյակի պատասխանատու կազմակերպիչն արձանագրում է, հաշվարկում և հանձնում է քննական կենտրոնի ղեկավարին.

5) միասնական քննության ընթացքում արգելվում է խոսելը, տեղը փոխելը, թեստերը և պատասխանների ձևաթղթերը փոխանակելը, արտագրելը, բջջային հեռախոսներից կամ կապի այլ միջոցներից օգտվելը.

6) միասնական քննության ընթացքում քննասենյակից դիմորդը կարող է դուրս գալ միայն անհրաժեշտության դեպքում՝ զուգարանից օգտվելու կամ վատառողջության պատճառով՝ քննասենյակի պատասխանատու կազմակերպչի կամ գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի թույլտվությամբ և հերթապահի ուղեկցությամբ.

7) քննասենյակում թեստի բովանդակության վերաբերյալ դիմորդի հարցերը չեն քննարկվում.

8) միասնական քննության ընթացքում ի հայտ եկած տպագրական կամ այլ թերություններ ունեցող թեստերն ու պատասխանների ձևաթղթերը նորով փոխարինում է քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը՝ կենտրոնի ղեկավարի, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի ներկայությամբ՝ արձանագրելով այդ փաստը: Թերություններ ունեցող պատասխանների ձևաթղթերի և թեստերի վրա գրվում է՝ «Խոտանված է».

9) դիմորդների կողմից քննական առաջադրանքների կատարման ժամանակ քննասենյակներում, բացի պատասխանատու կազմակերպչից և կազմակերպիչներից, կարող են ներկա գտնվել նախարարի լիազորը, քննական կենտրոնի ղեկավարն ու գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը.

10) միասնական քննության ավարտից 30 րոպե առաջ քննասենյակի պատասխանատու կազմակերպիչը դիմորդների ուշադրությունն է հրավիրում ժամանակի վրա և հիշեցնում առաջադրանքների պատասխանները թեստերից պատասխանների ձևաթղթերի վրա անցկացնելու մասին.

11) կազմակերպիչները քննության ամբողջ ընթացքում պետք է մնան քննասենյակներում՝ իրենց հատկացված տեղերում: Նրանց արգելվում է օգտվել բջջային հեռախոսներից և կապի այլ միջոցներից: Սույն պահանջների խախտման մասին գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը տեղյակ է պահում կենտրոնի ղեկավարին, որն էլ կարող է հեռացնել կազմակերպչին քննասենյակից: Կազմակերպչին քննասենյակից հեռացնելն արձանագրվում և ստորագրվում է գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի և կենտրոնի ղեկավարի կողմից.

12) գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը կամ պատասխանատու կազմակերպիչը իրավունք ունի մեկ անգամ նախազգուշացնելու դիմորդին, արձանագրելու նախազգուշացումը, կրկնվելու դեպքում, կենտրոնի ղեկավարին տեղեկացնելով, դիմորդին հեռացնելու քննասենյակից, եթե նա առանց թույլտվության դուրս է եկել քննասենյակից, խոսել է այլ դիմորդների հետ, տեղը փոխել է: Եթե դիմորդն օգտվել է բջջային հեռախոսից, կապի այլ միջոցներից, արտագրել է, ապա գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը տեղեկացնում է կենտրոնի ղեկավարին և խախտում թույլ տված դիմորդին հեռացնում քննասենյակից.

13) հեռացվող դիմորդից վերցվում է թեստը, դիմորդի պատասխանների ձևաթղթի վրա գրվում է՝ «Հեռացված է քննությունից», տվյալ խմբի և քննասենյակի արձանագրությունների մեջ գրանցվում է այդ փաստը, հեռացվողի անունը, ազգանունը, հեռացման պատճառը.

14) դիմորդի՝ քննությունից հեռացվելու փաստը դիմորդի բողոքի հիման վրա քննարկվում է նախարարի հրամանով ստեղծված բողոքարկման հանձնաժողովում, որն ընդունում է որոշում դիմորդին լրացուցիչ քննությանը թույլատրելու մասին.

15) միասնական քննության ընթացքում հիվանդության պատճառով (բժշկի թույլտվությամբ) քննությունն ընդհատած դիմորդից վերցվում է թեստը, պատասխանների ձևաթղթի վրա գրվում է՝ «Քննությունն ընդհատել է հիվանդության պատճառով», տվյալ խմբի և քննասենյակի արձանագրություններում գրանցվում է այդ փաստը՝ նշելով քննությունն ընդհատած դիմորդի անունը, ազգանունը.

16) հարգելի պատճառով միասնական քննությանը չներկայացած (փաստաթղթով հիմնավորված), հիվանդության պատճառով միասնական քննությունն ընդհատած, ինչպես նաև բողոքարկման հանձնաժողովի որոշմամբ լրացուցիչ միասնական քննությանը թույլատրված դիմորդը քննություն է հանձնում լրացուցիչ միասնական քննության օրը:

67. Միասնական քննության ավարտը՝

1) քննության համար նախատեսված ժամանակից շուտ ավարտած (ընդհատած) դիմորդը գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի թույլտվությամբ մոտենում է օպերատորին, պատճենահանում պատասխանների ձևաթուղթը, այնուհետև մոտենում իր խմբի կազմակերպչին: Թեստը և պատասխանների ձևաթուղթը դիմորդը կազմակերպչին է հանձնում՝ ստորագրելով իր խմբի դիմորդների ցուցակի համապատասխան տեղում: Կազմակերպիչը համեմատում է թեստի և պատասխանների ձևաթղթում նշված թեստի համարները: Պատասխանների ձևաթղթի պատճենահանված օրինակը դիմորդը պահում է իր մոտ.

2) քննության համար հատկացված ժամանակի ավարտին կազմակերպիչները, յուրաքանչյուր դիմորդի պատասխանների ձևաթուղթը դնելով թեստի մեջ, հավաքում են սեղաններից, այնուհետև ընթերցում են թեստի վրա գրված սեղանի համարը, համապատասխան դիմորդը մոտենում է կազմակերպչին, վերցնում իր պատասխանների ձևաթուղթը, պատճենահանում, պատասխանների ձևաթուղթը հանձնում իր խմբի կազմակերպչին, ստորագրում իր անվան դիմաց դիմորդների ցուցակում և դուրս գալիս քննասենյակից: Այդ ընթացքում մյուս դիմորդները մնում են իրենց տեղերում՝ մինչև պատճենահանման իրենց հերթը հասնելը.

3) քննության ավարտից հետո քննասենյակի յուրաքանչյուր խմբից վերջինը դուրս եկող դիմորդի ներկայությամբ խմբի կազմակերպիչը պատասխանների ձևաթղթերը (օգտագործված, չօգտագործված, խոտանված), քննության ընթացքում հիվանդացած դիմորդին տրված բժշկի տեղեկանքը, դիմորդին քննությունից հեռացնելու, ինչպես նաև խոտանված ձևաթղթի մասին արձանագրությունները, խմբի դիմորդների ցուցակը հաշվում և հանձնում է պատասխանատու կազմակերպչին.

4) քննության ժամանակի ավարտից հետո ոչ ուշ, քան 30 րոպեի ընթացքում պատասխանատու կազմակերպիչը լրացնում է տվյալ քննասենյակում անցկացված քննության արձանագրությունը.

5) պատասխանատու կազմակերպիչը խմբերի պատասխանների ձևաթղթերի (օգտագործված, չօգտագործված, խոտանված), խմբերի դիմորդների ցուցակների ծրարները, քննասենյակի արձանագրության, պատասխանների ձևաթղթերի կտրված մասերի ծրարները և թեստերը (օգտագործված, չօգտագործված) հաշվում և հանձնում է կենտրոնի ղեկավարին.

6) կենտրոնի ղեկավարը, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի հետ համատեղ, ներկայացված պատասխանների ձևաթղթերը, խմբերի ցուցակները պարունակող և քննասենյակներից ստացված կտրված մասերով ծրարները վերահաշվելով, ձևակերպում է քննական կենտրոնում անցկացված քննության արձանագրությունը:

68. Քննական նյութերի՝ թեստերի, պատասխանների ձևաթղթերի ծրարների, արձանագրությունների տեղափոխումը՝

1) կենտրոնի ղեկավարը յուրաքանչյուր քննասենյակի պատասխանատու կազմակերպչի ներկայությամբ ծրարները տեղավորում է համապատասխան արկղում՝ գնահատման և թեստավորման կենտրոն տեղափոխելու համար.

2) քննական կենտրոնի ղեկավարը քննական նյութերը գնահատման և թեստավորման կենտրոն է տեղափոխում քննության ավարտից անմիջապես հետո: Նույն օրվա ընթացքում գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը քննական նյութերը տեղափոխում է Հայաստանի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոն.

3) Հայաստանի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնում քննական կենտրոնի ղեկավարի և քննական կենտրոնում գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի մասնակցությամբ ընդունվում են քննական նյութերը: Պատասխանների ձևաթղթերը հաշվվում և սկանավորվում են: Պատասխանների ձևաթղթերի կտրված մասերի հաշվումից հետո կազմվում է բոլոր նյութերի հանձնման և ընդունման արձանագրություն:

69. Պատասխանների ձևաթղթերի ստուգումը՝

1) պատասխանների ձևաթղթերն ստուգվում են Հայաստանի Հանրապետության գնահատման և թեստավորման կենտրոնում՝ համակարգչային սարքավորումների ու ծրագրերի միջոցով.

2) թեստերը չեն ստուգվում: Սկանավորվում, ճանաչվում և գնահատվում են միայն պատասխանների ձևաթղթերը.

3) պատասխանների ձևաթղթերի կտրված մասերի վերծանումից հետո ստուգման տվյալները գրանցվում են որպես դիմորդի քննական արդյունք:

70. Միասնական քննությունների արդյունքների հրապարակումը՝

1) քննական աշխատանքների արդյունքները հրապարակվում են քննությունից հետո 5-րդ օրը.

2) գնահատման և թեստավորման կենտրոնում քննությունների արդյունքների ցուցակներն առանձնացվում են ըստ քննական կենտրոնների, առարկաների և քննություններին մասնակցած դպրոցների.

3) քննական աշխատանքների արդյունքների ցուցակները վավերացվում են գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի կողմից.

4) կենտրոնի ղեկավարն աշխատանքների ստուգման ավարտից հետո գնահատման և թեստավորման կենտրոնից ստանում է քննություն հանձնած դիմորդների քննական արդյունքների ցուցակը.

5) կենտրոնի ղեկավարը քննական արդյունքների ցուցակը փակցնում է քննական կենտրոնի տեղակայման հաստատության մուտքի մոտ: Միասնական քննությանը մասնակցած դիմորդների քննության ավարտական մասի քննական արդյունքների ցուցակը գնահատման և թեստավորման կենտրոնը կրթության բաժինների միջոցով ուղարկում է դպրոցներ.

6) միասնական քննության ավարտական մասի արդյունքը դպրոցը գրանցում է դիմորդի՝ միջնակարգ ընդհանուր կրթության ատեստատում.

7) դիմորդը քննության արդյունքի մասին տեղեկություն կարող է ստանալ իր դպրոցից, քննական կենտրոնից.

8) միասնական քննություններ հանձնած դիմորդներին տրվում են վկայագրեր, որոնցում նշվում են դիմորդի կողմից միասնական քննություններից ստացված միավորները.

9) վկայագրի ձևը հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը.

10) դիմորդները մինչև հունիսի 30-ը վկայագրերն ստանում են դպրոցներից՝ ներկայացնելով քննության դիմում-հայտերի լրացման համար հիմք ընդունված անձնագիրը կամ ծննդյան վկայականը:

71. Միասնական քննության արդյունքների և անցկացման կարգի խախտման բողոքարկումը՝

1) բողոքարկումը կարող է լինել՝

ա. քննության անցկացման կարգի խախտման մասին.

բ. քննության արդյունքի հետ անհամաձայնության մասին.

2) բողոք-դիմումը շարադրվում է ձևաթղթի վրա.

3) միասնական քննության անցկացման կարգի խախտման վերաբերյալ դիմորդը կարող է բողոքել քննության օրը (քննության պահին կամ ավարտից հետո՝ մինչև քննասենյակից դուրս գալը)՝ բողոքը ներկայացնելով պատասխանատու կազմակերպչին կամ գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչին.

4) բողոք-դիմումի պատճենի կամ երկրորդ օրինակի վրա պատասխանատու կազմակերպիչը կատարում է «Ընդունված է՝ բողոքարկման հանձնաժողով ներկայացնելու համար» նշումը և վերադարձնում դիմորդին.

5) պատասխանատու կազմակերպիչը գրում է բացատրություն՝ այն կցելով բողոք-դիմումին և հանձնում կենտրոնի ղեկավարին.

6) կենտրոնի ղեկավարը, ստանալով պատասխանատու կազմակերպչի բացատրությունն ու դիմորդի բողոք-դիմումը, առանձին ծրարով, համապատասխան արձանագրության հետ միասին ներկայացնում է գնահատման և թեստավորման կենտրոն.

7) բողոքարկման հանձնաժողովը, քննարկելով բողոք-դիմումը, այն համարում է հիմնավոր, եթե գտնում է, որ բողոք-դիմումում շարադրված հանգամանքները դիմորդի կողմից առաջադրանքների ոչ լիարժեք կատարման պատճառ են դարձել.

8) բողոքարկման հանձնաժողովը բողոք-դիմումի վերաբերյալ որոշում է ընդունում բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում բողոքարկման հանձնաժողովի նախագահն ունի վճռորոշ ձայն.

9) բողոքը հիմնավոր համարելու դեպքում բողոքարկման հանձնաժողովը որոշում է ընդունում դիմորդին թույլատրել մասնակցելու լրացուցիչ քննությանը.

10) բողոքարկման հանձնաժողովը չի քննարկում բողոք-դիմում՝

ա. դիմորդի կողմից իր մեղքով քննական հրահանգների չկատարման հետևանքով առաջացած թերությունների վերաբերյալ,

բ. դիմորդի կողմից պատասխանների ձևաթղթի լրացման ընթացքում թույլ տրված վրիպումների կամ սխալների վերաբերյալ.

11) միասնական քննության արդյունքի հետ անհամաձայնության դեպքում դիմորդն արդյունքների հրապարակման հաջորդ օրը ժամը 9:00-18:00-ը կարող է բողոքարկել այն.

12) արդյունքի հետ անհամաձայնության վերաբերյալ բողոք-դիմումը դիմորդն անձամբ հանձնում է այն կենտրոնի ղեկավարին, որտեղ հանձնել է քննությունը: Կենտրոնի ղեկավարն ստացված բողոք-դիմումները գնահատման և թեստավորման կենտրոն է տեղափոխում բողոքարկման ժամկետի ավարտից հետո 24 ժամվա ընթացքում.

13) բողոք-դիմումի քննարկման արդյունքում կարող է որոշում ընդունվել քննության արդյունքի պահպանման, բարձրացման կամ

ԿԱՐԳ

իջեցման մասին: Բողոքարկման հանձնաժողովի ընդունած որոշման հիման վրա հիմնական փուլի միասնական քննությունների բողոքարկման արդյունքները հրապարակվում են տվյալ փուլի վերջին քննության ավարտից հետո եռօրյա ժամկետում, իսկ միասնական քննությունների լրացուցիչ փուլի բողոքարկման արդյունքները հրապարակվում են տվյալ փուլի վերջին քննության ավարտից հետո եռօրյա ժամկետում:

IX. ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԲԱՆԱՎՈՐ ԵՎ ԳՐԱՎՈՐ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԱՆՑԿԱՑՈՒՄԸ, ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

72. Կենտրոնացված ընդունելության քննությունները կազմակերպվում են տվյալ տարվա հունիսի 28-ից հուլիսի 8-ն ընկած ժամանակահատվածում:

73. Կենտրոնացված ընդունելության քննությունները կազմակերպվում են քննական կենտրոններում, որոնց ցանկը հաստատում է գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը՝ մինչև տվյալ տարվա հունիսի 15-ը:

74. Կենտրոնացված ընդունելության քննությունների անցկացման համար գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենի հրամանով մինչև տվյալ տարվա հունիսի 20-ը ստեղծվում են առարկայական քննական հանձնաժողովներ (այսուհետ՝ քննական հանձնաժողով):

75. Քննական հանձնաժողովը կազմված է նախագահից, տեղակալից և անդամներից:

76. Քննական հանձնաժողովը կազմում է քննական տոմսերը, տարբերակները և քննական այլ նյութեր, ստորագրում և ծրարում է քննական տոմսերի բնագրերը, որոնք կնքվում են գնահատման և թեստավորման կենտրոնի կնիքով և մինչև տվյալ քննության օրը պահվում գնահատման և թեստավորման կենտրոնում:

77. Քննության ավարտից հետո քննական հանձնաժողովի նախագահը կազմում ու գնահատման և թեստավորման կենտրոն է ներկայացնում հաշվետվություն, որի պատճենը հանձնում է տվյալ բուհի ընդունող հանձնաժողովին:

78. Կենտրոնացված քննության արձանագրությունը պարտադիր կերպով ստորագրում է քննական հանձնաժողովի նախագահը:

79. Կենտրոնացված բանավոր քննության կազմակերպումը, անցկացումը և գնահատականի բողոքարկումը՝

1) կենտրոնացված բանավոր քննության քննական հանձնաժողովի նախագահը քննության օրը բուհի ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարից ստանում է դիմորդների ցուցակը.

2) դիմորդները քննասենյակ են մտնում դիմորդների ցուցակում իրենց անունների հերթականությանը համապատասխան.

3) ցուցակի, անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, իսկ անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության կողմից տրվող՝ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ) և քննական թերթիկի համապատասխանությունն ստուգում են առարկայական հանձնաժողովի նախագահը, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը կամ պատասխանատու քարտուղարը.

4) դիմորդների ցուցակում դիմորդն իր անվան դիմաց ստորագրում է, որից հետո քննասենյակում ընտրում քննատոմսը.

5) քննատոմսն ընտրելուց հետո քննասենյակում դիմորդն ստանում է բանավոր հարցման թերթ, որում կարող է գրի առնել իր պատասխանը, լրացուցիչ հարցերը և դրանց պատասխանները.

6) դիմորդի պատասխանը գնահատվում է 20 միավորանոց համակարգով: Անբավարար և 8, 18-20 գնահատականները համաձայնեցվում են առարկայական քննական հանձնաժողովի նախագահի հետ.

7) դիմորդների վիճահարույց աշխատանքները գնահատվում են քննական հանձնաժողովի կողմից՝ քվեարկության միջոցով: Կենտրոնացված բանավոր քննության արձանագրությունը, բացի քննական հանձնաժողովի նախագահից, ստորագրում են ևս երկու քննող դասախոսներ.

8) կենտրոնացված բանավոր քննության գնահատականը դիմորդին հայտնվում է քննության օրը՝ քննասենյակում: Բանավոր քննության գնահատականը դիմորդն իրավունք ունի բողոքարկելու քննական հանձնաժողովի նախագահին՝ առանց քննասենյակից դուրս գալու.

9) կենտրոնացված բանավոր քննությունները տեսաձայնագրվում են:

80. Կենտրոնացված գրավոր քննության անցկացումը՝

1) հանձնաժողովի նախագահը կենտրոնացված գրավոր քննության օրն ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարից ստանում է դիմորդների ցուցակը.

2) դիմորդների մուտքը կենտրոնացված գրավոր քննության քննական կենտրոն կատարվում է համաձայն դիմորդների ցուցակի.

3) ցուցակի, անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, իսկ անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանության կողմից տրվող՝ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ) և քննական թերթիկի համապատասխանությունն ստուգում են առարկայական հանձնաժողովի նախագահը, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը կամ պատասխանատու քարտուղարը.

4) քննական հանձնաժողովի նախագահն ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարի հետ ճշտում է քննությանը ներկայացած դիմորդների թիվը, որից հետո քննական տետրերը բաժանում են դիմորդներին, բացատրում տիտղոսաթերթի լրացման ձևը.

5) քննական տետրերը բաղկացած են տիտղոսաթերթից և 10 թերթից, ծածկագրված են, կնքված գնահատման և թեստավորման կենտրոնի ու ընդունող հանձնաժողովի կողմից.

6) ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարն ստուգում է տիտղոսաթերթի ճիշտ լրացումը, կազմում արձանագրություն տիտղոսաթերթերի քանակի մասին: Ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարը գնահատման և թեստավորման կենտրոնին է հանձնում կնքված տիտղոսաթերթերը, դրանք ապածածկագրվում են, և գրանցված տվյալները մուտքագրվում են բազայում.

7) ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարն արձանագրությունը գնահատման և թեստավորման կենտրոնին է հանձնում քննությունից հետո.

8) քննական տարբերակները դրվում են սեղանին, դահլիճից հրավիրվում են դիմորդներ՝ ընտրելու համապատասխան քանակի քննական տարբերակներ: Գործընթացին կարող են ներկա լինել դիմորդների ծնողները.

9) կենտրոնացված գրավոր քննության ամբողջ ընթացքում քննասենյակում պետք է ներկա լինեն քննական հանձնաժողովի նախագահը, տեղակալը, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը:

81. Կենտրոնացված գրավոր քննության քննական աշխատանքների ստուգումը՝

1) քննության ավարտից հետո դիմորդները քննական տետրերը հանձնում են քննական հանձնաժողովի նախագահին: Պատասխանատու քարտուղարը գրավոր աշխատանքի չլրացված տեղերում նշում է կատարում լատիներեն «զեթ» տառի տեսքով.

2) քննական հանձնաժողովի նախագահը դրանք հանձնում է հանձնաժողովի անդամներին՝ ստուգման.

3) ստուգումն իրականացվում է քննության օրը՝ քննասենյակում.

4) ստուգման ընթացքը վերահսկվում է գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի կողմից.

5) կենտրոնացված գրավոր քննության քննական աշխատանքների ստուգումից հետո քննական հանձնաժողովի նախագահի հսկողությամբ ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղարն ստուգում է տետրերում միավորների գումարումը և վերջնական գնահատականի գրանցումը, ապածածկագրում տետրերը, կազմում քննական աշխատանքների ծածկագրերի արձանագրությունը երեք օրինակից, որոնց վրա ստորագրում են առարկայական հանձնաժողովի նախագահը, նրա տեղակալները, գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցիչը, պատասխանատու քարտուղարը: Արձանագրություններից երկուսը պատասխանատու քարտուղարը քննական տետրերի հետ միասին պահում է իր մոտ, իսկ բնօրինակը հանձնում քննական հանձնաժողովի նախագահին: Նշված գործընթացը վերահսկվում է գնահատման և թեստավորման կենտրոնի ներկայացուցչի կողմից.

6) անբավարար, 8, 18-20 գնահատականները համաձայնեցվում են առարկայական քննական հանձնաժողովի նախագահի հետ.

7) առարկայական քննական հանձնաժողովի նախագահի կողմից ստորագրված քննական տետրերի ծածկագրերի արձանագրությունը մուտքագրման համար ներկայացվում է գնահատման և թեստավորման կենտրոն: Համեմատելով տիտղոսաթերթերը և ծածկագրերի արձանագրությունները՝ գնահատման և թեստավորման կենտրոնը կազմում է գնահատականների ցուցակ.

8) գնահատականների ցուցակները կենտրոնացված գրավոր քննության քննական կենտրոնում փակցվում են քննությունը հանձնելու հաջորդ օրը, ժամը 16:00-ին:

82. Կենտրոնացված գրավոր քննության գնահատականի բողոքարկումը՝

1) դիմորդը կարող է բողոքարկել իր գնահատականը կենտրոնացված գրավոր քննությունների գնահատականների ցուցակները փակցնելու հաջորդ օրը՝ ժամը 9:00-18:00-ի ընթացքում.

2) բողոքարկման համար դիմորդը դիմում է ներկայացնում պատասխանատու քարտուղարին: Դիմումների ընդունման ժամկետի ավարտից հետո պատասխանատու քարտուղարը դիմումները հանձնում է քննական հանձնաժողովի նախագահին.

3) դիմումում նշվում է կենտրոնացված գրավոր քննական աշխատանքի այն հատվածը, որի գնահատման հետ դիմորդը համաձայն չէ.

4) բողոքարկման ժամանակ հանձնաժողովը վերանայում է միայն դիմորդի կողմից նշված հատվածը (հատվածները): Մյուս հատվածների վերանայումը և վերագնահատումը չի թույլատրվում.

5) քննական հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի՝ բողոքարկված կենտրոնացված գրավոր քննության քննական աշխատանքն ստուգած անդամը քննարկում են կենտրոնացված գրավոր քննական աշխատանքի բողոքարկված հատվածը՝ դիմորդի և նրա կողմից հրավիրված մասնագետի հետ.

6) բողոքարկված կենտրոնացված գրավոր քննության քննական աշխատանքի գնահատականը կարող է բարձրացվել, իջեցվել կամ չփոփոխվել.

7) բողոքարկման արդյունքները լրացվում են գնահատման էջի համապատասխան մասում, պարտադիր գրախոսվում քննական հանձնաժողովի նախագահի կողմից և հանձնվում պատասխանատու քարտուղարին.

8) կենտրոնացված գրավոր քննական աշխատանքի գնահատականի փոփոխման դեպքում գնահատման և թեստավորման կենտրոն է ներկայացվում քննական հանձնաժողովի նախագահի արձանագրությունը.

9) կենտրոնացված գրավոր քննության քննական աշխատանքի բողոքարկման արդյունքը ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, հրապարակվում է կենտրոնացված գրավոր քննության քննական կենտրոնում.

10) կենտրոնացված գրավոր քննության բողոքարկված քննական աշխատանքի վերագնահատման հետ անհամաձայնության դեպքում բողոքարկման արդյունքի հրապարակման հաջորդ օրը ժամը 9:00-18:00-ի ընթացքում դիմորդը կարող է դիմել գնահատման և թեստավորման կենտրոնի բողոքարկման հանձնաժողովին.

11) գնահատման և թեստավորման կենտրոնի բողոքարկման հանձնաժողովի կողմից հրավիրված փորձագետը, որը պետք է ունենա տվյալ առարկայից առնվազն հինգ տարվա մանկավարժական գործունեության փորձ և համապատասխան մասնագիտության գիտական աստիճան, ներկայացնում է եզրակացություն, որի հիման վրա բողոքարկման հանձնաժողովը մեկօրյա ժամկետում ընդունում է վերջնական որոշում գնահատականը բարձրացնելու, իջեցնելու կամ նույնը թողնելու մասին.

12) սույն կետի 11-րդ ենթակետով նախատեսված բողոքարկման ընթացքում վերանայվում է կենտրոնացված գրավոր աշխատանքի միայն բողոքարկված մասը.

13) գնահատականի փոփոխման դեպքում բողոքարկման հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ համապատասխան արձանագրություն է ներկայացվում գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենին:

X. ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԱՆՑԿԱՑՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

83. Ներբուհական ընդունելության քննություններն անցկացվում են տվյալ տարվա հունիսի 28-ից հուլիսի 8-ն ընկած ժամանակահատվածում:

84. Ներբուհական ընդունելության քննությունները կազմակերպվում են սույն կարգի 73-78-րդ կետերի պահանջներին համապատասխան՝

1) ներբուհական ընդունելության քննություններն անցկացվում են տվյալ մասնագիտության մասնագիտական առարկաների առանձնահատկություններին և ծրագրերի պահանջներին համապատասխան.

2) ներբուհական ընդունելության քննությունների արդյունքների բողոքարկումն անցկացվում է սույն կարգի 79-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջներին համապատասխան՝ բացառությամբ «Գծանկար», «Գծագրություն», «Գունանկար», «Նկարչություն» առարկաների քննությունների արդյունքների բողոքարկման, որոնց քննությունների արդյունքների բողոքարկումն անցկացվում է սույն կարգի 82-րդ կետի պահանջներին համապատասխան:

XI. ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱՑՎԱԾ ՔՆՆՈՒԹՅԱՆԸ ՉՆԵՐԿԱՅԱՑԱԾ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

85. Հարգելի պատճառով ներբուհական քննությանը չներկայացած դիմորդներին թույլատրվում է հանձնել լրացուցիչ քննություն՝ քննացուցակով այդ առարկայից սահմանված քննության օրերին. քննացուցակով տվյալ առարկայից քննություն չլինելու դեպքում դիմորդը դուրս է մնում:

XII. ԲՈՒՀԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

86. Ընդունելության քննությունները գնահատվում են 20 միավորային համակարգով: Միասնական քննություններում դրական են համարվում 7.5 և բարձր միավորները: Բոլոր միավորները գնահատվում են հարյուրերորդական մասի պահպանմամբ՝ տվյալ առարկայի գնահատման չափանիշներով սահմանված քայլերին համապատասխան:

Կենտրոնացված և ներբուհական քննություններում դրական են համարվում ութ և բարձր միավորները:

☞ 14

ԿԱՐԳ

13

87. «Հայոց լեզու և հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Ընդհանուր պատմություն», «Մաթեմատիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աշխարհագրություն», «Օտար լեզու» (անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն) առարկաների միասնական քննությունների գնահատականները համարժեքացվում են 20 միավորային համակարգին:

88. Դիմորդն անվճար և վճարովի ուսուցմամբ հայտագրած համապատասխան մասնագիտությունների մրցույթներին մասնակցում է մրցութային քննություններից ստացած դրական միավորների գումարով՝ հարյուրերորդական մասի պահպանմամբ: Այն մասնագիտությունների համար, որոնք ընդունելության քննությունների ցանկում նշված են որպես ոչ մրցութային, դիմորդը մրցույթին մասնակցում է այդ առարկաներից դրական միավոր ստանալու դեպքում:

89. Մասնագիտությունների մրցույթն անցկացվում է մասնագիտությունների համապատասխան ուղղվածությամբ՝ ըստ մասնագիտությունների, մասնագիտությունների խմբերի, ֆակուլտետների (դեպարտամենտների):

90. Անվճար և վճարովի ուսուցման ընդունելության մրցույթներն անցկացվում են մեկ փուլով:

91. Մասնագիտությունների մրցույթն անցկացվում է անվճար ուսուցման առաջին հայտագրված մասնագիտության գերակայությամբ:

92. Առաջին հայտագրված մասնագիտության մրցույթով չանցած դիմորդների համար անվճար և վճարովի ուսուցման մրցույթն անցկացվում է ընդունելության դիմում-հայտում հայտագրված մասնագիտությունների հերթականությանը համապատասխան:

93. Ընդունելության դիմում-հայտում հայտագրված որևէ մասնագիտությամբ (ըստ հայտագրման հերթականության) ընդունված դիմորդը չի մասնակցում հայտագրված հաջորդ մասնագիտությունների մրցույթին:

94. Վճարովի ուսուցման համակարգում թափուր տեղեր առաջանալու դեպքում այդ տեղերի մրցույթին մասնակցելու համար դիմորդները մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

95. Հայաստանի պետական ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի առկա ուսուցման մասնագիտությունների նպատակային ընդունելության անվճար ուսուցման տեղերում՝ հաստատված նախարարի հրամանով և համաձայնեցված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հետ, կարող են ընդունվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների՝ գյուղատնտեսական մասնագետների, խիստ կարիք ունեցող գյուղական վայրերի՝ տվյալ բնակավայրում գրանցում ունեցող դիմորդները՝ դպրոցների մանկավարժական խորհուրդների և շրջանների վարչակազմերի կրթության բաժինների կողմից տրված երաշխավորագրով:

Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված նպատակային անվճար տեղերում պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերում կարող են ընդունվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գրանցում ունեցող և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ուսումնական հաստատություններն ավարտած դիմորդները:

Հայաստանի պետական ագրարային համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի ընդունելության նպատակային անվճար տեղերի և Հայաստանի Հանրապետության պետական բուհերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատկացված նպատակային անվճար տեղերի դիմորդների և նրանց ծնողների հետ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը՝ ի դեմս Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճյուղային նախարարների, կնքում է պայմանագիր՝ բուհն ավարտելուց հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մասնագիտությամբ աշխատելու վերաբերյալ:

96. Մրցութային հավասար միավորների դեպքում, ըստ հերթականության, առավելություն է տրվում՝

1) բոլոր տարիների մեդալակիր դիմորդներին.

2) արվեստի գծով միջազգային և հանրապետական մրցույթների հաղթողներին.

3) դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդներին.

4) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բուհերի առկա ուսուցմամբ տվյալ ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկում բուհի կողմից նշված առաջին մրցութային քննությունից առավել բարձր միավոր ստացած դիմորդներին.

5) դպրոցի պետական ավարտական քննություններից առավելագույն միջին գնահատական ունեցող դիմորդներին.

6) տվյալ մասնագիտությանը համապատասխան միջին մասնագիտական կրթություն ստացած դիմորդներին:

97. Բուհերի այն մասնագիտությունների գծով, որոնց քննությունների անվանացանկում առարկաները նշված են մեկ (նաև անվճար ուսուցման մրցույթին մասնակցելու համար) և երկու աստղանիշով, վճարովի ուսուցման թափուր տեղերի մրցույթին մասնակցելու համար՝

1) մրցութային և ոչ մրցութային քննությունների գնահատականներ են համարվում միջնակարգ կրթության ատեստատի, միջին մասնագիտական (հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթության հիմքով) կամ նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների ավարտական փաստաթղթերի տվյալ առարկաների պետական ավարտական քննական գնահատականները, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը,

2) 10 միավորային համակարգով տարեկան գնահատականները համապատասխանաբար հավասարեցվում են հետևյալ միավորներին՝

ա. «4»-ը, «5»-ը և «6»-ը համարժեք են 13 միավորի,

բ. «7»-ը և «8»-ը համարժեք են 17 միավորի,

գ. «9»-ը և «10»-ը համարժեք են 20 միավորի,

3) միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի 5 միավորային համակարգով գնահատված տարեկան, քննական գնահատականները համապատասխանաբար հավասարեցվում են հետևյալ միավորներին՝

ա. «3»-ը համարժեք է 13 միավորի,

բ. «4»-ը համարժեք է 17 միավորի,

գ. «5»-ը համարժեք է 20 միավորի.

98. Քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին մրցույթից դուրս ընդունվում են Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների երեխաները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները՝ համաձայն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության նախարարությունների, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ոստիկանությունների և Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունների կողմից տրված տեղեկանքների:

99. Վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում անվճար ուսուցման համակարգ են ընդունվում՝

1) 1-ին ու 2-րդ խմբերի, ինչպես նաև հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձինք՝ համաձայն բժշկասոցիալական փորձաքննության կենտրոնի կողմից տրված եզրակացության.

2) առանց ծնողական խնամքի մնացած մինչև 23 տարեկան երեխաները:

100. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները զորացրվելուց հետո՝ երեք տարվա ընթացքում, քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում՝

1) անվճար ուսուցմամբ ընդունվում են ընդհանուր մրցույթից դուրս (առանձին մրցույթով)՝ ըստ մասնագիտությունների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված տեղերի.

2) անվճար ուսուցման մրցույթից դուրս մնալու դեպքում դիմորդները վճարովի ուսուցման մրցույթին մասնակցում են ընդհանուր հիմունքներով.

3) եթե հայտագրել են միայն վճարովի ուսուցման տեղեր հատկացված մասնագիտություններ՝ բուհ են ընդունվում մրցույթից դուրս:

101. Առանց ընդունելության քննության Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հատկացված պահուստային տեղերի հաշվին բուհ են ընդունվում միջնակարգ դպրոցի հանրակրթական առարկաների գծով միջազգային օլիմպիադաների հաղթողները, տարբեր մարզաձևերի գծով աշխարհի և Եվրոպայի առաջնությունների մրցանակակիրները, ովքեր ընդունելության դիմում-հայտում հայտագրել են համապատասխան մասնագիտությունները:

102. Անվճար և վճարովի ուսուցման մրցույթների արդյունքներն ամփոփվում են մինչև տվյալ տարվա հուլիսի 15-ը:

103. Ներբուհական քննությունների արդյունքներով մրցույթն անցկացվում է համապատասխան բուհում: Մրցույթի արդյունքը հաստատվում է հանրապետական ընդունող հանձնաժողովում, որից հետո բուհի ռեկտորը հրամանագրում է ուսանողներին:

104. Հանրապետական ընդունող հանձնաժողովի կողմից ընդունելության քննությունների մրցույթի արդյունքները հաստատելուց հետո, բուհերում թափուր տեղերի առկայության դեպքում, ընդունելության քննություններից դրական միավոր(ներ) ստացած, սակայն մրցույթից դուրս մնացած դիմորդները հուլիսի 15-20-ն ընկած ժամանակահատվածում կարող են մասնակցել թափուր տեղերի մրցույթին՝ թափուր տեղեր ունեցող բուհում լրացնելով նոր դիմում-հայտ:

105. Բուհի պատասխանատու քարտուղարը հուլիսի 21-ին գնահատման և թեստավորման կենտրոն է ներկայացնում թափուր տեղերի մրցույթի դիմում-հայտերը:

106. Հանրապետական ընդունող հանձնաժողովը բուհերում թափուր տեղերի մրցույթի արդյունքները հաստատում է հուլիսի 25-ին:

XIII. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

107.Ընդունելության քննությունների հանրապետական ընդունող հանձնաժողովը կազմված է 12 անդամից: Հանրապետական ընդունող հանձնաժողովի նախագահը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարն է: Հանրապետական ընդունող հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահի աշխատակազմի ներկայացուցիչը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ներկայացուցիչը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչը, գնահատման և թեստավորման կենտրոնի տնօրենը, բուհերի ռեկտորները և պատասխանատու քարտուղարը: Հանրապետական ընդունող հանձնաժողովի կազմը հաստատում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության և գիտության նախարարը:

108. Հանրապետական ընդունող հանձնաժողովի որոշմամբ՝

1) հաստատվում են անվճար և վճարովի ուսուցման համակարգի մրցույթների արդյունքները.

2) հաստատվում են սույն կարգի 98-101-րդ կետերին համապատասխան արտոնություններից օգտվող դիմորդների ընդունելության արդյունքները.

3) վերաբաշխվում են մրցույթի արդյունքներով անվճար, վճարովի ուսուցման համակարգում թափուր մնացած տեղերը, ինչպես նաև անվճար, վճարովի համակարգի պահուստային տեղերը:

Շև

ՏԵՂԵԿԱՆՔ

Լուսանկարի հակառակ կողմում գրել շրջանավարտի անուն, ազգանունը

Տրվում է _____ին առ այն,
(անուն, հայրանուն, ազգանուն)
որ նա սովորում է
_____
(մարզ, տարածաշրջան, քաղաք (համայնք, գյուղ)
_____դպրոցի 12-րդ դասարանում:

Կ.Տ Անձնական համար՝ _____
(գրվում է ճշգրտման, փոփոխման և հաստատման ցուցակի յուրաքանչյուր շրջանավարտի անձնական համարը)

Դպրոցի տնօրեն՝ _____ _____ ____ _____2012թ.
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների, ուսուցիչների և 9-րդ դասարաններում սովորողների

Տեղեկացնում ենք, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների կողմից կրթական ծրագրերի յուրացման, ամփոփիչ ստուգման կամ ատեստավորման անցկացման, սովորողների փոխադրման և ավարտման կարգում, 2011-2012 ուսումնական տարվա սովորողի գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման ժամանակացույցում և աշխատակարգում 9-րդ դասարանի «Բնագիտություն» քննական առարկայի «Հայաստանի աշխարհագրություն» առարկան փոխարինվել է «Աշխարհագրություն» առարկայով:

ԼՂՀ կրթության եւ գիտության նախարարություն

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ

ԴԱՐՁՅԱԼ՝ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Հնչեց դասերի վերջն ազդարարող զանգը: Պատրաստվում էի դուրս գալ դասարանից: Դուռը բացվեց, և շեմին տեսա ծնողներից մեկին (փոքր գյուղերում ուսուցիչները բոլոր ծնողներին էլ մոտիկից գիտեն): Նա անվարան ներս մտավ և ձեռքի գրքույկները դրեց սեղանին. «Չի կարելի՞, որ մայրենիի դասագրքերի հայոց լեզվին՝ քերականությանը, վերաբերող թեմաներն ուսուցանեք այս գրքերով: Այստեղ և՛ կանոններն են հստակ գրված, և՛ գործնական վարժություններ՝ ուղղագրության, բառակազմության, բառապաշարի հարստացման վերաբերյալ շատ կան»:

Խոսքը 2-4-րդ դասարանների համար նախատեսված «Պատկերազարդ քերականություն» գրքի մասին էր: Ես, բնականաբար, ասացի, որ դպրոցներում առաջնորդվում են կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված ծրագրերով և երաշխավորված դասագրքերով: Իսկ ինչ վերաբերում է այս գրքույկներին, մեր ձեռքի տակ կան դրանք, և առիթ եղած դեպքում օգտագործում ենք: Զրույցից պարզվեց, որ խոսակիցս բավականին ծանոթ է տարրական դասարանների «Մայրենի» և «Մաթեմատիկա» դասագրքերին, ինչպես նաև այդ դասարանների համար նախատեսված թեստերին, թեմատիկ գրավոր աշխատանքների ժողովածուներին, աշխատանքային տետրերին:

- Լեզվական նյութերը մայրենիի դասագրքերում,- շարունակեց նա, փորձելով դասագրքերի իսկական քննարկում անցկացնել,- հստակ վերնագրեր չունեն, լեզվական նյութը ներկայացված է վարժությունների տեսքով, հերթական առաջադրանքի համարի տակ, որը, ինչ խոսք, աշակերտը կարող է շրջանցել կամ բավարարվել ուսուցչի ասածից, բացատրածից ինչ-որ բան հիշելով: Վերնագիրն ինքնին մի բան հուշող, ուշադրությունը իր վրա գրավող է: Մինչդեռ լեզվական նյութն ընթերցանության նյութի «ստվերում» է մնում, իսկ այդ բացն իրեն զգացնել է տալիս բարձր դասարաններում: Պատկերացնո՞ւմ եք, կրտսեր երեխաս կարդում է Յուրի Սահակյանի «Մութի և լույսի ծնունդը» (3-րդ դասարան) բանաստեղծությունը, իսկ մյուս երեխաս, որ երկու տարի առաջ է սովորել այդ դասարանում, իսկույն ուղղում է նրան. «Ինչ ես ասում, դա «Երգ՝ գրված դյուրահավատների համար» բանաստեղծությունն է: Պարզվում է, որ երկուսն էլ ճիշտ են, այդ ոտանավորը գրքերում զետեղված էր երկու վերանգրերով էլ: «Հայոց հրաշքը՝ Մեսրոպ Մաշտոց» ոտանավորի համար իսկական վեճ էր: Ավագ երեխաս պնդում էր, որ դրա հեղինակը Պ. Սևակն է (նկատի ուներ 2008թ. հրատարակությունը, 3-րդ դասարան), կրտսեր երեխաս իսկույն բերեց իր 2011թ. հրատարակության դասագիրքը, որտեղ այդ բանաստեղծության հեղինակը Հովի. Շիրազն է: Եվ շատ հավանական է, որ որոշ դպրոցներում գրքերի պակասության-- հետևանքով թեման անցնում են համեմատաբար հին դասագրքերով:

Տարրական դասարանների դասագրքերում գրողների, արվեստագետների, գիտնականների, ազգային հերոսների նկարներ շատ կան, բայց, չգիտես ինչու, հայ հինգ մարշալների մասին ոչ մի տող չկա, էլ չեմ ասում նրանց նկարների մասին:

Ընդհանուր առմամբ, Հայրենական պատերազմի մասին ոչ մի ստեղծագործություն չկա դասագրքերում, Հայրենական պատերազմի հերոսների մասին՝ նույնպես: Բայց չէ՞ որ համարյա բոլոր գյուղերում էլ կան Հայրենական պատերազմում զոհվածների հիշատակին կառուցված հուշարձաններ: Ինչ եք կարծում, նրանց մասին իմացությունը հայրենասիրական դաստիարակության խթան չի՞ հանդիսանա: Արցախյան գոյապայքարի մասին գրվել են (և կգրվեն) շատ ստեղծագործություններ, այդ գոյապայքարը հայրենիքին տվել է անձնազոհ շատ նվիրյալներ, բայց այդ մասին էլ դասագրքերը լռում են: Միայն 2-րդ դասարանի դասագրքում երկու տողով նշված է, որ 20 տարի առաջ ազատագրվել է Արցախը: Բանն այն է, որ և՛ ծրագրերը, և՛ նրանց հետ կապված դասագրքերը մնում են ծանրաբեռնված, մինչդեռ 12-ամյա կրթական համակարգին անցնելը նախատեսում էր հակառակը: Բերեմ միայն մի օրինակ իններորդ դասարանի գրականության դասագրքից: «Պետրոս Դուրյան» թեման ուսումնասիրելու համար գրքում նախատեսված է չորս բանաստեղծություն և բոլոր չորսն էլ հանձնարարված է սովորել անգիր: Դուրյանի ոտանավորներից անգիր իմանալը շատ լավ է, բայց չեմ կարծում, թե 48 տունը կարելի է հեշտությամբ անգիր սովորել (չորս ոտանավորը միասին) Դուրյանին հատկացված ժամաքանակի շրջանակներում: Նման օրինակներ շատ կարելի է բերել, ժամաքանակը կրճատվել է ըստ ուսումնական պլանի, և ուսուցանվող նյութը «խտացրել» են հատկացվող թեմաների շրջանակներում՝ արդյունքում ծավալուն նյութ, թվերի, տերմինների կուտակում առանձին թեմաների մեջ:

Մի բան ինձ շարունակում է մտահոգել. դասագրքերում Ղարաբաղի գրողների ստեղծագործություններից գրեթե ոչինչ չկա, մենք էլ ունենք շնորհալի շատ գրողներ, որոնց ստեղծագործությունները կարող են դաստիարակչական դեր ունենալ:

Ես, որ մինչ այդ լսողի դերում էի, ակնարկեցի՝ դասագրքերը, ուսումնական ձեռնարկները, այն, ինչ առնչվում է ուսումնադաստիարակչական պրոցեսին հանրակրթական դպրոցներում, մրցույթով է, և հրապարակի վրա են միայն մրցույթում շահածները:

- Իսկ հեռուստահաղորդումների մասին ի՞նչ կասեիք, նրանք է՞լ են մրցույթով,- իսկույն խոսքս ընդհատեց զրուցակիցս, մեր անաղարտ լեզվի ինչպիսի՜ աղավաղումներ: Չգիտեմ լեզվի պետական տեսչությունը չի՞ վերահսկում: Ի՞նչ «վ»-երի տարափ են խցկել բառերի մեջ (հատկապես կինոներում), գլուխ չես հանում: Ցավալին այն է, որ երեխաները խուսափում են լավ հաղորդումները դիտելուց («Հայ ասպետ», «Օտար, ամայի ճամփեքի վրա», «Աշխարհի հայերը» և այլն): Բայց ահա, որտեղ իբր հումոր են ներկայացնում, որտեղ կանանց դերերում տղամարդիկ են հանդես գալիս՝ զգգզված մազափնջերը գլխներին, հազար ու մի տեղից կոտրատվելով, ձայնին տարբեր երանգներ տալով, այդ դրանք երեխաների ուշադրության կենտրոնում են: Ճիշտ էր մանկավարժներից մեկը (անունը մոռացել եմ), թե «երեխան վատ բան է սովորում ոչ միայն նրա համար, որ վատն են սովորեցնում»: Հայկական հեռուստատեսությունը երեխաների դաստիարակությանը վերաբերող հաղորդումներ քիչ է ցուցադրում:

Կներեք, որ ձեր ժամանակն օգտագործեցի, գուցե նաև սխալ բաներ էլ եմ ասել, դրա համար էլ ներող եղեք:

Նրա գնալուց հետո երկար ժամանակ մտորումների մեջ էի: Ինձ զարմացրեց դպրոցական ծրագրերին, դասագրքերին, օժանդակ ձեռնարկներին նրա քաջատեղյակ լինելը: Մի կողմից էլ՝ հոգու խորքում բավարարված էի, որ վերջապես ծնողներին (անկախ զբաղմունքից, կրթությունից) նույնպես հետաքրքիր են դպրոցական համակարգում կատարվող բարեփոխումները: Նրանց մտահոգում են կրթության ասպարեզի հիմնահարցերը. վերջապես դպրոցն այն դարբնոցն է, որտեղ կռում են իրենց որդիների ճակատագիրը: Ուրիշ էլ ով, եթե ոչ ծնողը, այնքան մտահոգված կլինի որդիների ճակատագրով:

Ես, որ շատ հարցերում կիսում էի զրուցակցիս մտահոգությունները, որոշեցի այս անկեղծ զրույցը գրի առնել և ուղարկել «Լուսարար» թերթին՝ ենթադրելով, որ սա ոչ միայն փորձ է ամրապնդելու ծնող-հասարակություն-դպրոց կապը, այլև փորձ՝ հասարակական վերահսկողություն սահմանելու այնպիսի մի կառույցի վրա, ինչպիսին դպրոցն է, որը, կարծում եմ, նաև անհրաժեշտ է:

Լևոն ԱՌԱՔԵԼՅԱՆ
գ. Եմիջան

Խոսք հիշատակի

ՆԵԼՍՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ



Մանկավարժական եռանդի ու վերելքի, մասնագիտական փորձառության ճանապարհին, կյանքի 62-րդ տարում իր երկրային ուղին ավարտեց Ստեփանակերտի հ. 12 հիմնական դպրոցի ուսուցիչ Նելսոն Հակոբյանը:

Նա այն նվիրյալ ուսուցիչներից էր, ում մանկավարժական արժեքավոր գործունեությունն արդեն իսկ արժանացել է գնահատանքի ինչպես իր գործընկերների, այնպես էլ ծնողական ու աշակերտական հասարակության կողմից:

Նելսոն Հակոբյանը ծնվել է 1950 թվականի փետրվարի 1-ին, Բաքու քաղաքում: 1967-ին ավարտելով միջնակարգ դպրոցը՝ աշխատանքի է անցել գործարանում՝ որպես փականագործ-հավաքող և վարորդ: 1969-71թթ. ծառայել է սովետական բանակում, 1972-76թթ. սովորել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մաթեմատիկայի բաժնում, ստացել մաթեմատիկայի ուսուցչի դիպլոմ: 1976-83թթ. աշխատել է Շամախու շրջանի Քերքենջի միջնակարգ դպրոցում՝ որպես տնօրեն: 1984-88թթ. աշխատել է Բաքվի Շահումյանի շրջանի հ. 103 դպրոցում՝ որպես տնօրենի տեղակալ: 1988թ. տեղափոխվելով Ստեփանակերտ՝ աշխատանքի է անցել հ. 5 դպրոցում: 1992-94թթ. ծառայել է Արցախի ինքնապաշտպանական բանակում: 1995-98թթ. աշխատել է Վրեժավանի՝ այժմ Աջափնյակի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ և ուսմասվար: 1998-2000թթ. ծառայել է ԼՂՀ պաշտպանության բանակում՝ որպես դասակի հրամանատար: 2001թ. աշխատել է հ. 6 միջնակարգ դպրոցում: 2001թ. սեպտեմբերի 1-ից մինչև 2011թ. նոյեմբերի 1-ը աշխատել է Ստեփանակերտի հ. 12 հիմնական դպրոցում:

Ստեփանակերտի հ. 12 հիմնական դպրոցը մեծ կորուստ կրեց, քանի որ նա այն եզակի ուսուցիչներից էր, ով կանգնած էր դպրոցի ստեղծման ակունքներում և իր նշանակալի ներդրումն է ունեցել դպրոցի կայացման, մասնավորապես մաթեմատիկա առարկայի դրվածքի բարելավման գործում: Ազնիվ ու համեստ այդ մարդու մեջ խտացված էին մարդկային բնավորության լավագույն հատկանիշները, և պատահական չէ, որ նա իր գործունեությամբ ու մարդկային կերպարով ոչ միայն ուսուցանում, այլև դաստիարակում էր: Նրա մանկավարժական արհեստավարժությունը զուգակցված էր անսահման համեստությանը: Նրա՝ ուսուցչի կերպարի մասին կարելի է երկար գրել, քանզի դրա իրավունքը նա լիարժեքորեն վաստակել էր: Հ. 12 հիմնական դպրոցի ուսուցչական կոլեկտիվը ցավում և իր վշտակցությունն է հայտնում Հակոբյանների ընտանիքին ու հարազատներին:

Նելսոն Հակոբյանի հիշատակը վառ կմնա բոլորիս սրտերում:

Հ. 12 հիմնական դպրոցի ուսուցչական կոլեկտիվ

Ռազմամարզական

ՌԱԶՄԱԿԱՆԱՑՎԱԾ ԿՐՈՍԱՎԱԶՔԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒՄ

Մայիսի 4-5-ը Ստեփանակերտի հ. 2 դպրոցին կից մարզադաշտում կայացան նախազորակոչային տարիքի դպրոցականների միջև Մայիսյան հաղթանակներին նվիրված ռազմականացված կրոսավազքի հանրապետական մրցումներ:

Մրցումների ծրագրով՝ 1700մ կրոսավազքի տարածության վրա նախատեսված էր 6 փուլ:

1. Ջգումներ պտտաձողի վրա (6 մաքուր ձգումներ):
2. Ինքնաձիգի ոչ լրիվ քանդում, հավաքում և պահեստատուփի լիցքավորում ու լիցքաթափում:
3. Հրաձգություն օդամղիչ հրացանից 10մ հեռավորության վրա նշանակետին:
4. 500 գրամանոց նռնակի նետում 15մ հեռավորության վրա նշանակետին:
5. Լաբիրինթոսի հաղթահարում ԳՊ-5 հակագազով:
6. 20կգ-ոց փամփուշտների արկղի տեղափոխում;

Մրցումներին մասնակցում էին Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ 6 շրջանների հավաքական թիմերը (չէր մասնակցում Շահումյանի շրջանը):

Յուրաքանչյուր թիմում ընդգրկված էր 5 տղա:

Ծավալված համառ և անզիջում մրցակցության արդյունքներով մրցավարական հանձնախումբը որոշեց հաղթողներին:

Թիմային հաշվարկով առաջին տեղը գրավեց Մարտունու շրջանի թիմը, երկրորդ տեղը՝ Ստեփանակերտ քաղաքի, երրորդ տեղը՝ Ասկերանի շրջանի թիմը:

Անհատական հաշվարկով առաջին տեղը զբաղեցրեց Միհր Հարությունյանը (Մարտունու շրջան), երկրորդ տեղը՝ Ռազմիկ Բրուտյանը, երրորդ տեղը՝ Նվեր Մովսիսյանը (երկուսն էլ՝ Ստեփանակերտ քաղաքից):

Թիմային և անհատական հաշվարկներով հաղթողները ԼՂՀ կրթության և գիտության նախարարության կողմից արժանացան համապատասխան կարգի դիպլոմների, պատվոգրերի, թանկարժեք նվերների և դրամական պարգևների:

Պարգևատրումները կատարեց և հաղթողներին շնորհավորեց ԼՂՀ ԿԳՆ ՌՀ, ՖԴ և ՀԿՀԿ բաժնի վարիչ Վ. Գրիգորյանը:

Դրամական պարգևների արժանացան նաև հաղթող թիմերի մարզիչները:

Թիմային և անհատական հաշվարկներով հաղթողները թանկարժեք նվերներով պարգևատրվեցին նաև ԼՂՀ պաշտպանության նախարարության կողմից:

Պարգևատրումը կատարեց ԼՂՀ ՊՆ ՌՀԴ և ՀԿՀԿ բաժնի սպա կապիտան Դավիթ Համբարձումյանը:

Սուրադ ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ

ՄՐՑՈՒՅԹԻ ՀՐԱՎԵՐ

ԺԱՄԱՆԱԿ ՄԻ՛ ԿՈՐՑՐՈՒ, ԿԱՐԴԱ՛

Ի. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ 2-ՐԴ ՄՐՑՈՒՅԹ

«Երևան-2012 գրքի համաշխարհային մայրաքաղաք» միջոցառման շրջանակներում «Էդիթ Պրինտ» հրատարակչությունը, նրա կողմից հրատարակվող «Ուրախ գնացք» մանկական, «Իմ մոլորակը» պատանեկան ամսագրերը և Երևանի քաղաքապետարանը 2012թ. ապրիլի 2-ին հայտարարում են «Ժամանակ մի՛ կորցրու, կարդա՛» նշանաբանով Ընթերցանության հանրապետական 2-րդ մրցույթը, որը կտևի մեկ տարի՝ մինչև 2013թ. մարտ ամիսը: Այն նվիրվում է հայերեն առաջին տպագիր գրքի՝ «Ուրբաթագրքի» 500-ամյակին:

Մրցույթի նպատակն է՝ դպրոցահասակ երեխաների շրջանում բարձրացնել ընթերցանության և ընթերցասիրության մակարդակը: Ընթերցանության համանման մրցույթը շոշափելի արդյունքների կարող է հանգեցնել միայն շարունակական լինելու դեպքում:

Ընթերցանության հանրապետական 2-րդ մրցույթն անցկացվելու է տարիքային երկու խմբերի՝ 3-5-րդ և 6-8-րդ դասարանների աշակերտների միջև: Մասնակիցը մրցույթի տարիքային պահանջներին պետք է համապատասխանի 2012-2013 ուսումնական տարվա հաշվարկով: Այսպես, առաջին տարիքային խմբում կմրցեն այն աշակերտները, ովքեր 2012-2013 ուսումնական տարում կլինեն 3-րդ, 4-րդ, 5-րդ դասարանների աշակերտներ, իսկ երկրորդ տարիքային խմբում՝ 6-րդ, 7-րդ, 8-րդ դասարանցիները:

Ընթերցանության հանրապետական 2-րդ մրցույթն ունենալու է երկու ուղղվածություն՝ պոեզիա և արձակ: Այն կընթանա 4 փուլով՝ հայտավորում, ընտրական, կիսաեզրափակիչ և եզրափակիչ:

II. ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ 2-ՐԴ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Հայտավորում

«Էդիթ Պրինտ» հրատարակչությունն առաջարկում է Ընթերցանության հանրապետական 2-րդ մրցույթին մասնակցելու փաթեթ-հայտեր յուրաքանչյուր տարիքային խմբի համար, որոնք կազմված են՝ 1. երեք գրքույկից, 2. մրցույթի անցկացման պայմանների ընթացակարգից, 3. մասնակցության համար անհրաժեշտ գրականության ցանկից, 4. մասնակցության հայտից: Վերջինս աշակերտները պետք է փոստի միջոցով ուղարկեն կամ ներկայացնեն Ընթերցանության հանրապետական 2-րդ մրցույթի հանձնախմբին՝ Երևան, Տ. Մեծի 65 հասցեով կամ՝ Ստեփանակերտի Ազատամարտիկների 35 բ, «Էդիթ Պրինտ» գրատանը, 2012թ. ապրիլի 2-ից մինչև հոկտեմբերի 1-ը:

Առաջին տարիքային խմբի (3-5-րդ դաս.) փաթեթ-հայտն ընդգրկում է Հովի. Թումանյանի լավագույն երեք հեքիաթները, իսկ երկրորդ տարիքային խմբինը (6-8-րդ դաս.)՝ Հովի. Թումանյանի լավագույն երեք բալլադները: Փաթեթ-հայտի արժեքը 400 դրամ է: Մասնակիցներն այն կարող են ձեռք բերել Հայաստանի բոլոր գրախանութներից կամ Ստեփանակերտի Էդիթ Պրինտ գրատնից:

Ընթերցանության հանրապետական 2-րդ մրցույթի հայտերն աշակերտները կարող են ձեռք բերել նաև. առաջին տարիքային խմբի համար (3-5-րդ դաս.)՝ «Ուրախ գնացք» ամսագրի ապրիլ, մայիս և հունիս ամիսների համարներից, իսկ երկրորդ տարիքային խմբի համար (6-8-րդ դաս.)՝ «Իմ մոլորակ» ամսագրի ապրիլ, մայիս և հունիս ամիսների համարներից: Հայտավորումն աշակերտին տալիս է միայն մրցույթին մասնակցելու իրավունք, և նա դեռ չի համարվում ընտրական փուլի մասնակից, քանզի ընտրական փուլին մասնակցելու համար աշակերտը պետք է կատարի այդ փուլի պայմանները:

2. Ընտրական փուլ.

Ընթերցանության հանրապետական 2-րդ մրցույթին մասնակցելու համար «Էդիթ Պրինտ» հրատարակչության կողմից տարիքային յուրաքանչյուր խմբի համար առաջարկվում է երեքական գրափունջ: Մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող աշակերտը պետք է 2012թ. ամառվա ընթացքում կարդա որևէ գրափնջի բոլոր գրքերը: Այնուհետև ընտրած գրափնջի յուրաքանչյուր գրքի մասին ինքնուրույն հակիրճ գրի իր տպավորությունն ու կարծիքը (ոչ բովանդակության վերարտադրությունը) և այն ուղարկի հանձնախմբին մինչև 2012թ. հոկտեմբերի 5-ը: Մասնակիցներն իրենց գրած տպավորությունները կարող են ուղարկել էլեկտրոնային փոստով՝ edit-print@mail.ru կամ Ստեփանակերտի «Էդիթ Պրինտ» գրատան հասցեով, անձամբ ներկայացնել կամ փոստով ուղարկել Երևան, Տիգրան Մեծի 65 հասցեով: Ուղարկած տպավորություններն առանց մասնակցության հայտի թերթիկի համարվում են անվավեր: Դրանք կարող են ուղարկվել մրցույթի հանձնախմբին ինչպես միասին, այնպես էլ առանձին, վերը նշված ժամկետներում:

Յուրաքանչյուր մարզից, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից հանձնախումբը կընտրի 50-ական աշխատանք ամեն տարիքային խմբի համար, Երևանից՝ 100-ական, որոնք էլ կանցնեն կիսաեզրափակիչ փուլ: Մասնակիցների ընտրությունը կատարվելու է մրցույթի հանձնաժողովի կողմից. առավելությունը տրվելու է ինքնուրույն գրված աշխատանքներին: Կարևորվելու են ընթերցածը հասկանալու և ընթերցածի մասին սեփական տպավորությունն ու վերաբերմունքն արտահայտելու, ինքնուրույն կարծիք հայտնելու կարողությունները:

2012թ. հոկտեմբերի 15-ին հանձնախումբը կհայտարարի ընտրական փուլի արդյունքները, կհրապարակի կիսաեզրափակիչ փուլ անցած մասնակիցների ցուցակներն ըստ մարզերի, www.editprint.am կայքի «Նոր հրապարակումներ» էջում:

3. Կիսաեզրափակիչ

Կիսաեզրափակիչ փուլը կանցկացվի մարզերում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, հոկտեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 25-ը: Յուրաքանչյուր մարզից և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից կընտրվի 3-ական մասնակից ամեն տարիքային խմբից, Երևանից՝ 6-ական:

Գրափնջերին կից՝ յուրաքանչյուր տարիքային խմբի համար «Էդիթ Պրինտ» հրատարակչությունն առաջարկում է անգիր սովորելու համար նախատեսված բանաստեղծությունների ցանկ, որոնցից կիսաեզրափակիչ փուլի համար անհրաժեշտ է անգիր սովորել առնվազն հինգ բանաստեղծություն:

3.1. Մրցույթի կիսաեզրափակիչ փուլի ընթացքը

Մասնակիցը պետք է՝

ա) պատմի իր ընթերցած որևէ (հանձնաժողովի ընտրությամբ) ստեղծագործության սյուժեն և ձևակերպի իր կարծիքն այդ ստեղծագործության մասին.

բ) պատասխանի մրցույթի մարզային հանձնախմբի կողմից իրեն տրված հարցերին, որոնք կվերաբերեն իր կարդացած ստեղծագործություններին կամ աշխարհաճանաչողական այն գիտելիքներին, որոնք աշակերտը կարող էր ձեռք բերել տվյալ գրափնջի ընթերցանության արդյունքում.

գ) բարձրաձայն կարդա իր ընտրած գրափնջի որևէ ստեղծագործությունից հանձնախմբի կողմից առաջարկված որևէ հատված (կես էջի չափով).

դ) առաջադրված ցանկից 5 բանաստեղծություն անգիր իմանա, արտասանի և վերլուծի դրանք (դրանցից 1-ը կամ 2-ը՝ հանձնաժողովի ընտրությամբ).

ե) կարողանա իր մտքերն արտահայտել ու ձևակերպել գեղեցիկ և գրագետ հայերենով:

Բոլոր նշված առաջադրանքները գնահատվելու են 5 միավորանոց սանդղակով: Հանձնախումբը հաշվի է առնելու նաև մասնակցի կարդացածի ծավալը առաջարկված գրափնջից դուրս:

Աշակերտների գիտելիքներն ու կարողությունները գնահատվելու են տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ (այսպես, 3-րդ դասարանցին չի համեմատվելու 5-րդ դասարանցու հետ, այլ գնահատվելու է որպես 3-րդ դասարանցի):

Մրցույթի կիսաեզրափակիչ փուլի օրերին մարզերում և մայրաքաղաքում կազմակերպվելու են «Էդիթ Պրինտ» հրատարակչության գրքերի ցուցահանդեսներ, հանդիպումներ մանկագիրների, դասագրքերի և այլ հեղինակների հետ, կլոր սեղաններ, հանդիպումներ և տարաբնույթ միջոցառումներ «Ուրախ գնացք» մանկական, «Իմ մոլորակը» պատանեկան ամսագրերի խնբագրական կազմերի և ամսագրերի ընթերցողների հետ:

4. Եզրափակիչ

Եզրափակիչ փուլն անցկացվելու է Երևանում, 2013թ. մարտ ամսվա վերջում: Այս փուլի բոլոր մասնակիցների անունները մրցույթի հանձնախումբը կհայտարարի տեղերում՝ մարզերում, Ստեփանակերտում և Երևանում, անմիջապես կիսաեզրափակիչ փուլի անցկացման օրը:

Եզրափակիչ փուլի անցկացման պայմանները կհայտարարվեն լրացուցիչ:

Եզրափակիչ փուլում յուրաքանչյուր տարիքային խմբից նախատեսվում է 7 մրցանակային տեղ՝ ըստ անվանակարգերի: Կլինեն նաև Ընթերցանության հանրապետական 2-րդ մրցույթի երկու հատուկ անվանակարգեր՝ «Ընթերցանությանը խթանող ուսուցիչ» և «Ընթերցանությանը խթանող ծնող»:

Բոլոր հաղթողները կստանան մրցանակներ և խորհրդանշական նվերներ: Մրցույթի եզրափակիչ փուլը կլուսաբանվի հեռուստատեսությամբ և լրատվության այլ միջոցներով:

III. ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՐԱՓՆՋԵՐ ԵՎ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԵՐ

1. Առաջին տարիքային խմբին (3-5-րդ դաս.) առաջարկվող գրափնջեր

(կիրառվում է ընտրական և կիսաեզրափակիչ փուլերում)

1-ին փունջ

1. Աշխարհի ժողովուրդների հեքիաթներ, Ա հատոր (կազմող՝ Հ. Գուլակյան)
2. Հայ ժողովրդական առակներ (կազմող՝ Ա. Սարգսյան)
3. Մանկական գանձարան (կազմող՝ Ս.Մուրադյան)
4. Ինքնուրույն ընթերցանության նյութեր, 4-րդ դասարան (կազմողներ՝ Ա.Գալստյան և ուրիշներ)
5. Ե.Գրիգորյան. Գնա ապրի՛ր հեքիաթում

2-րդ փունջ

1. Աշխարհի ժողովուրդների հեքիաթներ, Բ հատոր (կազմող՝ Հ.Գուլակյան)
2. Հայ ժողովրդական առակներ (կազմող՝ Ա.Սարգսյան)
3. Մանկական գանձարան (կազմող՝ Ս.Մուրադյան)
4. Ինքնուրույն ընթերցանության նյութեր, 4-րդ դասարան (կազմողներ՝ Ա.Գալստյան և ուր.)
5. Է.Միլիտոնյան. Կատուն և ուրվականը

3-րդ փունջ

1. Աշխարհի ժողովուրդների հեքիաթներ, Գ հատոր (կազմող՝ Թ. Ահարոնյան)
2. Հայ ժողովրդական առակներ (կազմող՝ Ա.Սարգսյան)
3. Մանկական գանձարան (կազմող՝ Ս.Մուրադյան)
4. Ինքնուրույն ընթերցանության նյութեր, 4-րդ դասարան (կազմողներ՝ Ա.Գալստյան և ուր.)
5. Հ.Վարդումյան. Հեքիաթ չարաճճի տղաների համար

1.1 Առաջին տարիքային խմբին (3-5-րդ դաս.) անգիր հանձնարարվող բանաստեղծությունների ցանկ

(կիրառվում է կիսաեզրափակիչ փուլում, անգիր սովորել հինգ բանաստեղծություն, Մանկական գանձարան (կազմող՝ Ս.Մուրադյան) գրքից

1. Ռ.Պատկանյան, Օրորոցի երգը
2. Գ.Դոդոխյան, Ծիծեռնակ
3. Ղ.Աղայան, Մանուշակ
4. Հ. Հովհաննիսյան, Վահագնի ծնունդը
5. Ալ.Ծատուրյան, Կարդա՛
6. Հ.Թումանյան, Ամենից լավ տունը
7. Հ.Թումանյան, Հին օրհնություն
8. Հ.Թումանյան, Արագիլ
9. Ա.Խնկոյան, Գայլն ու գառը
10. Ա.Իսահակյան, Արջն ու օձը
11. Ս.Կապուտիկյան, Հարստություն
12. Պ.Սևակ, Հայոց լեռները

Ուշադրություն. «Ուրախ գնացք» ամսագրի 2012թ. մարտ ամսից սկսած մինչև 2013թ. մարտ ամսվա բոլոր համարներն ընդգրկված են լինելու մրցույթի եզրափակիչ փուլում:

Հ.Գ. Բոլոր գրքերը հրատարակված են «Էդիթ Պրինտ» հրատարակչության կողմից:

2. Երկրորդ տարիքային խմբին (6-8-րդ դաս.) առաջարկվող գրափնջեր

(կիրառվում է ընտրական և կիսաեզրափակիչ փուլերում)

1-ին փունջ

1. Գրականության քրեստոմատիա, 7-րդ դաս. (կազմողներ՝ Ն.Վիրաբյան, Լ.Մարգարյան)
2. Ոսկե կռունկներ (չափածո մշակումը՝ Ե.Պետրոսյանի)
3. Անցողիկ հասակ (կազմող՝ Հ.Վարդումյան)
4. Ես իմ անուշ Հայաստանի (կազմողներ՝ Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան)
5. Ակսել Բակունց (կազմող՝ Ն.Վիրաբյան, «Իմ գրադարանը» շարքից)

2-րդ փունջ

1. Գրականության քրեստոմատիա, 8-րդ դաս. (կազմողներ՝ Ն.Վիրաբյան, Լ.Մարգարյան)
2.Անցողիկ հասակ (կազմող՝ Հ.Վարդումյան)
3. Մատենիկ (կազմող՝ Դ.Գյուրջինյան)
4. Ղ.Աղայան (կազմող՝ Ն.Վիրաբյան, «Իմ գրադարանը» շարքից)
5. Ն.Թումանյան. Հուշեր և զրույցներ

3-րդ փունջ

1.Պարսկական ժողովրդական հեքիաթներ (կազմող և թարգմանիչ՝ Գ.Ասատրյան)
2. Ոսկե կռունկներ (չափածո մշակումը՝ Ե.Պետրոսյանի)
3. Անցողիկ հասակ (կազմող՝ Հ.Վարդումյան)
4. Ես իմ անուշ Հայաստանի (կազմողներ՝ Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան)
5. Ն.Թումանյան. Թումանյանի մանկությունը և պատանեկությունը

2.1 Երկրորդ տարիքային խմբին (6-8-րդ դաս.) անգիր հանձնարարվող բանաստեղծությունների ցանկ

(կիրառվում է կիսաեզրափակիչ փուլում, անգիր սովորել հինգ բանաստեղծություն)

1. Հ.Թումանյան. Լուսավորչի կանթեղը
2. Ե.Չարենց. Ես իմ անուշ Հայաստանի
3. Վ.Տերյան. Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին
4. Վ.Տերյան. Շշուկ և շրշյուն
5. Ավ. Իսահակյան. Ռավեննայում
6. Ավ. Իսահակյան. Է՜յ, ջան-հայրենիք, ինչքա՜ն սիրուն ես
7. Ն.Զարյան. Հայերեն
8. Ն.Զարյան. Հայոց լեզու
9. Պ.Սևակ. Քիչ ենք, բայց հայ ենք
10. Պ.Սևակ. Մոր ձեռքերը
11. Հ.Շիրազ. Հայ պանդուխտի երգը
12. Հ. Շիրազ. Կտակ
13. Ա.Դարբնի. Ձեռքերը
14. Գ.Էմին. Փոքր ենք, բայց հայ ենք
15. Հ.Սահյան. Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ
16. Գ.Սարյան. Տաղ Հայաստանին
17. Ս.Կապուտիկյան. Քելե՛, լաո՛
18. Ս.Կապուտիկյան. Կանգնեցե՛ք, մարդի՛կ
19. Մ.Մարգարյան. Կամո՛ւրջ կառուցիր
20. Մ.Մարգարան. Խոսք մոր համար

Ուշադրություն. «Ծաղկաքաղ հայկական հուշարձանների» (կազմողներ՝ Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան) գիրքը և «Իմ մոլորակը» ամսագրի 2012թ. մարտ ամսից սկսած մինչև 2013թ. մարտ ամսվա բոլոր համարներն ընդգրկված են լինելու մրցույթի եզրափակիչ փուլում:

Հ.Գ. Բոլոր գրքերը հրատարակված են «Էդիթ Պրինտ» հրատարակչության կողմից:

ԼՈՒՍԱՐԱՐ
Խմբագիր՝ ՍՎԵՏԼԱՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ

✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru

Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:

Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3215: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 25.04.2012թ.:

«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: